ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ

2019-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

* Առաջին նախագիծ-ը մշակվել է 2022 թվականի մարտի 10-ին, շրջանառության մեջ է դրվել մարտի 15-ից

* Վերջնական տարբերակը մշակվել է մայիսի 10-ին, հրապարակվել է մայիսի 17-ին

ԵՐԵՎԱՆ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 8

ա. Մշտադիտարկման և գնահատման նպատակները 8

բ. Գնահատման աղյուսակ 8

գ. Գնահատման մեթոդներ 12

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 15

ՈԼՈՐՏ 1: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐ 16

Նպատակ 1. Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրում 16

Նպատակ 2. Արդարադատության բնագավառի էլեկտրոնային համակարգերի և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում և արդիականացում 24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2019-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ 33

ՈԼՈՐՏ 2: ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ 34

Նպատակ 2. Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրական ժողովրդավարության հաստատում և իրավունքի գերակայության ամրապնդում 34

ՈԼՈՐՏ 3: ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ 37

Նպատակ 3. Սահմանադրական բարեփոխումների անցկացում 37

ՈԼՈՐՏ 4: ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ 40

Նպատակ 4. Ընտրական օրենսդրության բարեփոխում 40

ՈԼՈՐՏ 5: ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ 42

Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում 42

Նպատակներ 5, 6 և 7. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում և կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ 54

Նպատակ 6. Դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում 64

Նպատակ 6. Դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում 64

Նպատակ 8. Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում 66

Նպատակ 9. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների միասնական հարթակի ապահովում 73

ՈԼՈՐՏ 6: ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ 77

Նպատակ 10. Իրավապահ համակարգի բարեփոխում 77

ՈԼՈՐՏ 7. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ 90

Նպատակ 11. Քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխումներ 90

Նպատակ 12. Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում 98

Նպատակ 13. Վարչական արդարադատություն և վարչական վարույթ 105

ՈԼՈՐՏ 8. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ 116

Նպատակ 14. Սնանկության համակարգ 116

Նպատակ 15. Վեճերի լուծման այլընտրանքային եղանակներ 127

Նպատակ 16. Նոտարական համակարգ 132

Նպատակ 17. Փաստաբանական համակարգ 135

Նպատակ 18. Հարկադիր կատարման համակարգ 143

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՎ ԸՆՏՐԱՆՔՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 145

Ծանոթագրություն 146

Կատարված գործողությունների իրավական վերլուծությունների ամփոփում 146

Նպատակ 4. Ընտրական օրենսդրության բարեփոխում 146

Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում 147

Նպատակներ 5, 6 և 7. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում և կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ 148

Նպատակ 11. Քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխումներ 149

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 151

1. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ 151

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 159

3. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 160

4. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ 162

5. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ 163

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՏՄ	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման Գործակալություն
ԱՏՀ	Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույց
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԶՀԾ	Զորահավաքային ծառայություն
ԶՈՒ	Զինված ուժեր
ԶՈՒ ԲՀԱ	Զինված ուժերի բարոյահոգեբանական ապահովման վարչություն
ԿԱՊԿՈՒ	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱՆ	ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ԱՍՀՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՀՀ ԲՏԱՆ	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ՀՀ ԿԳՄՍ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՀ ՊՆ	ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՏԿԵՆ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀԴ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՀՄԿ	Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն
ՀՇՖ	Հրամանատարա-շտաբային ֆակուլտետ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպանություն
ՄՔԶՄԿ	Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԴ	Սահմանադրական դատարան
ՍՈԲԿ	Սպաների որակավորման բարձրացման կենտրոն
ՎԶԵԲ	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՄԱԿ	Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՔԿՀ	Քրեակատարողական հիմնարկ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՖԽՔ	Ֆոկուս խմբային քննարկում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն անկախ, արդյունավետ, կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ, հանրության վստահությունը վայելող դատական համակարգ ունենալու նպատակով տարբեր ժամանակահատվածներում ընդունվել են բազմապիսի իրավական փաստաթղթեր, վավերացվել են միջազգային պայմանագրեր, ներդրվել են նորագույն լուծումներով գործիքներ: Չնայած վերոգրյալին, ՀՀ դատական համակարգում դեռևս առկա են մի շարք մարտահրավերներ և խնդիրներ, որոնք պահանջում են համակարգային մոտեցում և համանման լուծումներ:

Այս ոլորտում վերջին համապարփակ իրավական փաստաթղթերից է՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն), որն ընդունվել է ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշմամբ:

Ռազմավարության հիման վրա կազմվել են երեք գործողությունների ծրագրեր՝ կարճաժամկետ՝ 2019 թվականի 2-րդ կիսամյակից մինչև 2020 թվական (այսուհետ՝ Հավելված 2 ծրագիր), երկարաժամկետ՝ 2021 թվականից մինչև 2023 թվականը (այսուհետ՝ Հավելված 3 ծրագիր) և էլեկտրոնային արդարադատության հարթակի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման վերաբերյալ առանձին գործողությունների ծրագիր՝ 2019 թվականի 2-րդ կիսամյակից մինչև 2023 թվականը (այսուհետ՝ Հավելված 4 ծրագիր): Գործողությունների ծրագրերով սահմանվում են ռազմավարական նպատակներից և ուղղություններից բխող որոշակի գործողություններ՝ դրանց կատարման համար պատասխանատու և համակատարող մարմինների, ելակետային իրավիճակի, կատարման վերջնաժամկետի, ստուգման միջոցի, ակնկալվող արդյունքների և յուրաքանչյուր գործողության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ակնկալվող աղբյուրի նախատեսմամբ:

Աղյուսակ 1. Էլեկտրոնային արդարադատության հարթակի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման վերաբերյալ առանձին գործողությունների ծրագրով նախատեսված գործողությունների թիվ (Հավելված 4 ծրագիր)

Նպատակներ	2019 2-րդ կիսամյ.	2020 1-ին կիսամյ.	2020 2-րդ կիսամյ.	2021 1-ին կիսամյ.	2021 2-րդ կիսամյ.
Նպատակ 1. Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրում	1	1	3	1	4
Նպատակ 2. Արդարադատության բնագավառի էլեկտրոնային համակարգերի և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում և արդիականացում:	0	0	0	0	7

Աղյուսակ 2. Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող 2019-2020 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված գործողությունների թիվ (Հավելված 2 ծրագիր)

Նպատակներ	2019 2-րդ կիսամյ.	2020 1-ին կիսամյ.	2020 2-րդ կիսամյ.

Նպատակ 2. Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրական ժողովրդավարության հաստատում և իրավունքի գերակայության ամրապնդում	1	0	1
Նպատակ 3. Սահմանադրական բարեփոխումների անցկացում	1	0	1
Նպատակ 4. Ընտրական օրենսդրության բարեփոխում	0	0	1
Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում	2	0	2
Նպատակներ 5, 6 և 7. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում և կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ	5	0	6
Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում	5	0	6
Նպատակ 10. Իրավապահ համակարգի բարեփոխում	0	3	3
Նպատակ 10. Իրավապահ համակարգի բարեփոխում	0	2	2
Նպատակ 11. Քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխում	5	5	0
Նպատակ 12. Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում	0	3	3
Նպատակ 13. Վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացում	0	10	10
Նպատակ 14. Սնանկության համակարգի արդյունավետության բարձրացում	0	6	6
Նպատակ 15. Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում	0	1	1
Նպատակ 17. Փաստաբանական համակարգի արդյունավետության բարձրացում	2	5	4

Աղյուսակ 3. ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող 2021-2023 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված գործողությունների թիվ (Հավելված 3 ծրագիր)

Նպատակներ	2021 1-ին կիսամյ.	2021 2-րդ կիսամյ.
Նպատակ 3. Սահմանադրական բարեփոխումների անցկացում	0	1
Նպատակ 6. Դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում	0	1
Նպատակ 8. Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում	0	3
Նպատակ 9. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների միասնական հարթակի ապահովում	0	3
Նպատակ 10. Իրավապահ համակարգի բարեփոխում	0	2
Նպատակ 12. Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում	0	3
Նպատակ 13. Վարչական արդարադատության արդյունավետության բարձրացում	1	0
Նպատակ 14. Սնանկության համակարգի արդյունավետության բարձրացում	3	3
Նպատակ 15. Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում	2	0
Նպատակ 16. Նոտարական համակարգի արդյունավետության բարձրացում	3	0

Նպատակ 18. Հարկադիր կատարման համակարգի բարեփոխումներ	2	0

Հարկ է նշել, որ ռազմավարական փաստաթղթերի ոչ պատշաճ իրականացման խնդիրը մշտապես եղել է արդիական: Մասամբ դա պայմանավորված է իրականացման գործընթացի պատշաճ մոնիթորինգի և գնահատման ու հաշվետվողականության գործիքակազմի բացակայությամբ՝ ինչպես իրականացնողների, այնպես էլ քաղաքացիական հասարակության կողմից: Այս տեսանկյունից առանցքային նշանակություն ունի այս ռազմավարական գործողությունների իրականացման մշտադիտարկումը, ինչպես նաև մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ հանրության, քաղաքացիների և այլ շահագրգիռ կողմերի իրազեկումը:

Այս գիտահետազոտական աշխատանքը նպատակ ունի գնահատել Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրերի իրականացումը, դրանց առաջընթացը և հայտնաբերել այս ծրագրերի իրականացման հետ կապված բացերն ու ժամկետների խախտումները: Գնահատման արդյունքների հիման վրա կազմվել է այս մոնիթորինգային զեկույցը և համապատասխան պետական մարմիններին ներկայացվել է մեթոդական և բովանդակային **առաջարկություններ**՝ նպատակ ունենալով բարելավել ռազմավարությունը և, ընդհանուր առմամբ, դատաիրավական բարեփոխումների ոլորտը երկրում: Ռազմավարության գործողությունների ծրագրերի մշտադիտարկումն ու գնահատումը ընդգրկում է 2019-2021 թվականներին նախատեսված գործողությունները:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. Մշտադիտարկման և գնահատման նպատակները

Ռազմավարության գործողությունների ծրագրերի մշտադիտարկման և գնահատման նպատակներն են՝

1) գնահատել Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող 2019-2021 թվականների գործողությունների ծրագրերի իրականացման ընթացիկ իրավիճակը և առաջընթացը,
2) պարզել այն գործողությունները, որոնք կատարվել են ժամկետների խախտմամբ, կատարվել են ամբողջությամբ, մասամբ կամ չեն կատարվել և դրանց պատճառները, իրականացման բացերը և թերությունները,
3) գնահատել Գործողությունների ծրագրերի իրականացման գործընթացը՝ գործողությունների իրականացման որակական տեսանկյունից:

բ. Գնահատման աղյուսակ

Ընդհանուր առմամբ, 2019-2023 թվականների ՀՀ դատական և իրավական համակարգի բարեփոխումների ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրերում ներառված գործողությունները վերաբերում են հետևյալ խումբ գործողություններին՝

- Իրավական փաստաթղթերի, ակտերի, օրենքների մշակում և ընդունում:
- Նոր կառույցների ստեղծման իրավական հիմքերի ապահովում և ստեղծում:
- Վերապատրաստման ծրագրերի մշակում և դրանց իրականացում:
- Մեթոդական և ուսումնական նյութերի մշակում:
- Հանրային իրազեկման և շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագրերի մշակում և իրականացնում:
- Տարբեր կառույցների/մարմինների նյութատեխնիկական բազայի և շենքային պայմանների ապահովում:
- Էլեկտրոնային համակարգերի ներդրում կամ առկա համակարգերի կատարելագործում:
- Ռազմավարությամբ և դրանից բխող գործողությունների ծրագրերով նախատեսված այլ միջոցառումների մշտադիտարկում:

2019-2023 թվականների ՀՀ դատական և իրավական համակարգի բարեփոխումների ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրերում ներառված գործողությունների, ինչպես նաև դրանց սպասվող արդյունքների ուսումնասիրությունը թույլ է տալիս այս գործողությունների իրականացումը գնահատող ցուցանիշները բաժանել երեք խմբի, ինչպես ներկայացված է ստորև՝

- **Գործընթացային ցուցանիշներ**
  Գործընթացային ցուցանիշներն ընդհանուր առմամբ անդրադառնում են այն գործողություններին, որոնք ուղղված են որոշակի ընթացակարգերի ավարտին, օրինակ՝ իրավական փաստաթղթի նախագիծը Վարչապետի աշխատակազմ կամ Ազգային ժողով ներկայացնելը, վերլուծության կամ ուսումնասիրության իրականացումը և հաշվետվության հրապարակումը, շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի ընդունումը և այլն: Ընթացակարգային ցուցանիշները վերաբերում են ելքային մակարդակի արդյունքներին և գնահատվում են արդյունքի վրա հիմնված

մշտադիտարկման (անգլերեն՝ results-based monitoring) հիման վրա: Ակնկալվում է, որ 2019, 2020 և 2021 թվականների ընթացքում իրականացվելիք գործողությունները գնահատման իրականացման ժամանակահատվածում, որն է՝ 2022 թվականի հունվար-մարտ ամիսները, արդեն իսկ պետք է ավարտված լինեն: Համապատասխանաբար, մոնիթորինգը արձանագրում է, թե արդյոք գործողությունների ծրագրերով նախատեսված ընթացակարգերը ժամանակին իրականացվել են, և արդյոք կան սահմանված ժամկետից նշանակալի անհամապատասխանություններ և շեղումներ: Անհրաժեշտ է նշել, որ գործողությունների երեք ծրագրերի (Հավելված 2, Հավելված 3 և Հավելված 4) գերակշիռ մասը հենց գործընթացային ցուցանիշներ ենթադրող գործողություններ են:

Գործընթացային ցուցանիշների դեպքում մշտադիտարկումն արձանագրում է՝ թե որ փուլում է գտնվում գործընթացը: Օրինակ՝ Ազգային ժողովին իրավական փաստաթղթի նախագծի ներկայացման համար զատորոշվել են հետևյալ փուլերը 1) առհասարակ չի նախաձեռնվել, 2) պատրաստ է օրենքի նախագիծը, 3) հրապարկվել է e-draft.am-ում և տեղի է ունենում հանրային քննարկում, 4) ներկայացվել է Ազգային ժողով, 5) ընդունվել է Ազգային ժողովի կողմից, 6) մերժվել է Ազգային ժողովի կողմից, 7) ընդգրկված է օրակարգում:

Ընթացակարգային ցուցանիշների կատարողականի գնահատման համար առանձնացվել են գնահատման հետևյալ կատեգորիաները՝

- **Կատարվել է ժամկետում –** գործողությունը գնահատվում է «կատարվել է ժամկետում», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են դարձել վկայող փաստեր (անգլերեն՝ evidence) առ այն, որ գործողությունը կատարվել է ռազմավարության գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում կամ այդ ժամկետից առավելագույնը մեկ ամիս ժամկետի խախտմամբ:[1]
- **Կատարվել է ժամկետի որոշակի խախտմամբ -** գործողությունը գնահատվում է «կատարվել է ժամկետի որոշակի խախտմամբ», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են եղել վկայող փաստեր առ այն, որ գործողությունը կատարվել է ռազմավարության գործողությունների ծրագրով սահմանված ժամկետից առավելագույնը մեկ տարի խախտմամբ:
- **Կատարվել է ժամկետի էական խախտմամբ -** գործողությունը գնահատվում է «կատարվել է ժամկետի էական խախտմամբ» եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են եղել վկայող փաստեր առ այն, որ գործողությունը կատարվել է ռազմավարության գործողությունների ծրագրով սահմանված ժամկետից նվազագույնը մեկ տարի խախտմամբ:
- **Գործողությունը չի կատարվել -** գործողությունը գնահատվում է «չկատարված», եթե գործողության արդյունքային ցուցանիշը չի կատարվել մշտադիտարկման պահի դրությամբ (փետրվար 2022 թվական) կամ տվյալ գործողության վերաբերյալ մշտադիտարկման խմբին որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:
- **Առկա չէ տեղեկատվություն -** գործողությունը գնահատվում է «առկա չէ տեղեկատվություն», եթե գործողության վերաբերյալ մշտադիտարկման խմբին տրամադրվել է որոշակի տեղեկատվություն, սակայն այն բավարար չէ

[1] Մեկ ամիս տևողությամբ գործողությունների կատարման ուշացումը թույլատրվել է՝ հաշվի առնելով, որ Գործողությունների ծրագրի իրականացումն ընդգրկում է 2020 թվականը, որի ընթացքում պատերազմը եղել է գործողությունների իրականացման համար խոչընդոտող գործոն:

գնահատելու գործողության կատարման կարգավիճակը և/կամ ժամկետները և այդ կապակցությամբ լրացուցիչ տեղեկություններ չեն տրամադրվել:

- **Գործողությունը կասեցված է** - գործողությունը գնահատվում է «կասեցված է», եթե գործողության կատարման ընթացքում հայտնի են դարձել հանգամանքներ, որոնք որոշակի ժամանակահատվածում անհնար են դարձնում գործողության կատարումը և գործողության կասեցված լինելը ամրագրվել է իրավական որևէ փաստաթղթում կամ որոշմամբ:

Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է նշել, որ գործողությունը գնահատվում է կատարված, եթե այն հասել է գործողությունների ծրագրով նախանշված վերջնական փուլին: Օրինակ, *««Մնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ»* գործողության դեպքում այս գործողությունը համարվում է կատարված, եթե նախատեսող օրենքի նախագիծը մշակվել, շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Չի կիրառվելու «մասամբ իրականացված» կատեգորիան, օրինակ այն դեպքում, երբ օրենքի նախագիծը մշակվել է, սակայն դեռևս չի ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ: Այսպիսի դեպքերում մոնիթորինգը համապատասխանաբար կպարզի և կարձանագրի, թե որ փուլում է գտնվում նախաձեռնված գործընթացը, սակայն այն կգնահատի որպես «չիրականացված»:

Նշենք, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված մշտադիտարկման և գնահատման մեթոդոլոգիական ուղեցույցում գնահատումն արտահայտվում է ընտրված հետևյալ ցուցանիշներով.

1) կատարված է (սահմանված ժամանակահատվածում նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են),
2) կատարված է մասնակի (սահմանված ժամանակահատվածում միջոցառմամբ նախատեսված աշխատանքները կատարվել են մասնակի),
3) կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է (արտաքին ազդեցության հանգամանքների պատճառով սահմանված ժամանակահատվածում միջոցառմամբ նախատեսված աշխատանքների կատարումը սկսված և կասեցված է),
4) կատարված չէ (սահմանված ժամանակահատվածում միջոցառմամբ նախատեսված որևէ աշխատանք չի իրականացվել):

Այսպիսի գնահատման համակարգում այնուամենայնիվ, մշտադիտարկում իրականացնող խմբի գնահատմամբ, հստակ զատորոշված չեն «կատարված չէ» և «մասնակի է կատարված» գնահատումների տարբերությունները, մասնավորապես, աշխատանքների որ ծավալի իրականացման դեպքում է գործողությունը համարվում «մասամբ կատարված» և ինչպես է գնահատվում կատարված աշխատանքի ծավալը արդյունքին հասնելու տեսանկյունից: Այս դեպքում առաջանում է արդյունքին հասնելու տեսանկյունից որևէ էական քայլ չարված գործողությունները «մասամբ կատարված է» գնահատմանը արժանացնելու ռիսկի աճ, ինչը կարող է խեղաթյուրել Ռազմավարությամբ նախատեսված գործողությունների պլանների (ռազմավարական ուղղությունների) կատարողականի իրական արդյունքների դուրսբերումը:

Քանակական ցուցանիշներ

Քանակական ցուցանիշները հիմնականում վերաբերում են այն գործողություններին, որոնք նպատակ ունեն հասնել որոշակի քանակական արդյունքների, ինչպես օրինակ դատավորների, դատախազների, քննիչների և այլ կողմերի վերապատրաստումներն

են: Այս ցուցանիշները անդրադառնում են միայն **ելքային մակարդակի արդյունքներին**: Ակնկալվում է, որ 2019, 2020 և 2021 թվականների ընթացքում ավարտվելիք գործողությունների համար Գործողությունների ծրագրով նախատեսված նպատակային արդյունքները պետք է արդեն իսկ ձեռք բերված լինեն: Նշենք, որ գործողությունների ծրագրերում չկան հստակ նախանշված քանակական արդյունքներ, սակայն այս քանակական ցուցանիշները հնարավոր է դառնում որոշակիորեն գնահատել ըստ այլ պատասխանատու մարմինների կողմից սահմանված տարեկան կամ միջնաժամկետ արդյունքների: Օրինակ, դատավորների վերապատրաստումների դեպքում այն ԲԴԽ կողմից ներկայացված տարեկան հայտերի թվի հիման վրա իրականացված փաստացի վերապատրաստումների թիվն է: Ըստ այդմ, իրական արդյունքները համեմատվելու են նպատակադրված արդյունքների հետ, և իրականացվելու է թերակատարումների զատորոշում, եթե այդպիսիք առկա են: Այսպիսի գործողությունների դեպքում նույնպես կկիրառվեն ընթացակագրային ցուցանիշների կատարողականի գնահատման համար առանձնացված գնահատման կատեգորիաները:

Յուրաքանչյուր ոլորտի համար այս գնահատման ընթացքում փորձագիտական թիմի կողմից հաշվարկվել է **կատարողական ցուցանիշ**, որն իրենից ներկայացնում է «ժամկետում կատարված» և «կատարված ժամկետի որոշակի խախտմամբ» գործողությունների հարաբերակցությունը տվյալ ոլորտում հաշվետու ժամանակահատվածում նախատեսված ընդհանուր գործողությունների թվին:

〉 Որակական ցուցանիշներ

Որակական ցուցանիշներն անդրադառնում են **ազդեցության մակարդակի արդյունքներին** և Գործողությունների ծրագրերի ներքո իրականացվող գործողությունը կապում են սպասվող արդյունքների և ռազմավարական նպատակների հետ: Այս ցուցանիշները գնահատվելու են մոնիթորինգային խմբի փորձագետների կողմից և վերաբերելու են ընդունված, մշակված իրավական ակտերի համապատասխանությանը գործողությունների ծրագրերով նախանշված ոլորտներին, ռազմավարական նպատակներին, սպասվող արդյունքներին և ելքային իրավիճակում ներկայացված խնդիրների հասցեագրման պոտենցիալին: Ի լրումն, այս ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը համադրվելու է ՖԽՔ-ների և խորացված հարցազրույցների արդյունքում դուրսբերված տեղեկատվության հետ: Այս ցուցանիշների կատարողականի գնահատման համար առանձնացվել են գնահատման հետևյալ երկու չափորոշիչներ՝ **համապատասխանության չափորոշիչ և լրիվության չափորոշիչ:**

Համապատասխանության չափորոշիչը վերաբերում է նրան թե արդյոք իրավական ակտերում կամ օրենսդրական նախագծերում իրականացված փոփոխությունների ուղղությունը համապատասխանում է ռազմավարական նպատակներով սահմանված փոփոխությունների ուղղությանը: Օրինակ՝ *««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ ուղղված՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշումներ ընդունելու գործընթացի բարելավմանը՝ ներառելով այդ որոշումների ընդունման թափանցիկության, պատճառաբանվածության և ընդունման համար անհրաժեշտ ձայների արդյունավետ կառուցակարգեր (Հավելված 2, Նպատակ 5, գործողություն 2)»* գործողության դեպքում համապատասխանությունը կվերաբերի նրան, *թե արդյոք կատարված փոփոխությունները և լրացումները նպաստում են որոշումների ընդունման գործընթացի բարելավմանը, ուղղված են թափացիկության, պատճառաբանվածության ավելացմանը և ձայների*

*ընդունման արդյունավետության բարձրացման*ը: Եթե այո, ապա գործողությունը գնահատվում է **«համապատասխանում է»**: Եթե նշված ուղղություններից գոնե մեկով առկա է անհամապատասխանություն, ապա գործողությունը գնահատվում է **«չի համապատասխանում»**:

Լրիվության չափորոշիչը վերաբերում է նրան, թե արդյոք իրավական ակտերում կամ օրենսդրական նախագծերում իրականացված փոփոխությունները ներառում են ռազմավարական նպատակով սահմանված ռազմավարական ուղղությունների ամբողջական ցանկին: Օրինակ՝ *««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ ուղղված՝ ա) գնահատման հանձնաժողովի կազմավորման կարգի փոփոխությանը. բ) գնահատման պատճառաբանվածության ապահովմանը. գ) հարցազրույցի փուլում միջազգային առաջատար հոգեբանական ինստիտուտների կողմից կազմված հոգեբանական թեստի անցկացմանը. դ) քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգի ներդրմանը և Բարձրագույն դատական խորհրդի որոշման ընդունման թափանցիկության ապահովմանը. ե) դատավորների այդ թվում՝ սույն ռազմավարությամբ նախատեսված Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածության ապահովմանը»* (Հավելված 2, Նպատակ 5, գործողություն 1) գործողության դեպքում լրիվության չափորոշիչով գնահատվում է թե արդյոք իրականացված փոփոխությունները ներառում են նախանշված բոլոր ուղղությունները: Գնահատման համար կիրառվում է երկու սանդղակ **«ամբողջական է»** - եթե բոլոր ուղղությունները ներառված են, **«ամբողջական չէ»** - եթե առնվազն մեկ ուղղություն բացակայում է:

Լրիվության և համապատասխանության չափանիշների ներքո ներկայացված երկու սանդղակների համադրմամբ դուրս են բերվել հետևյալ հնարավոր իրավիճակները՝

1. **Համապատասխանում է և ամբողջական է:**
2. **Ամբողջական է, սակայն չի համապատասխանում:**
3. **Համապատասխանում է, սակայն ամբողջական չէ:**
4. **Չի համապատասխանում և ամբողջական չէ:**

Իրավական վերլուծության են ենթարկվել Ռազմավարության գործողությունների քանակական գնահատման արդյունքում 50 տոկոս և ավելի կատարողական ցուցանիշ ունեցող առանձնացված ռազմավարական նպատակները:

գ. Գնահատման մեթոդներ

Հետազոտական նպատակներին հասնելու համար կիրառվել է **արդյունքների համադրման մոտեցումը՝** համադրելով որակական և քանակական տվյալները: Տվյալները հավաքագրվել են առաջնային և երկրորդային աղբյուրներից: Հետազոտության մեթոդները ներառում են տեղեկատվության հարցումը, գրասենյակային ուսումնասիրությունը/փաստաթղթերի վերլուծությունը, ՖԽՔ-ները շահագրգիռ կողմերի հետ և առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցները (ԱՏՀ): Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2022 թվականի հունվար-փետրվար ամիսներին:

Հաշվի առնելով համաճարակային իրավիճակը երկրում՝ տեղում դեմ առ դեմ հարցազրույցներ և ՖԽՔ-ներ չեն իրականացվել, այլ քննարկումներն իրականացվել են առցանց՝ «Zoom» հարթակի կիրառությամբ: Հետազոտության առանձին մեթոդները ներկայացված են ստորև.

Գրասենյակային ուսումնասիրություն/փաստաթղթերի վերլուծություն և տեղեկատվության հարցում

Իրականացվելիք գործողությունների քանակական և ընթացակարգային ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է գրասենյակային ուսումնասիրության/փաստաթղթերի վերլուծության և տեղեկատվության հարցման միջոցով: Այս մեթոդների միջոցով տեղեկատվություն է հավաքագրվել **ելքային մակարդակի ցուցանիշների** վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, 40-ից ավել տեղեկատվության հարցում է ուղարկվել թվով 20 պետական և այլ շահագրգիռ կառույցների, որոնց վերաբերյալ արդյունքները ներկայացված են ստորև աղյուսակով:

Աղյուսակ 4. Մշտադիտարկման իրականացման նպատակով տեղեկատվության հարցումներ ստացած իրավասու մարմինները/կառույցները և մարմինները և համագործակցության բնույթը

	Տեղեկատվություն տրամադրած իրավասու մարմինները/կառույցները	Տեղեկատվություն տրամադրումը մերժած իրավասու մարմինները/կառույցները
	Վարչապետի աշխատակազմ	Բարձրագույն դատական խորհուրդ *(Մշտադիտարկման իրականացման ընթացքում ԲԴԽ-ը և Դատական դեպարտամենտը չեն ապահովել հանրային հաշվետվողականություն, չեն տրամադրել հայցվող տեղեկատվությունը և հրաժարվել են համագործակցել մշտադիտարկումն իրականացնող խմբի հետ)*[2]
	Արդարադատության նախարարություն	
	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	
	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	
	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	
	Ֆինանսների նախարարություն	
	Կենտրոնական բանկ	
	Նոտարական պալատ	
	Արդարադատության ակադեմիա	
	ԷԿԵՆԳ ՓԲԸ	
	Կադաստրի կոմիտե	
	Ոստիկանություն	
	Գլխավոր դատախազություն	
	Հատուկ քննչական ծառայություն	
	Քննչական կոմիտե	
	Ազգային անվտանգության ծառայություն	
	Սնանկության դատարան	
	Փաստաբանների պալատ	
	Սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպություններ	
Ընդհանուր	**19**	**1**

Առցանց հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ և ՖԽՔ-ներ

Արդյունքային մակարդակի ցուցանիշները գնահատվել են հետազոտական որակական մեթոդների միջոցով, մասնավորապես, առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցների և ՖԽՔ-ների միջոցով:

Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցները և ՖԽՔ-ները իրականացվել են այն կոնտակտային անձանց հետ, ովքեր ներգրավված են ռազմավարության գործողություններում

[2] https://iravaban.net/365371.html

որպես կատարող կամ համակատարող կողմ՝ ներառելով հաշվետու ժամանակահատվածում իրականացման ենթակա բոլոր գործողությունները: ԱՏՀ-ները և ՖԽՔ-ներն իրականացվել են այդ գործողությունների իրականացման համար պատասխանատու պետական մարմինների, այլ շահագրգիռ կառույցների, ինչպես նաև Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, ՔՀԿ ներկայացուցիչների, իրավաբանների, փաստաբանների, հանրային պաշտպանների և անհատ փորձագետների հետ: Ընդհանուր թվով իրականացվել է 12 ՖԽՔ, որոնցից 6-ը պետական գերատեսչությունների ներկայացուցիչների, 6-ը՝ ՔՀԿ-ների ներկայացուցիչների, իրավաբանների, փաստաբանների, հանրային պաշտպանների հետ՝ ներառելով մասնակիցներ ինչպես Երևանից, այնպես էլ մարզերից, ինչպես նաև իրականացվել է 3 փորձագիտական հարցազրույց առանցքային տեղեկատուների հետ՝ ընտրանքով առանձնացված երկու ոլորտներում:

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

(*ԸՆԴԳՐԿՈՒՄ Է 2019-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

ՈԼՈՐՏ 1: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Նպատակ 1. էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրում

Ամփոփագիր[3] Նպատակ 1. էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրում					
Հավելված 4	2019 2-րդ կիսամյ.	2020 1-ին կիսամյ.	2020 2-րդ կիսամյ.	2021 1-ին կիսամյ.	2021 2-րդ կիսամյ.
Նախատեսված գործողությունների թիվ	**1**	**1**	**3**	**1**	**4**
որից ժամկետում կատարված՝	0	0	0	0	0
որից կատարված չէ	1	0	3	1	4
որից առկա չէ տեղեկատվություն գործողության մասին	1	1	0	0	0
կատարողական ցուցանիշ	**0%**				

Ռազմավարական ուղղություններ՝

ա) փոխգործելիության հարթակի շրջանակներում միավորել արդարադատության մարմիններում գործող բոլոր էլեկտրոնային համակարգերը և տվյալների շտեմարանները

[3] Այս ամփոփագիր աղյուսակներում և մնացյալ բոլոր աղյուսակներում գործողությունների՝ ըստ իրենց իրականացման ժամկետների հաշվարկն իրականացվել է վերջին ենթագործողության ժամկետի կիսամյակի ներքո: Օրինակ, «Իրականացնել արդարադատության ոլորտի մարմիններում գործող տվյալների շտեմարանների և էլեկտրոնային համակարգերի ուսումնասիրություն» գործողության համար նախատեսվում է երկու ենթագործողություն՝ «Իրականացվել է արդարադատության ոլորտի մարմիններում գործող տվյալների շտեմարանների և էլեկտրոնային համակարգերի ուսումնասիրություն», որի իրականացման ժամկետը 2019 թվականի 2-րդ կիսամյակն է, և «Գույքագրվել են արդարադատության ոլորտի մարմիններում գործող տվյալների շտեմարանները և էլեկտրոնային համակարգերը, որոնք հասանելի են Փոխգործելիության լուծումների Catis կատալոգում», որի իրականացման ժամկետը 2020 թվականի 1-ին կիսամյակն է: Քանի որ ենթագործողությունների իրականացման ժամկետների պահպանման առումով նպատակահարմար չէր իրականացնել գնահատում, ուստի ենթագործողությունների հաշվարկ չի իրականացվել, իսկ գործողությունը, որն է՝ «Իրականացնել արդարադատության ոլորտի մարմիններում գործող տվյալների շտեմարանների և էլեկտրոնային համակարգերի ուսումնասիրություն», հաշվարկվել է 2020 թվականի 1-ին կիսամյակի ներքո իրականացման ենթակա գործողություն, քանի որ այն այս գործողության ներքո վերջին ենթագործողության իրականացման ժամանակահատվածն է:

բ) արդիականացնել դատարաններում գործող էլեկտրոնային կառավարման համակարգերը դրանց հիման վրա դատարաններում ներդնել և գործարկել դատական միասնական էլեկտրոնային կառավարման համակարգ, որը կապահովի գործերի մեկ ատյանի դատարանից մեկ այլ ատյանի դատարան և միևնույն ատյանի դատարանի նստավայրերի միջև փոխանցումը, ինչպես նաև կողմ-կողմ, կողմ-դատարան ծանուցման արդյունավետ համակարգի գործարկումը, դատարան ապացույցներ ներկայացնելը, միջնորդություններ և դատավարական այլ գործողություններ կատարելը,

գ) ներդրել պաշտոնական առցանց նամակագրության համակարգ՝ ապահովելով էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառությունը գործի բոլոր մասնակիցների միջև, ինչպես նաև՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար հնարավորություն ստեղծել առցանց կապ հաստատել, դիմում, բողոք և այլ փաստաթղթեր ներկայացնել պետական մարմիններին, բացի այդ, ընձեռել գործի ընթացքին առցանց հետևելու հնարավորություն,

դ) ապահովել էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի միջոցով վիճակագրական տվյալների հավաքագրումը

Գործողություն 1. Իրականացնել արդարադատության ոլորտի մարմիններում գործող տվյալների շտեմարանների և էլեկտրոնային համակարգերի ուսումնասիրություն

Գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախ ըստ փուլերի		Ստացված արդյունք
		2019 2-րդ կիսամյակ	2020 1-ին կիսամյակ	
Իրականացնել արդարադատության ոլորտի մարմիններում գործող տվյալների շտեմարանների և էլեկտրոնային համակարգերի ուսումնասիրություն:	ՀՀ ԱՆ «Էկենգ» ՓԲԸ (համաձայնությամբ) ԲՏԱՆ	Իրականացվել է արդարադատության ոլորտի մարմիններում գործող տվյալների շտեմարանների և էլեկտրոնային համակարգերի ուսումնասիրություն:	Գույքագրվել են արդարադատության ոլորտի մարմիններում գործող տվյալների շտեմարանները և էլեկտրոնային համակարգերը, որոնք հասանելի են Փոխգործելիության լուծումների Catis կատալոգում:	**Առկա չէ տեղեկատվություն**

««Հայաստանի Հանրապետության Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-L որոշմամբ հաստատված էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման և արդիականացման գործողությունների ծրագրերի կատարման վերաբերյալ» զեկույցում (այսուհետ՝ Էլեկտրոնային արդարադատության կատարողականի զեկույց) այս գործողության վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվում:

Այսպիսով՝ **Գործողության կատարման վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:**

Գործողություն 2. Մշակել էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ընդհանուր տեխնիկական նկարագիրը

Գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախ ըստ փուլերի		Ստացված արդյունք
		2020 1-ին եռամսյակ	2020 2-րդ եռամսյակ	
Մշակել էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ընդհանուր տեխնիկական նկարագիրը	ՀՀ ԱՆ ՀՀ ԲՏԱՆ	Մշակվել է էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ընդհանուր տեխնիկական նկարագիրը	Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ընդհանուր տեխնիկական նկարագիրը ներկայացվել է կարծիքի շահագրգիռ մարմիններին:	**Գործողությունը չի կատարվել** Աշխատանքները մեկնարկել են 2021թ դեկտեմբերին

Համաձան Էլեկտրոնային արդարադատության կատարողականի զեկույցի՝[4] ԱՆ և ԵՄ աջակցությամբ ներգրավված փորձագետների կողմից այժմ իրականացվում է առկա կարիքների գնահատում և հավաքագրվում է տեղեկատվություն տեխնիկական առաջադրանքի մշակման նպատակով: Այս փուլում փորձագետների կողմից կազմվել է էլեկտրոնային արդարադատության համակարգի հակիրճ բնութագիրը: Ինչպես ցույց է տալիս գործողության իրականացման համար պատասխանատու պետական մարմինների հետ ՖԽՔ-ը, տվյալ գործողությունը չի կատարվել նախատեսված ժամկետներում (2020թ)՝ պայմանավորված երկրում ճգնաժամային իրավիճակով: Գործողության իրականացման ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են 2021թ դեկտեմբերին:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների էական խախտումներ:**

Գործողություն 3. ՀՀ վարչական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում կատարել փոփոխություններ՝ վերանայելով էլեկտրոնային եղանակով ծանուցումները

Գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախ ըստ փուլերի		Ստացված արդյունք
		2020 1-ին կիսամյակ	2020 2-րդ կիսամյակ	
ՀՀ վարչական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում կատարել փոփոխություններ՝ վերանայելով էլեկտրոնային եղանակով ծանուցումները:	ՀՀ ԱՆ ՀՀ ԲԴԽ	Մշակվել է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը,	«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում	**Գործողությունը չի կատարվել** «Վարչական դատավարության մասին» օրենսգրքում

[4] https://www.moj.am/storage/uploads/hjk4.pdf

		նախագծերը սահմանված կարգով շրջանառվել են և ուղարկվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:	փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից:	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը մշակվել և ներկայացվել է հանրային քննարկման:

Համաձայն էլեկտրոնային արդարադատության կատարողականի զեկույցի՝ «Վարչական դատավարության մասին» օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը մշակվել և ներկայացվել է հանրային քննարկման: Ներկայումս քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է էլեկտրոնային ծանուցումների հնարավորությունը: Ուստի, նոր փոփոխությունները պետք է իրականացվեն արդարադատության միասնական համակարգի տեխնիկական նկարագրի մշակման հետ համահունչ, քանի որ նշված տեխնիկական նկարագրով առաջարկվելու են նաև էլեկտրոնային եղանակով ծանուցման մեխանիզմները:

Վերստուգիչ ցուցանիշով նախատեսվում է, որ 2020 թվականի 2-րդ կիսամյակի դրությամբ պետք է օրենքի նախագծերը հավանության արժանացած լինեն ՀՀ կառավարության կողմից, սակայն ներկայումս դրանք գտնվում են հանրային քննարկման փուլում, ուստի գործողությունը գնահատված է չկատարված:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների էական խախտումներ:**

Գործողություն 4.Դատարաններում ներդնել և գործարկել էլեկտրոնային դատարանների համապարփակ համակարգ

Գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախ ըստ փուլերի		Ստացված արդյունք
		2020 1-ին եռամսյակ	2020 2-րդ եռամսյակ	
Դատարաններում ներդնել և գործարկել էլեկտրոնային դատարանների համապարփակ համակարգ	ՀՀ ԱՆ Արդարադատության ոլորտի շահագրգիռ մարմիններ ԲՏԱՆ	Դատարաններում ներդրվել և գործարկվել է էլեկտրոնային կառավարման միասնական համակարգը, որի շրջանակներում ստեղծվել է էլեկտրոնային դատական գործ՝ ապահովելով առցանց եղանակով գործի նյութերին ծանոթանալը, պատճեններ ստանալը, ապացույցներ ներկայացնելը, միջնորդություններ և դատավարական այլ գործողություններ կատարելը:	Իրականացվել է գործերի մեկ ատյանի դատարանից մեկ այլ ատյանի դատարան և միևնույն ատյանի դատարանի նստավայրերի միջև փոխանցումը:	**Գործողությունը չի կատարվել** Համակարգի՝ նախատեսվող չորս մոդուլներից գործարկվել է միայն մեկը:

Համաձայն էլեկտրոնային արդարադատության կատարողականի զեկույցի՝ դատարանների համար ներդրվել է նոր էլեկտրոնային կառավարման համակարգ: Համակարգը բաղկացած է չորս մոդուլներից՝ ընդհանուր հայցային վարույթի, հատուկ հայցային վարույթի, հատուկ վարույթի և վճարման կարգադրության մոդուլներ: Ներկայումս իրական ռեժիմում գործարկվել է համակարգի վճարման կարգադրության մոդուլը՝

https://cabinet.armlex.am/: Մնացած երեք մոդուլների տեխնիկական առաջադրանքի մշակման համար հայտարարվել է միջազգային փորձագետների ընտրության մրցույթ: Մրցույթի անցկացումը ժամանակավորապես երկարաձգվել է: Հետագայում դիմումների բաշխումն ընդլայնվելու է՝ ներառելով մարզային առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները:

Հարկ է ավելացնել, որ այս գործողությամբ նախատեսվում է գործարկել բոլոր չորս մոդուլները, սակայն այս պահին գործարկվել է համակարգի 4 մոդուլներից միայն 1-ը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ավելացնել նաև, որ ԱՆ զեկույցում նշված «գործարկում» տերմինը դեռևս չի նշանակում, որ համակարգը հասանելի է դարձել վերջնական օգտագործողներին, այլ միայն գտնվում է տեստային փորձարկման փուլում:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների էական խախտումներ:**

Գործողություն 5. Դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման կարգի կատարելագործում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021	Ստացված արդյունք
Դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման կարգի կատարելագործում	ՀՀ ԱՆ ԲԴԽ (համաձայնությամբ)	Դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման կարգի կատարելագործմանն ուղղված ծրագիրը մշակվել է՝ շահագրգիռ մարմինների և համապատասխան ծրագրային ապահովումն իրականացնող կազմակերպության հետ քննարկումների հիման վրա	**Գործողությունը չի կատարվել** Դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման կարգի կատարելագործումը կապված է «e-court» էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հետ, որի տեխնիկական աշխատանքների առաջադրանքի մշակումը գտնվում է ընթացքի մեջ:

Դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման կարգի կատարելագործումն ուղղակի կապված է «e-court» էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հետ, որի տեխնիկական աշխատանքների առաջադրանքի մշակումը գտնվում է ընթացքի մեջ:

Համաձայն շահագրգիռ մարմինների հետ ՖԽՔ-ների՝ դատական գործերի բաշխման ներկայիս կարգը, որը ենթադրում է «ձեռքով» մակագրում, խնդրահարույց է և անհրաժեշտություն կա ոլորտում իրականացնել էական բարեփոխումներ, քանի որ ներկայիս պայմաններում խախտվում է անձանց արդար դատաքննության իրավունքը: Խնդրին մանրամասն անդրադարձ է կատարված նաև դատական գործերի «ձեռքով» մակագրման

վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում[5], որում նշվում է, որ Մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել բողոքներ այն անձանցից, որոնք կալանավորվել են էլեկտրոնային կամ ավտոմատացված համակարգի չգործելու պայմաններում: ՄԻՊ-ի զեկույցում նշվում է նաև, որ «տարբեր դատավորներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված մտահոգություններ են հայտնել այն մասին, որ գործերի բաշխման համակարգչային ծրագրի բացակայությունը դատական համակարգում մարդու իրավունքների լուրջ ռիսկեր է առաջացրել, այն ոտնահարում է դատավորների անկախությունն ու անաչառությունը»: Խնդրի հետ կապված Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան: Նշված դիմումով, վիճարկվել են Դատական օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի և Բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-16-Ն-6 որոշման 4-րդ կետի և Հավելված 1-ի 19-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 63-րդ, 78-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին[6]:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների էական խախտումներ:**

Գործողություն 6. ՀՀ վարչական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում կատարել փոփոխություններ՝ ներդնելով էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի ներկայացման ընթացակարգեր

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 1-ին կիսամյակ	Ստացված արդյունք
ՀՀ վարչական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում կատարել փոփոխություններ՝ ներդնելով էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի ներկայացման ընթացակարգեր:	ՀՀ ԱՆ ՀՀ ԲԴԽ (համաձայնությամբ) ԲՏԱՆ	Մշակվել է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը, նախագծերը սահմանված կարգով շրջանառվել են և ուղարկվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:	**Գործողությունը չի կատարվել** Գործողությունը կապված է քաղաքացիական և վարչական գործերով էլեկտրոնային համակարգի մոդուլների գործարկման հետ, որի կատարումն ավարտված չէ:

Համաձայն Էլեկտրոնային արդարադատության կատարողականի զեկույցի՝սույն գործողությունը կկատարվի քաղաքացիական և վարչական գործերով էլեկտրոնային մոդուլների գործարկումից հետո, որի հետ կապված նույնպես առկա են ժամկետային խախտումներ:

[5] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը դատական գործերի «ձեռքով» մակագրման վերաբերյալ՝ https://ombuds.am/images/files/f163711f002aec2584d22d45d2d40d47.pdf

[6] [6] Տե՛ս նույն տեղում, էջ 8-10:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների էական խախտումներ:**

Գործողություն 7. Դատարաններում ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ

Գործողություն	Պատասխան ատու մարմին	Թիրախ ըստ փուլերի		Ստացված արդյունք
		2021 1-ին եռամսյակ	2021 2-րդ եռամսյակ	
Դատարաններում ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ:	ՀՀ ԱՆ ՀՀ ԲԴԽ (համաձայնությամբ) ԲՏԱՆ	Ներդրվել է պաշտոնական էլեկտրոնային նամակագրության համակարգ՝ ապահովելով դատավորների պաշտոնական էլ.փոստի առկայությունը, էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառությունը գործի բոլոր մասնակիցների միջև: Ֆիզիկական և իրավաբանական անձանց համար ստեղծվել է առցանց եղանակով դիմում, բողոք և այլ փաստաթղթեր ներկայացնելու, պաշտոնական ծանուցում ստանալու և գործի ընթացքին հետևելու հնարավորություն:	Իրականացվել է կողմ-կողմ, կողմ-դատարան ծանուցման արդյունավետ համակարգի գործարկումը:	**Գործողությունը չի կատարվել** Դատարաններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդնումը կապված է «e-court» էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հետ, որի տեխնիկական աշխատանքների առաջադրանքի մշակումը գտնվում է ընթացքի մեջ:

Դատարաններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդնումը ևս կատարված է մասնակի, քանի որ այն կապված է «e-court» էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հետ, որի տեխնիկական աշխատանքների առաջադրանքի մշակումը գտնվում է ընթացքի մեջ: Ինչպես արդեն ներկայացվել է Գործողություն 4-ի ներքո, այս պահին գործարկված է համակարգի 4 մոդուլներից միայն 1-ը: Նշենք, որ Էլեկտրոնային արդարադատության կատարողականի զեկույցում այս գործողության կատարումը գնահատված է «Մասնակի», սակայն գործողությունը փաստացի չի իրականացվել քանի որ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը ներդրված չէ:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների էական խախտումներ:**

Գործողություն 9. Ներդնել և գործարկել սնանկության էլեկտրոնային հարթակը (e-bankruptcy)

Գործողություն	Պատասխան ատու մարմին	Թիրախ ըստ փուլերի		Ստացված արդյունք
		2021 1-ին կիսամյակ	2021 2-րդ կիսամյակ	

Ներդնել և գործարկել սնանկության էլեկտրոնային հարթակը (e-bankruptcy):	ՀՀ ԱՆ ԲՏԱՆ	Ներդրվել և գործարկվել է սնանկության էլեկտրոնային հարթակը (e-bankruptcy), ապահովվել է սնանկության վարույթի մասնակիցների էլեկտրոնային եղանակով փաստաթղթաշրջանառությունը, ծանուցումները, տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև վիճակագրական տվյալների հավաքագրումը՝ ապահովել սնանկության վարույթի հետ կապված գործընթացների թվայնացումը՝ սկսած սնանկության վարույթի հարուցումից, մինչև սնանկության գործի ավարտը:	Իրականացվել է սնանկության կառավարիչների ընտրության և նշանակման գործընթացը, ստեղծվել է հատուկ միջավայր պարտատերերի առցանց ժողովների իրականացման և քվեարկության անցկացման համար: Ներդրվել է սնանկության վարույթների վերաբերյալ վիճակագրական գործիք:	**Գործողությունը չի կատարվել** Էլեկտրոնային համակարգի հանձնման պայմանագրային ժամկետը երկարաձգվել է 3 ամսով:

Այս գործողությամբ նախատեսվում է ներդնել և գործարկել սնանկության էլեկտրոնային հարթակը (e-bankruptcy): Սակայն համաձայն Էլեկտրոնային արդարադատության կատարողականի զեկույցի՝, ինչպես նաև ՖԽՔ-ի արդյունքների, այս գործողությունը դեռևս կատարված չէ, քանի որ վերոնշյալ էլեկտրոնային հարթակը դեռևս ներդրված չէ: Էլեկտրոնային համակարգի հանձնման պայմանագրային ժամկետի երկարաձգման համար Արդարադատության նախարարությունը 2021 թվականի դեկտեմբերի 29-ին Կառավարություն է ներկայացրել՝ 3 ամսով պայմանագրի երկարաձգման որոշման նախագիծ: Էլեկտրոնային համակարգի թեստավորումը նախատեսվում է մեկնարկել 2022 թվականի մարտից, իսկ գործարկումը՝ 2022 թվականի երկրորդ կիսամյակում[7]: Միաժամանակ, ստուգման միջոցների թվին, ի թիվս մնացյալի, պատկանում են նաև դատական համակարգի աշխատակիցների, դատավորների, սնանկության կառավարիչների վերապատրաստումները՝ սնանկության էլեկտրոնային նոր ներդրված հարթակի վերաբերյալ, որոնք նույնպես չեն իրականացվել, քանի որ էլեկտրոնային հարթակը դեռևս ներդրված չէ:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների էական խախտումներ:**

Գործողություն 10. Ներդնել և գործարկել էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի քաղաքացիական և վարչական գործերով էլեկտրոնային մոդուլը

Գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախ ըստ փուլերի 2021 2-րդ կիսամյակ	Ստացված արդյունք

[7] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Դատական և իրավական բարեփոխումների 2019_2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-L որոշմամբ հաստատված էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման և արդիականացման գործողությունների ծրագրերի կատարման վերաբերյալ» զեկույցը:

Ներդնել և գործարկել էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի քաղաքացիական և վարչական գործերով էլեկտրոնային մոդուլը:	ՀՀ ԱՆ ՀՀ ԲԴԽ ԲՏԱՆ	Իրականացվել է առցանց եղանակով գործի նյութերին ծանոթանալը, պատճեններ ստանալը, ապացույցներ ներկայացնելը, միջնորդություններ և դատավարական այլ գործողություններ կատարելը:	**Գործողությունը չի կատարվել** Քաղաքացիական և վարչական գործերով էլեկտրոնային մոդուլների տեխնիկական առաջադրանքի մշակման համար հայտարարված միջազգային փորձագետների ընտրության մրցույթների անցկացումը ժամանակավորապես երկարաձգվել է:

Այս գործողությամբ նախատեսվում է ներդնել և գործարկել էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի քաղաքացիական և վարչական գործերով էլեկտրոնային մոդուլը, որը սակայն սահմանված ժամկետում չի իրականացվել: Գործողությունը ներկայումս գտնվում է տեխնիկական առաջադրանքի մշակման համար միջազգային փորձագետի ընտրության փուլում: Համաձայն Էլեկտրոնային արդարադատության կատարողականի զեկույցի՝ քաղաքացիական և վարչական գործերով էլեկտրոնային մոդուլների տեխնիկական առաջադրանքի մշակման համար հայտարարված միջազգային փորձագետների ընտրության մրցույթների անցկացումը ժամանակավորապես երկարաձգվել է: Մրցույթների անցկացումը նախատեսվում է 2022 թվականի ընթացքում:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների էական խախտումներ:**

Նպատակ 2. Արդարադատության բնագավառի էլեկտրոնային համակարգերի և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում և արդիականացում

Ամփոփագիր **Նպատակ 2. Արդարադատության բնագավառի էլեկտրոնային համակարգերի և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում և արդիականացում**					
Հավելված 4	2019 2-րդ կիսամյ.	2020 1-ին կիսամյ.	2020 2-րդ կիսամյ.	2021 1-ին կիսամյ.	2021 2-րդ կիսամյ.
Նախատեսված գործողությունների թիվ	**0**	**0**	**0**	**0**	**7**
որից ժամկետում կատարված՝	0	0	0	0	0
որից չի կատարվել	0	0	0	0	7
կատարողական ցուցանիշ	**0%**				

Ռազմավարական ուղղություններ՝

- Արդիականացնել արդարադատության բնագավառի առկա էլեկտրոնային համակարգերը՝ համապատասխանեցնելով արդի ժամանակաշրջանի պահանջներին
- Ապահովել տվյալների բազաների թվայնացումը
- Ապահովել տվյալների բազաների վերաբերյալ համապատասխան նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունները
- Կրճատել վարչարարությունը
- Ապահովել ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի թվային արխիվների ստեղծումը

Գործողություն 1. Էլեկտրոնային նոտարական e-notary համակարգի զարգացում

Գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախ ըստ փուլերի			Ստացված արդյունք
		2020 2-րդ կիսամյակ	2021 1-ին կիսամյակ	2021 2-րդ կիսամյակ	
Էլեկտրոնային նոտարական e-notary համակարգի զարգացում	ՀՀ ԱՆ ՀՀ նոտարական պալատ (համաձայնությամբ) ԲՏԱՆ	Մշակվել է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը, նախագծերը սահմանված կարգով շրջանառվել են և ուղարկվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«Նոտարիատի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը, հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից:	Իրականացվել է e-notary համակարգի ծրագրային ապահովման զարգացումը՝ ապահովելով նոտարի կողմից էլեկտրոնային տեսահաղորդակցության միջոցներով գործարքի վավերացումը և փաստաթղթերի փոխանակումը (փոխանցումը)	**Գործողությունը չի կատարվել** e-notary համակարգի ծրագրային ապահովման զարգացման աշխատանքները գտնվում են ընթացքի մեջ:

Այս գործողությամբ նախատեսվում է Էլեկտրոնային նոտարական e-notary համակարգի զարգացում, որը սակայն համաձայն Արդարադատության նախարարության տեղեկության՝ ներկայումս գտնվում է ընթացքի մեջ[8]: Համաձայն այս գործողության մասով շահագրգիռ կողմերի հետ ՖԽՔ-ի

[8] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Դատական և իրավական բարեփոխումների 2019_2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-L որոշմամբ հաստատված էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման և արդիականացման գործողությունների ծրագրերի կատարման վերաբերյալ» զեկույցը:

արդյունքների, դեռևս 2019թ. ՀՀ նոտարական պալատի կողմից ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվել հաղորդակցության էլեկտրոնային միջոցների կիրառմամբ նոտարի կողմից նոտարական ակտերի վավերացման կարգի համառոտ նկարագիրը: Նոտարի կողմից էլեկտրոնային տեսահաղորդակցության միջոցներով գործարք վավերացնելու և փաստաթղթեր փոխանակելու/փոխանցելու հնարավորությունը «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում սահմանված չէ, և այդ մասով նշված օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծեր չեն մշակվել, հետևաբար և չեն ներկայացվել Կառավարության հավանությանը և չի իրականացվել e-notary համակարգի ծրագրային ապահովման զարգացում:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների խախտումներ:**

Գործողություն 2. Նոտարի կողմից Էլեկտրոնային եղանակով վավերացման ենթակա էլեկտրոնային պայմանագրերի և փաստաթղթերի փոխանակման համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգի ներդրում

Գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախ ըստ փուլերի		Ստացված արդյունք
		2020 2-րդ կիսամյակ	2021 2-րդ կիսամյակ	
Նոտարի կողմից Էլեկտրոնային եղանակով վավերացման ենթակա էլեկտրոնային պայմանագրերի և փաստաթղթերի փոխանակման համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգի ներդրում	ՀՀ ԱՆ ՀՀ ԿԲ (համակատարող) ԲՏԱՆ	Հաստատվել է էլեկտրոնային եղանակով վավերացման ենթակա պայմանագրերի տիպային ձևերի և դրանց էլեկտրոնային վավերացման կարգը	Ներդրվել է նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգ՝ ապահովելով էլեկտրոնային կապ նոտարների, բանկային, վարկային կազմակերպությունների միջև:	**Գործողությունը չի կատարվել** Արդարադատության նախարարության կողմից մշակվել և շրջանառվել է նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով կնքված գործարքների վավերացման, անհրաժեշտ փաստաթղթերի փոխանակման էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքը, որի արդյունքում լրամշակված տեխնիկական առաջադրանքը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

Այս գործողությամբ նախատեսվում է էլեկտրոնային եղանակով վավերացման ենթակա պայմանագրերի տիպային ձևերի և դրանց էլեկտրոնային վավերացման կարգի հաստատում (2020թ" 2-րդ կիսամյակ) և նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում՝ ապահովելով էլեկտրոնային կապ նոտարների, բանկային, վարկային կազմակերպությունների միջև (2021թ" 2-րդ կիսամյակ):

ՀՀ ԱՆ-ի կողմից մշակվել և շրջանառվել է նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով կնքված գործարքների վավերացման, անհրաժեշտ փաստաթղթերի փոխանակման էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքը, որի արդյունքում լրամշակված տեխնիկական առաջադրանքը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

Ըստ ԻՀԱ-ին տրամադրած գրավոր տեղեկատվության՝ տվյալ գործողության շրջանակներում մշակված Նոտարի կողմից էլեկտրոնային գործարքների վավերացման համակարգի տեխնիկական առաջադրանքով՝ նոտարի կողմից ֆինանսական համակարգի ոլորտում կնքվող տիպային և ոչ տիպային էլեկտրոնային գործարքների վավերացման հնարավորությունը ներդնելուց հետո նախատեսվում է նաև կատարողական մակագրության թերթի կիրառման արդյունավետության բարձրացման միջոցառում՝ այն էլեկտրոնային եղանակով նոտարի կողմից հաստատելը: Այս գործողության շրջանակներում ՀՀ ԿԲ-ի կողմից մշակվել և ՀՀ ԱՆ են ներկայացվել էլեկտրոնային եղանակով վավերացման ենթակա պայմանագրերի տիպային ձևերը՝ սպառողական, օվերդրաֆտ, ապառիկի վերաբերյալ: Մշակման աշխատանքների ընթացքում համագործակցել են այլևայլ բանկերի, Նոտարական պալատի, շահագրգիռ կողմերի հետ:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ՖԽՔ-ի ընթացքում ևս արձանագրվեց, որ այս գործողությունը կատարման փուլում է, սակայն դեռևս ամբողջությամբ իրականացված չէ: Որպես գործողության իրականացման էական նյութական արդյունք առկա է միայն նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով կնքված գործարքների վավերացման, անհրաժեշտ փաստաթղթերի փոխանակման էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքը, որը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նոտարի կողմից էլեկտրոնային գործարքների վավերացման համակարգի մշակման նպատակով 13.08.2021թ. հայտարարվել է մրցույթ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ն: Այս մասին տեղեկատվությունը ՀՀ նոտարական պալատ է ներկայացվել 2021 թվականի դեկտեմբերին: Սակայն առկա է իրականացման խնդիր, քանի որ տվյալ ընկերության կողմից ներկայացված գնառաջարկը զգալի չափով գերազանցում է Նոտարական պալատի ունեցած հնարավորությունները: Առկա է ֆինանսական ռեսուրսների խնդիր, քանի որ Կառավարության կողմից հատկացված գումարը չի բավականացնի էլեկտրոնային համակարգի ներդրմանը, ինչը զգալիորեն կարող է խոչընդոտել գործողության իրականացումը:

Այսպիսով, քանի որ գործողության վերջնարդյունքը նոտարի կողմից Էլեկտրոնային եղանակով վավերացման ենթակա էլեկտրոնային պայմանագրերի և փաստաթղթերի փոխանակման համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգի ներդրումն է, որը փաստացի չի իրականացվել, ուստի գործողությունը գնահատվում է չիրականացված:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների խախտումներ:**

Գործողություն 3. ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի և անհատական ծանուցումների համակարգի արդիականացում: Անհատական և հրապարակային ծանուցումների միասնական համակարգի ստեղծում

Գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախ ըստ փուլերի		Ստացված արդյունք
		2020 2-րդ կիսամյակ	2021 2-րդ կիսամյակ	

ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի և անհատական ծանուցումների համակարգի արդիականացում: Անհատական և հրապարակային ծանուցումների միասնական համակարգի ստեղծում:	ՀՀ Վարչապետի աշխատակազմ (համաձայնությամբ) ՀՀ ԱՆ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ) ԲՏԱՆ	Կազմել է Անհատական և հրապարակային ծանուցումների միասնական համակարգի տեխնիկական առաջադրանքը:	Հրապարակային և անհատական ծանուցումների գործող համակարգի հենքի վրա ստեղծվել է Անհատական և հրապարակային ծանուցումների միասնական համակարգը: Առկա է առավել մատչելի և ընկալելի ինտերֆեյսը, կիրառվել է հաշմանդամություն ունեցող անձանց ներառման պրակտիկան, որով վերացվում են վերջիններիս մուտքը վեբ կայքեր խոչընդոտող արգելքները: Ներդրվել է որոնման խելացի համակարգը, բաժանորդագրման հնարավորությունը, անձնական էլեկտրոնային գրասենյակը՝ անվճար կամ վճարովի հիմունքներով հայտարարություններ և ծանուցումներ տեղադրելու համար: Ապահովվել է Կայքի փոխգործելիությունը էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի, փոստային համակարգի, պաշտոնական փաստաթղթաշրջանառության Մալբրի համակարգերի հետ:	**Գործողությունը չի կատարվել** Մշակվել է քաղաքացու, պետության և մասնավոր հատվածի համար համակարգից օգտվելու հեշտացված տարբերակ՝ ֆինանսական և վարչական առումներով: notify.e-gov.am համակարգը գտնվում է մշակման և ներդրման վերջնական փուլում:

Այս գործողությամբ նախատեսվում է ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի և անհատական ծանուցումների համակարգի արդիականացում, ինչպես նաև անհատական և հրապարակային ծանուցումների միասնական համակարգի ստեղծում:

Համաձայն Էլեկտրոնային արդարադատության կատարողականի զեկույցի՝ մշակվել է քաղաքացու, պետության և մասնավոր հատվածի համար համակարգից օգտվելու հեշտացված տարբերակ՝ ֆինանսական և վարչական առումներով: Համակարգը մշակվել է ըստ տեխնիկական բնութագրի: Կատարվել են համապատասխան ինտեգրումները, ծրագրային լուծումները, ներկայումս սկսվել է դրա փորձարկման և ներդրման գործընթացը: notify.e-gov.am համակարգը գտնվում է մշակման և ներդրման վերջնական փուլում: Կատարվում է պրակտիկ օգտագործման դեպքում հնարավոր խնդիրների վերհանումը, դրանց տեխնիկական լուծումների մշակումը և հարմարեցումը պետական այլ համակարգերին և կազմակերպությունների պահանջներին:

Համաձայն ԻՀԱ-ին տրամադրած գրավոր տեղեկատվության՝ 2020թ. 2-րդ կիսամյակի ընթացքում քաղաքացիների պաշտոնական էլեկտրոնային փոստի, ինչպես նաև հրապարակային ծանուցումների միասնական էլեկտրոնային համակարգի ստեղծման նպատակով ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակի հետ համատեղ մշակվել է տեխնիկական բնութագիր և ներկայացվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերում ներառելու առաջարկություն: Մրցույթի արդյունքում հաղթող կազմակերպությունը ներկայացրել է ծրագրի իրականացման պլան, տարվել են աշխատանքներ 2019թ. ընթացքում ծանուցումների ծավալների վերլուծության ուղղությամբ՝

համակարգի պահանջվող հզորությունը հասկանալու նպատակով: Աշխատանքների իրականացման ներկա փուլում կապալառու կազմակերպությունը կատարում է առկա համակարգի ուսումնասիրություն և վերլուծություն, որը ներկայացվելու է պատվիրատուի հաստատմանը:

Այսպիսով, թեև այս գործողության իրականացման ուղղությամբ առկա են իրականացված աշխատանքներ և ձեռքբերումներ, սակայն գործողությունը գնահատվում է ժամկետում չիրականացված, քանի որ անհատական և հրապարակային ծանուցումների միասնական համակարգը դեռևս ստեղծված չէ:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների խախտումներ:**

Գործողություն 4. Իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգի արդիականացում

Գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախ ըստ փուլերի		Ստացված արդյունք
		2020 2-րդ կիսամյակ	2021 2-րդ կիսամյակ	
Իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգի արդիականացում	ՀՀ ԱՆ ԲՏԱՆ	Կազմվել է Իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգի արդիականացում տեխնիկական առաջադրանքը:	Արդիականացվել է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգը:	**Գործողությունը չի կատարվել** Թվայնացման խորհրդում հաստատվել է Իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգի արդիականացման տեխնիկական առաջադրանքը:

Համաձայն Էլեկտրոնային արդարադատության կատարողականի զեկույցի՝ թվայնացման խորհրդում հաստատվել է Իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգի արդիականացման տեխնիկական առաջադրանքը: Համակարգի արդիականացման տեխնիկական առաջադրանքը դրվել է մրցույթի: Մրցույթի արդյունքում հաղթած կազմակերպության կողմից ըստ տեխնիկական առաջադրանքի իրականացվում են համակարգի արդիականացման ծրագրային մշակման աշխատանքներ: Այս զեկույցում նաև նշվում է, որ արդեն այս պահի դրությամբ e-register.am կայքը համալրվել է իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու էլեկտրոնային համակարգով: ԱՆ զեկույցում այս գործողության իրականացումը գնահատվել է «մասնակի կատարված»:

Այնուամենայնիվ անհրաժեշտ է նշել, որ ՖԽՔ-ի արդյունքում արձանագրվեց, որ սույն գործողությունը կատարված չէ: Ըստ փորձագետների՝ «այս գործողությունն ուղղված է տվյալ համակարգի արդիականացմանն և մատչելիության ապահովմանը, իսկ այս ուղղություններով աշխատանքներ իրականացված չեն»: Ի լրումն, ԱՆ զեկույցում նշված «իրական շահառուների ինստիտուտի» շրջանակներում իրավաբանական անձանց իրական

շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման պահանջը կապված է այլ գործընթացի հետ և չի առնչվում իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգի արդիականացմանը, հետևապես չի կարող ներկայացվել որպես սույն գործողության շրջանակներում կատարված աշխատանքներ:

Առաջարկություն՝

- Վերանայել ԱՆ կողմից հրապարակվող «Հայաստանի Հանրապետության Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-L որոշմամբ հաստատված էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման և արդիականացման գործողությունների ծրագրերի կատարման վերաբերյալ» մոնիթորինգային զեկույցը և գործողության իրականացման կարգավիճակը գնահատել ըստ վերաբերելի աշխատանքների կատարողականի:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների խախտումներ:**

Գործողություն 5. Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի արխիվային նյութերի թվայնացում, թվային արխիվների ստեղծում

Գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախ ըստ փուլերի		Ստացված արդյունք
		2021 1-ին կիսամյակ	2021 2-րդ կիսամյակ	
Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի արխիվային նյութերի թվայնացում, թվային արխիվների ստեղծում	ՀՀ ԱՆ ԲՏԱՆ	Իրականացվել է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի արխիվային փաստաթղթերի թվայնացում՝ ըստ սահմանված ժամանակացույցի:	Ստեղծվել է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի թվային արխիվը: Ապահովվել է թվայնացված արխիվային փաստաթղթերի մատչելիությունը և արդյունավետությունը:	**Գործողությունը չի կատարվել** Թվայնացման խորհրդի նիստում հավանություն է տրվել՝ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության արխիվի թվայնացման ծրագրին:

Այս գործողությամբ նախատեսվում է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի արխիվային նյութերի թվայնացում, թվային արխիվների ստեղծում: Սակայն, համաձայն ԱՆ զեկույցի, ներկայումս Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության արխիվի թվայնացման ծրագիրը միայն հաստատվել է թվայնացման խորհրդի նիստի ընթացքում և փաստացի այլ աշխատանքներ այս ուղղությամբ չեն իրականացվել: Համաձայն ՖԽՔ-ին մասնակցած ԱՆ ներկայացուցչի՝ աշխատանքների իրականացման ժամկետների երկարաձգումը պայմանավորված է կորոնավիրուսային հիվանդության տարածմամբ և դրա հետևանքներով:

Այսպիսով՝ **Գործողությունը չի իրականացվել / առկա են ժամկետների խախտումներ:**

Գործողություն 6. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այս կետում՝ Ծառայություն) էլեկտրոնային համակարգի (ՀԿԱԾ էլ. համակարգ) զարգացում

Գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախ ըստ փուլերի		Ստացված արդյունք
		2021 2-րդ կիսամյակ	2021 1-ին կիսամյակ	
Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այս կետում՝ Ծառայություն) էլեկտրոնային համակարգի (ՀԿԱԾ էլ. համակարգ) զարգացում	ՀՀ ԱՆ ԲՏԱՆ	Իրականացվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային համակարգի արդիականացում	Իրականացվել է էլեկտրոնային աճուրդ համակարգի արդիականացում:	**Գործողությունը չի կատարվել** Էլեկտրոնային համակարգի մշակումը ընթացիկ փուլում է:

Արդարադատության նախարարության կողմից մշակվել և շրջանառվել է հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքը: Կազմակերպվել է ծառայության գնումը: Պայմանագիրը կնքվել է 2021 թվականի հոկտեմբերին: Էլեկտրոնային համակարգի մշակումը ընթացիկ փուլում է: Միևնույն ժամանակ, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային համակարգի զարգացման միջոցառումների ժամկետները վերանայվել են Կառավարության 2021-2026թթ. ծրագրին համապատասխան[9]:

Այսպիսով, թեև այս գործողության ուղղությամբ իրականացվել են որոշակի աշխատանքներ, սակայն 2021թ" 1-ին կիսամյակով նախատեսվող էլեկտրոնային աճուրդ համակարգի արդիականացում փաստացի չի իրականացվել:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների խախտումներ:**

Գործողություն 7. Այլընտրանքային վեճերի լուծման էլեկտրոնային համակարգի ներդրում

Գործողություն	Պատասխանատու մարմին	Թիրախ ըստ փուլերի			Ստացված արդյունք
		2020 2-րդ կիսամյակ	2020 2-րդ կիսամյակ	2021 2-րդ կիսամյակ	

[9] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-L որոշմամբ հաստատված էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման և արդիականացման գործողությունների ծրագրերի կատարման վերաբերյալ» մոնիթորինգային զեկույցը:

Այլընտրանքային վեճերի լուծման էլեկտրոնային համակարգի ներդրում	ՀՀ ԱՆ ԲՏԱՆ ՀՀ ԲԴԽ (համաձայնությամբ)	Օրենսդրական փոփոխությունների իրականացում, որով կապահովվի այլընտրանքային վեճերի էլեկտրոնային եղանակով լուծումը:	Այլընտրանքային վեճերի լուծման էլեկտրոնային համակարգի տեխնիկական նկարագրի մշակում:	Այլընտրանքային վեճերի լուծման էլեկտրոնային համակարգի ներդրում:	**Գործողությունը չի կատարվել** Նշված աշխատանքների իրականացումը պայմանավորված է Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծման աշխատանքների իրականացմամբ:

Համաձայն Էլեկտրոնային արդարադատության կատարողականի զեկույցի՝ սույն գործողության կատարումը պայմանավորված է Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծման աշխատանքների իրականացմամբ: Միաժամանակ, ՖԽՔ-ի ընթացքում ՀՀ ԱՆ ներկայացուցիչը նշեց, որ գործողությունը չի կատարվել: Կենտրոնի ստեղծման աշխատանքների գործողությունների պլանը և ժամկետները վերանայվել են Կառավարության 2021-2026թթ. ծրագրին համապատասխան, ինչով պայմանավորված այս միջոցառումը կդիտարկվի Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի հիմնադրման աշխատանքների շրջանակներում:

Այսպիսով՝ **Գործողությունը չի իրականացվել / առկա են ժամկետների խախտումներ:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2019-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

(*ԸՆԴԳՐԿՈՒՄ Է 2019-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

ՈԼՈՐՏ 2: ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ

Նպատակ 2. Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրական ժողովրդավարության հաստատում և իրավունքի գերակայության ամրապնդում

Ամփոփագիր Նպատակ 2. Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրական ժողովրդավարության հաստատում և իրավունքի գերակայության ամրապնդում			
Հավելված 2	2019 2-րդ կիսամյ.	2020 1-ին կիսամյ.	2020 2-րդ կիսամյ.
Նախատեսված գործողությունների թիվ	**1**	**0**	**1**
որից ժամկետում կատարված՝	0	0	0
որից չի կատարվել	1	0	1
կատարողական ցուցանիշ	**0%**		

Ռազմավարական ուղղություն՝

- Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին օրենքի նախագծի (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթի) մշակում և ներկայացում ԱԺ:

Գործողություն 1. «Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագծի (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթի) մշակում /հավելված 2/

Գործողություն	Պատասխան ատու մարմին	Թիրախ ըստ փուլերի		Ստուգման միջոց	Ստացված արդյունք
		2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվական		
«Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագծի (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթի) մշակում:	ՀՀ ԱՆ	«Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագիծը (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթը) մշակվել է	«Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագիծը (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթը) քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ, հաստատվել է Կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	«Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագիծը (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի	**Գործողությունը չի կատարվել** Օրենքի նախագիծը քննարկվել է շահագրգիռ կողմերի հետ,

				փաթեթը) ներկայացվել է ՀՀ ԱԺ:	սակայն չի ներկայացվել ԱԺ:

Համաձայն ԱՆ կողմից հրապարակված ««Հայաստանի Հանրապետության Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և 2020 թվականի դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշմամբ հաստատված գործողությունների ծրագրերի 2020 թվականի երկրորդ կիսամյակում կատարման ենթակա գործողությունների ընթացքի վերաբերյալ» զեկույցի (այսուհետ՝ 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույց)[10] ՝ 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Հայաստանի Հանրապետության փաստահավաք հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը մշակվել է, ներկայացվել է հանրային քննարկման, գտնվում է առաջարկությունների ամփոփման և նախագծերի լրամշակման փուլում: Տվյալ պահի դրությամբ այն ներկայացվել է նաև միջազգային փորձագիտական կարծիքի և առաջիկայում նախատեսվում է նաև հանրային քննարկումներ շահագրգիռ անձանց հետ: Գործողության իրականացումն այս զեկույցում գնահատվել է «մասնակի», քանի որ այն նախանշված ժամկետներում չի ներկայացվել ՀՀ ԱԺ:

ՀՀ ԱՆ-ի հրապարակված զեկույցում, որը վերաբերում է «Հայաստանի Հանրապետության Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշմամբ հաստատված գործողությունների ծրագրերի 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա ընթացքին, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում (այսուհետ՝ ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույց, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում), այս գործողության իրականացման վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն չի տրամադրվում: Նշվում է, որ մշակվել է «Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը, որը քննարկվել է շահագրգիռ կողմերի հետ: Զեկույցում բացակայում են գործողության հետ կապված տարբեր աշխատանքների իրականացման ժամկետները: Նշենք, որ որպես այս գործողության վերջնարդյունք պետք է լիներ 2020 թվականի վերջի դրությամբ օրենքի նախագծի ներկայացումը ԱԺ, սակայն այս գործողությունը չի կատարվել նաև 2021 թվականի ընթացքում:

ՖԽՔ ընթացքում ՀՀ ԱՆ-ի ներկայացուցչի կողմից պարզաբանվել է, որ «Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագիծը մշակվել է, առաջին անգամ դրվել է հանրային քննարկման e-draft հարթակի միջոցով: Ներկայացված կարծիքների հիման վրա օրենքի նախագիծը պետք է լրամշակվեր, սակայն ակնկալվող արդյունքին ամբողջությամբ հասնել չի հաջողվել՝

[10] ԱՆ կողմից տարբեր ժամանակահատվածների համար հրապարակված զեկույցներին տրված է նմանատիպ կարճ հղում՝ մասնավորեցնելով մշտադիտարկման ժամանակահատվածը:

պայմանավորված երկրում համավարակի և պարտերազմական իրավիճակով: Հետագայում այդ պատճառների թվին է ավելացել նաև Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած Ազգային Ժողովի նոր ընտրությունները և ՀՀ կառավարության նոր ծրագրի ձևավորման արդյունքում այս հարցը մնացել է առկախված՝ չստանալով վերջնական լուծում:

Համաձայն ՀՀ ԱՆ-ի ներկայացուցչի՝ օրենքի նախագիծը մեկ անգամ շրջանառվել է հանրության շրջանում և զուգահեռաբար իրականացվել են նաև այլ ձևաչափի հանրային քննարկումներ՝ հիմնականում առցանց հարթակներում՝ հաշվի առնելով այդ ժամանակահատվածում առկա համավարակով պայմանավորված սահմանափակումների խստության աստիճանը: ԱՆ ներկայացուցիչը նաև հայտել է, որ քննարկումների արդյունքում ներկայացված բոլոր առաջարկները, դիտողությունները արձանագրվել են: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ այս գործողությունը հնարավոր է վերանայվի Դատահիրավական ոլորտի ռազմավարության վերանայմանը զուգընթաց:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների էական խախտումներ:**

Առաջարկություններ՝

- Արդարադատության նախարարության կողմից հրապարակված ««Հայաստանի Հանրապետության Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-L որոշմամբ հաստատված գործողությունների ծրագրերի 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների ընթացքի վերաբերյալ, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում» զեկույցում այս գործողության վերաբերյալ իրականացված աշխատանքների նկարագրությունը դարձնել առավել մանրամասն՝ ավելացնելով դրա առանձին բաղադրիչների իրականացման ժամկետների վերաբերյալ տվյալներ:

ՈԼՈՐՏ 3: ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Նպատակ 3. Սահմանադրական բարեփոխումների անցկացում

Ամփոփագիր Նպատակ 3. Սահմանադրական բարեփոխումների անցկացում			
Հավելված 2	2019 2-րդ կիսամյակ	2020 1-ին կիսամյակ	2020 2-րդ կիսամյակ
Նախատեսված գործողությունների թիվ	**1**	**0**	**1**
որից ժամկետում կատարված՝	1	0	1
կատարողական ցուցանիշ	**100%**		
Հավելված 3	2021 թ.		
Նախատեսված գործողությունների թիվ	**1**		
որից ժամկետում կատարված՝	0		
որից չի կատարվել	1		
կատարողական ցուցանիշ	**0%**		

Ռազմավարական ուղղություն (Հավելված 2)՝

1. Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի ձևավորում
2. Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից սահմանադրական բարեփոխումների նախագծի մշակում, սահմանադրական հանրաքվեի նախաձեռնում /հավելված 3/

Գործողություն 1. Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կազմն ու աշխատակարգը սահմանող փաստաթղթի (կազմավորման կարգի) մշակում և ընդունում և հանձնաժողովի ձևավորում

Այս

Գործողություն	Պատասխան ատու մարմին	Թիրախ ըստ փուլերի		Ստուգման միջոց	Ստացված արդյունք
		2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվական		

գործողությամբ նախատեսվում էր 2019 թվականի 2-րդ կիսամյակում մշակել և հրապարակել Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կազմավորման կարգի նախագիծ: Իսկ 2020 թվականին Հանձնաժողովի կազմավորման կարգի նախագիծը նախատեսվում էր քննարկել շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության հետ, ընդունել այն և ձևավորվել հանձնաժողովը:

Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կազմն ու աշխատակարգը սահմանող փաստաթղթի (կազմավորման կարգի) մշակում և ընդունում	ՀՀ ԱՆ Վարչապետի աշխատակազմ	Մշակվել և հրապարակվել է Հանձնաժողովի կազմավորման կարգի նախագիծ, որը նախատեսում է Հանձնաժողովի անդամի ընտրության պատշաճ մեխանիզմներ և ենթակա է հաստատման Կառավարության կողմից:	Հանձնաժողովի կազմավորման կարգի նախագիծը քննարկվել է շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության հետ, ընդունվել է: Հանձնաժողովը ձևավորվել է:	Հանձնաժողովի կազմավորման կարգի նախագիծը ընդունված է, Հանձնաժողովը ձևավորված է:	**Գործողությունը կատարված է ժամկետում, սակայն հանձնաժողովի աշխատանքը կասեցված է**[11]

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝[12] ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման հավելվածի 5.1 կետի ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման թիվ 1 հավելվածի՝ ԱՆ-ին վերապահված ոլորտների 2.1-ին կետի հիման վրա նախաձեռնվել է Սահմանադրական բարեփոխումների իրականացման խորհրդի ստեղծման գործընթաց:

Այնուամենայնիվ, համաձայն ԱՆ-ի ներկայացուցիչների հետ անցկացված ՖԽՔ-ների, սույն գործողության կատարումը որոշակի ժամանակահատված կասեցված է եղել՝ պայմանավորված երկրում առկա ներքաղաքական իրավիճակով և համավարակով: Ներկայումս քննարկվում է ոչ թե այս գործողությամբ նախանշված հանձնաժողովի աշխատանքների վերսկսումը կամ շարունակությունը, այլ նոր հանձնաժողովի ձևավորման հեռանկարը,[13] ինչի նպատակով քննարկվել են տարբեր հայեցակարգեր և Վարչապետին է ներկայացվել այս մասին որոշում: Հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքների վերջնարդյունք հանդիսացող համապատասխան նախագծերը, որպես այդպիսին, հանրության դատին չեն ներկայացվել: Դրանք կքննարկվեն նոր կազմավորվող հանձնաժողովի գործունեության շրջանակներում:

[11] Նշենք, որ ռազմավարության կատարողականի գնահատումն իրականացվել է սահմանված ժամկետում գործողությամբ ենթադրվող աշխատանքների և փաստացի իրականացված աշխատանքների համադրմամբ, իսկ տվյալ գործողության դեպքում նախատեսվում էր 2020 թվականին «Հանձնաժողովի կազմավորման կարգի նախագիծը քննարկել շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության հետ, ընդունել և ձևավորել հանձնաժողովը»: Նկատի ունենալով, որ գործողությունների պլանի մշտադիտարկման ժամանակահատվածն ընդգրկվել է 2019-2021թթ., իսկ այդ ժամանակահատվածում ռազմավարությամբ նախատեսված էր գործողություն ուղղված բուն հանձնաժողովի ստեղծմանը և դրա ուղղությամբ անհրաժեշտ իրավական ակտերի ընդունմանը, ինչը փաստացի կատարվել է ժամկետում, գործողությունը գնահատվել է «կատարված է ժամկետում»: Հանձնաժողովի կատարած աշխատանքները սույն զեկույցում գնահատման ենթակա չեն այն հիմքով, որ այդ գործողությունը նախատեսված են կատարել 2022թ-ին, իսկ այս ժամանակահատվածը ընդգրկված չէ մշտադիտարկման ժամանակահատվածում

[12] https://www.moj.am/storage/uploads/hjk3.pdf

[13] Սույն զեկույցի մշակման նպատակով կատարված դաշտային աշխատանքների ընթացքում Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը դեռևս ձևավորված չէր:

Քննարկման արդյունքում կարևոր արձանագրում արվեց առ այն, որ երկրում տիրող օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված՝ հանձնաժողովը կասեցրել էր աշխատանքները, սակայն հետագայում ՀՀ վարչապետի որոշմամբ ամբողջությամբ դադարեցրեց իր գործունեությունը: Ստեղծվեց ուրիշ կազմով խորհուրդ, այլ ոչ մասնագիտական հանձնաժողով, որն ունի կից փորձագիտական աշխատող խումբ: Նոր խորհրդի ստեղծումը բխում է ոչ թե ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից, այլ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործողությունների ծրագրից, որից առկա է հակասություն Ռազմավարության և ՀՀ կառավարության ծրագրի միջև, դրանից էլ ելնելով ընդունվել է որոշում վերանայել Ռազմավարությունը:

ՖԽՔ-ի այլ մասնակիցներ, սակայն, նշեցին, որ համավարակը՝ որպես գործողության իրականացման խոչընդոտ դիտարկելը տեղին չէ, քանի որ սահմանափակումները որևէ բացասական ձևով չեն անդրադարձել հանձնաժողովի աշխատանքների արդյունավետության վրա: Ժողովներն անցկացվել են շաբաթը մեկ անգամ՝ հեռավար կարգով: Եվ միայն պատերազմի արդյունքում երկրում ստեղծված իրավիճակը ստիպեց Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամներին կասեցնել, դեպոնացնել կատարված աշխատանքները և փոխանցել դրանք Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի քարտուղարությանը՝ ՀՀ արդարադատության նախարարությանը: ՖԽՔ-ի մասնակիցները լիահույս են, որ հետագայում քաղաքական նոր լուծումների շնորհիվ արդեն իսկ իրականացված աշխատանքների արդյունքները կօգտագործվեն: Իրականացված լայնածավալ աշխատանքները, այնուամենայնիվ, վերջնական փաստաթղթի կամ հայեցակարգի տեսք չեն ստացել և առկա են միայն նախնական տարբերակով:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարված է ժամկետում, սակայն հանձնաժողովի աշխատանքը կասեցված է**

Գործողություն 2. Սահմանադրական բարեփոխումների նախագծի հանրային քննարկում և սահմանադրական հանրաքվեի նախաձեռնում /հավելված 3/

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվական	Ստացված արդյունք
Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից սահմանադրական բարեփոխումների նախագծի մշակում	ՀՀ արդարադատության նախարարություն, Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողով (համաձայնությամբ)	Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը սկսել է սահմանադրական բարեփոխումների նախագծի մշակումը	**Գործողությունը կասեցված է**

Այս գործողության իրականացումը բխում է Գործողություն 1-ից, որով նախատեսվում է Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կազմն ու աշխատակարգը սահմանող փաստաթղթի (կազմավորման կարգի) մշակում և ընդունում: Գործողությունը 1-ը փաստացի կասեցված է, որով պայմանավորված չի իրականացվել նաև Հավելված 3-ով նախատեսված Գործողություն 2-ը:

Այսպիսով՝ **Գործողությունը կասեցված է:**

ՈԼՈՐՏ 4: ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 4. Ընտրական օրենսդրության բարեփոխում

Ամփոփագիր Նպատակ 4. Ընտրական օրենսդրության բարեփոխում	
Հավելված 2	2020 թվական
Նախատեսված գործողությունների թիվ	**1**
որից ժամկետում կատարված՝	1
կատարողական ցուցանիշ	**100%**

Ռազմավարական ուղղություն՝

- ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում

Գործողություն 1. ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների փաթեթի մշակում և ներկայացում ԱԺ /հավելված 2/

Գործողություն	Պատասխան ատու մարմին	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների փաթեթի մշակում և ներկայացում ԱԺ	ՀՀ ԱՆ	Մշակվել և հրապարակվել է ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը քննարկվել է շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության հետ և հաստատվել է ՀՀ կառավարության կողմից:	ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների փաթեթն ուղարկվել է ԱԺ:	**Կատարվել է ժամկետում** «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը ընդունվել է 2020 թվականի հունիսի 18-ին **Իրավական վերլուծություն Չի համապատասխանում և ամբողջական չէ**

Այս գործողությամբ նախատեսվում էր 2020 թվականի ընթացքում ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում և հրապարակում, քննարկում շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության հետ, որից հետո հաստատում ԱԺ կողմից:

2020 թվականի ընթացքում ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների փաթեթի նախագիծը մշակվել է իշխող քաղաքական մեծամասնության կողմից և ներկայացվել է շահագրգիռ մարմիններին: ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը ընդունվել է 2020 թվականի հունիսի 18-ին և 2021 թվականի ԱՆ-ի կողմից հրապարակված զեկույցում հունվարի դրությամբ այս գործողության իրականացումը գնահատվել է «կատարված է»:

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում՝ նշված օրենսդրական ակտերի Սահմանադրության համապատասխանության հարցը ՀՀ նախագահի դիմումի հիման վրա քննարկվել է Սահմանադրական դատարանում, որի շրջանակում դիտարկվել է նաև միջազգային փորձագետ ներգրավելու սահմանադրականության հարցը: Գործի քննությունը տեղի է ունեցել 2021 թվականի հոկտեմբերի 12-ին, որի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ 9-րդ մասին կարգավորումների համաձայն՝ դիմումը համարվել է մերժված: Օրենսդրական ակտերն ուժի մեջ են մտել 2021 թվականի հոկտեմբերի 29-ին: Համաձայն այս զեկույցի, ներկայումս իրականացվում են օրենսդրական ակտերի կիրարկման աշխատանքներ:

Ըստ ՖԽՔ-ի մասնակիցների՝ նշված գործողության իրականացման ընթացքի հետ կապված հիմնական բացը շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ոլորտի փորձագետների և քաղաքական ամենատարբեր ուժերի մասնակցության ոչ պատշաճ ապահովումն է, ինչպես նաև փոփոխությունների իրականացման համար հատկացված ոչ ողջամիտ՝ սուղ ժամկետները: Մասնագետ/փորձագետների կարծիքով՝ սա հանգեցրել է ընտրական օրենսգրքում առկա մի շարք բացթողումների, մասնավորապես՝ ԱԺ ընտրություններում վտանգվել է կայուն խորհրդարանական մեծամասնության սկզբունքը, քաղաքական կոալիցիաների ձևավորման կարգի վերաբերյալ իրականացված փոփոխությունները հակասում են քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումների վերաբերյալ սահմանադրական պահանջին, և այլն*:*

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

ՈԼՈՐՏ 5: ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում

Ամփոփագիր Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում			
Հավելված 2	2019 2-րդ կիսամյակ	2020 1-ին կիսամյակ	2020 2-րդ կիսամյակ
Նախատեսված գործողությունների թիվ	**0**	**0**	**9**
որից ժամկետում կատարված՝	0	0	4[14]
որից կատարված ժամկետի որոշակի խախտմամբ	0	0	1
որից չի կատարվել	0	0	4
կատարողական ցուցանիշ	**56%**		

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 2)՝

1. դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման կարգի կատարելագործում
2. բարձրագույն դատական խորհրդի որոշումների ընդունման գործընթացի բարելավում, թափանցիկության և պատճառաբանվածության ապահովում

Գործողություն 1. Դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման նոր՝ միջազգային չափանիշներին համապատասխան կարգի ներդնում, որը, ի թիվս այլնի, պետք է նախատեսի՝

1. կատարելագործել դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման օրենսդրական կանոնակարգումները

2. ապահովել դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման գործընթացների թափանցիկությունը

Գործողություն	Պատասխանատու մարմին	2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ ուղղված՝	ՀՀ ԱՆ, ԲԴԽ (համաձայնությամբ):	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում	**Կատարվել է ժամկետում** 2020 թվականին մշակվել և ԱԺ կողմից 2021

[14] Երկու գործողություններ գնահատվել են կատարված «վերապահումով»:

ա) գնահատման հանձնաժողովի կազմավորման կարգի փոփոխությանը. բ) գնահատման պատճառաբանվածության ապահովմանը. գ) հարցազրույցի փուլում միջազգային առաջատար հոգեբանական ինստիտուտների կողմից կազմված հոգեբանական թեստի անցկացմանը. դ) քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգի ներդրմանը և Բարձրագույն դատական խորհրդի որոշման ընդունման թափանցիկության ապահովմանը. ե) դատավորների այդ թվում՝ սույն ռազմավարությամբ նախատեսված Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածության ապահովմանը		մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակվել և քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել ՀՀ ԱԺ:	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀԱԺ:	թվականի ապրիլի 14-ին ընդունվել է ««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ 331-Ն օրենքը:

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների շրջանակում 2020 թվականին մշակվել և ԱԺ կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունվել է ««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ 331-Ն օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները, որոնցով սահմանվել են դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածության կարգավորումները: Այս գործողությունը ԱՆ-ի կողմից հրապարակված զեկույցում գնահատվել է «կատարված»:

Համաձայն ոլորտային փորձագետներից մեկի հետ խորքային հարցազրույցի՝ դատավորների հավակնորդների գիտելիքների ստուգումը միայն թեստային եղանակով բավարար չէ: Անհրաժեշտ է նաև առաջադրել իրավիճակային խնդիրներ, որոնք ենթադրում են հարցի վերլուծության և եզրակացությունների հանգման կարողությունների ստուգում:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

Գործողություն 2. Բարձրագույն դատական խորհրդի կողմից քվեարկության կարգի թափանցիկության և որոշումներ կայացնելու պատճառաբանվածության պահանջի ամրագրում, ինչպես նաև որոշումներ ընդունելիս ձայների հարաբերակցության վերաբերյալ կարգավորումների վերանայում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ ուղղված՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշումներ ընդունելու գործընթացի բարելավմանը՝ ներառելով այդ որոշումների ընդունման թափանցիկության, պատճառաբանվածության և ընդունման համար անհրաժեշտ ձայների արդյունավետ կառուցակարգեր	ՀՀ ԱՆ, ԲԴԽ (համաձայնությամբ)	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակվել և քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել ՀՀ ԱԺ:	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀԱԺ:	**Կատարվել է ժամկետում** 2020 թվականին մշակվել և ԱԺ կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունվել է ««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ 331-Ն օրենքը:

2020 թվականին մշակվել և ԱԺ կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունվել է ««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ 331-Ն օրենքը:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 2)՝

1. դատավորների կարգավիճակից բխող սոցիալական երաշխիքների ամրապնդում
2. հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացում

Գործողություն 1. Դատավորին տրամադրվող աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացում և կարողությունների զարգացում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Մշակել օրենսդրական փոփոխություններ ուղղված՝ դատավորի աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը:	ՀՀ ԱՆ, ՀՀ ֆինանսների նախարարություն և ԲԴԽ (համաձայնությամբ)	«Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը մշակվել է:	«Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ, ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ և հաստատվել է ՀՀ կառավարության կողմից:	«Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ:	**Կատարվել է ժամկետում (վերապահումով)** «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում կատարվել են համապատասխան փոփոխություններ (14.04.2021թ., ՀՕ-337-Ն)՝ Հակակոռուպցիոն դատարանի, Վերաքննիչ քրեական դատարանի և Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորների մասով, իսկ Վճռաբեկ դատարանի դատավորների մասով շրջանառվել է օրենսդրական փաթեթ:

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում[15], գործողությունը կատարվել է «մասնակի»: Համաձայն այս զեկույցի՝ Հակակոռուպցիոն դատարանի դատավորների Վերաքննիչ քրեական և Վերաքննիչ քաղաքացիական դատարանների մասով կատարված է, իսկ Վճռաբեկ դատարանի դատավորների մասով՝ օրենսդրական փաթեթն ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ԻՀԱ-ին տրամադրված տեղեկության՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում կատարվել են համապատասխան փոփոխություններ (14.04.2021թ., ՀՕ-337-Ն)՝ Հակակոռուպցիոն դատարանի, Վերաքննիչ քրեական դատարանի և Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորների մասով, իսկ Վճռաբեկ դատարանի դատավորների մասով շրջանառվել է օրենսդրական փաթեթ: Այսպիսով, հաշվի առնելով, որ գործողությունն

[15] https://www.moj.am/storage/uploads/hjk1.pdf

իրականացվել է երեք դատարանների մասով, իսկ մեկ դատարանի մասով դեռևս չի ավարտվել, գործողությունը վերապահումով գնահատում է «իրականացվել է ժամկետում»: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատվել է «կատարված է»: Գործողության իրականացման վերաբերյալ այս զեկույցում այլ տեղեկատվություն չի տրամադրվում:

Համաձայն փորձագիտական հարցազրույցների, դատավորների ներկայիս աշխատավարձերը բավարար չեն՝ հատկապես երբ հաշվի է առնվում նրանց ծանրաբեռնվածությունը: Բավարար չէ նաև դատավորներիի աշխատակազմի վարձատրությունը, ինչի արդյունքում նվազում է այսպիսի հաստիքների նկատմամբ հետաքրքրությունը:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում (վերապահումով):**

Գործողություն 2. Դատավորի աշխատակազմի կարողությունների զարգացում, տրամադրվող ֆինանսական և սոցիալական երաշխիքների բարեփոխում և թվաքանակի ավելացում

Գործողություն	Պատասխան ատու մարմին	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Իրականացնել դատավորների վերապատրաստումներ, այդ թվում միջազգային փորձագետների մասնակցությամբ և միջազգային և եվրոպական առաջադեմ փորձի ներկայացմամբ, հետևյալ բնագավառներում՝ ա) կոռուպցիոն, տնտեսական և պաշտոնեական հանցագործությունների քննություն, բ) էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրմանը զուգահեռ կարևորվում է դատավորների՝ էլեկտրոնային կրիչների վրա գտնվող ապացույցների հետ աշխատելու հմտությունների զարգացումը, գ) մասնագիտական վարքագծի կանոններ և էթիկա, դ) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի կոնկրետ հոդվածների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունք: ե) դատավորի դերի, դատական ակտի պատճառաբանվածության, դատավորի անկախության գործնական մարտահրավերների հետ կապված հարցեր:	ՀՀ ԱՆ, ՀՀ արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ):	Մշակվել են համապատասխան վերապատրաստման ծրագրեր, մշակված ծրագրի հիման վրա կազմակերպվում են դատավորների վերապատրաստման դասընթացներ:	Դատավորների վերապատրաստման դաընթացների ծրագրերը մշակված են, իրականացվում են դատավորների վերապատրաստումներ:	**Կատարվել է ժամկետի որոշակի խախտամբ**

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատվել է «կատարված է մասնակի»: Համաձայն այս զեկույցի՝ մշակվել են համապատասխան վերապատրաստման ծրագրերը, մշակված ծրագրի հիման վրա իրականացվել են դատավորների վերապատրաստումները: Նշված թեմաներով վերապատրաստման դասընթացներ մշակվել և իրականացվում են նաև միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ, այդ թվում՝ ԵԽ-ի HELP հեռավար հարթակի շրջանակներում: Դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման 2020թ. ծրագրով համապատասխան բնագավառներով վերապատրաստման ժամանակացույց է սահմանվել 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները: Գործողության մասնակի կատարումը պայմանավորված է համավարակով, ինչպես նաև համապատասխան դասընթացներով վերապատրաստումների իրականացման ժամանակացույցով:

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, գործողությունը «կատարված է»: Նշված զեկույցից տեղեկանում ենք, որ Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների շրջանակում 2020 թվականին մշակվել և Ազգային ժողովի կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունվել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները, որոնցով սահմանվել են դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածության կարգավորումները: Հաշվի առնելով հակակոռուպցիոն դատարանների դերը և ստեղծման գործընթացում առավելագույն թափանցիկություն ապահովելու անհրաժեշտությունը՝ Օրենքով առաջին կազմի համար սահմանվել է միջազգային փորձագետների ներգրավման մեխանիզմ: ԲԴԽ-ի կողմից դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկություն իրականացնելիս փորձագետների կարծիքները հաշվի են առնվելու: Վերը ասվածը ամրագրվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի եզրափակիչ մասով և անցումային դրույթներով, համաձայն որոնց՝ Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է հակակոռուպցիոն դատարանի դատավորների և վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարանների համապատասխան մասնագիտացման առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին փորձագետների ներգրավման կարգը: Օրենքի եզրափակիչ մասի և անցումային դրույթների 11-րդ մասի համաձայն՝ որպես փորձագետ կարող է ընտրվել հակակոռուպցիոն ոլորտում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն ունեցող երեք անձ: Փորձագետներից մեկը պետք է լինի ազգային փորձագետ, իսկ երկուսը՝ առաջադրվեն վերջին երկու տարում հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող միջազգային կամ միջկառավարական կազմակերպությունների կամ միավորումների կողմից: Նշված օրենսդրական ակտերի Սահմանադրության համապատասխանության հարցը Նախագահի դիմումի հիման վրա քննարկվել է Սահմանադրական դատարանում, որի շրջանակում դիտարկվել է միայն միջազգային փորձագետ ներգրավելու սահմանադրականության հարցը: Գործի քննությունը տեղի է ունեցել 2021 թվականի հոկտեմբերի 12-ին, որի արդյունքում ձայների հավասարության հետևանքով, ըստ էության, որոշում չի ընդունվել, և «Սահմանադրական դատարանի մասին»

սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասի կարգավորումների համաձայն՝ դիմումը համարվել է մերժված: Օրենսդրական ակտերն ուժի մեջ են մտել 2021 թվականի հոկտեմբերի 29-ին: Ներկայումս իրականացվում են նշված օրենսդրական ակտերի կիրարկման աշխատանքները:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետի որոշակի խախտմամբ:**

Գործողություն	Պատասխանատու մարմին	2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Փոփոխություններ կատարել համապատասխան իրավական ակտերում՝ ուղղված դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացմանը:	ՀՀ ԱՆ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ԲԴԽ (համաձայնությամբ) :	Դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը մշակվել են, քննարկվել են շահագրգիռ կողմերի հետ, դրվել են հանրային քննարկման և ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:	Դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը հաստատվել են ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ՀՀ ԱԺ:	Դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ:	**Գործողությունը չի կատարվել**

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատվել է «կատարված է մասնակի»: Համաձայն այս զեկույցի՝ ԲԴԽ-ի առաջարկության հիման վրա կազմվել է Կառավարության որոշման նախագիծ ուղղված վերաքննիչ վարչական դատարանը 6 դատավորով և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 6 դատավորով ավելացնելուն և աշխատանքային կարգով քննարկվել է Վարչապետի աշխատակազմի հետ: Ֆինանսների նախարարության հետ քննարկվել են նաև ֆինանսավորման հնարավոր եղանակները: Ակնկալվում է լրացուցիչ հանձնարարական հարցի հետագա քննարկման համար: *Համաձայն Ֆինանսների նախարարության կողմից ԻՀԱ-ին տրամադրած տեղեկատվության*՝ դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացման նպատակով համապատասխան փոփոխություններ են կատարվել «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում (14.04.2021թ. ՀՕ-331-Ն) և ՀՀ վարչապետի 11.06.2018թ. N 706-Ա որոշման մեջ (ՀՀ վարչապետի 14.09.2021թ. N 990-Ա որոշում):

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, գործողությունը «կատարված է մասնակի»: 03.02.2021թ. ՀՕ-265-Ն սահմանադրական օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ընդունվել է ՀՀ վարչապետի 14.09.2021թ. N 990-Ա որոշումը, իսկ 14.04.2021թ. ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ Հակակոռուպցիոն դատարանի վերաբերյալ ՀՀ վարչապետի որոշման նախագիծը գտնվում է քննարկման փուլում:

Ինչպես արդեն նշվել է, դատարանների ծանրաբեռնվածությունը մեծ է, ինչն ահնրաժեշտություն է առաջացնում դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացման:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Գործողություն	Պատասխանատու մարմին	2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Փոփոխություններ կատարել համապատասխան իրավական ակտերում՝ ուղղված դատավորի աշխատակազմի աշխատավարձերի բարձրացմանը:	ՀՀ ԱՆ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ԲԴԽ (համաձայնությամբ):	Դատավորի աշխատակազմի աշխատավարձերի բարձրացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը մշակվել են, քննարկվել են շահագրգիռ կողմերի հետ, դրվել են հանրային քննարկման և ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:	Դատավորի աշխատակազմի աշխատա-վարձերի բարձրացման նպատակով համապատաս-խան իրավական ակտերում փոփոխություն-ների կատարման նախագծերը հաստատվել են ՀՀ կառավա-րության կողմից և ներկայացվել ՀՀ ԱԺ:	Դատավորի աշխատակազմի աշխատավարձերի բարձրացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ:	**Գործողությունը չի կատարվել**

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը «կատարված չէ»: Ներկայումս քննարկումներ են իրականացվում դատավորի աշխատակազմի աշխատավարձի բարձրացման հարցի նպատակահարմարության վերաբերյալ:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Գործողություն 3. Դատարանների շենքերի և նյութատեխնիկական պայմանների բարելավում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Դատարաններին ապահովել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով:	ՀՀ ԱՆ, ՀՀ ֆինանսների նախարարություն և ԲԴԽ (համաձայնությամբ):	Սկսվել է դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների բարելավման կարիքների գնահատումը:	Ավարտվել է դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների բարելավման կարիքների գնահատումը, դատարանները սկսել են ապահովվել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով՝ ըստ սահմանված առաջնահերթությունների և ժամանակացույցի:	Ավարտվել է դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների բարելավման կարիքների գնահատումը, դատարանները սկսել են ապահովվել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով՝ ըստ սահմանված առաջնահերթությունների և ժամանակացույցի:	**Գործողությունը կատարված է (վերապահումով)**

Համաձայն Ֆինանսների նախարարության կողմից ԻՀԱ-ին տրամադրած տեղեկատվության՝ Հակակոռուպցիոն դատարանի շենքի վերակառուցման նպատակով Երևանի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան 5/1 հասցեում տեղակայված շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների համար ՀՀ կառավարության 27.11.2020թ-ի N 1897-Ն որոշմամբ հատկացվել է 5.0 մլն դրամ՝ որպես կանխավճար: ՀՀ դատարանների գործունեության համար նյութատեխնիկական բազայով ապահովման նպատակով ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է՝ 2019թ. շուրջ 704.0 մլն դրամ, որից փաստացի ծախսվել է 627.1 մլն դրամ և 2020թ. շուրջ 629.5 մլն դրամ, որից փաստացի ծախսվել է 441.0 մլն դրամ: 2021 թվականին ՀՀ կառավարության 25.02.2021թ. N 258-Ն որոշմամբ, ԵՄ դրամաշնորհային միջոցների հաշվին, դատարաններին նյութատեխնիկական բազայով ապահովման նպատակով հատկացվել է շուրջ 444.0 մլն դրամ:

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում,[16] գործողությունը «կատարված է մասնակի»:

Դատարանների շենքային պայմանների ապահովման նպատակով կատարվել են մի շարք աշխատանքներ: Մասնավորապես՝

- Քաղաք Երևան, Մասիսյան թաղամաս, 12 փողոց, հասցեում գտնվող, ՀՀ ԱՆ-ը ամրակցված հողատարածքում նախատեսվում է իրականացնել Հակակոռուպցիոն դատարանի նոր շենքի կառուցման աշխատանքներ:
- Քաղաք Երևան, Հալաբյան 41ա հասցում գտնվող շենքի 10-13-րդ հարկերի վերանորոգման աշխատանքներ: Տվյալ հասցեում նախատեսված է թվով 10 դատավորի և նրանց աշխատակազմի համար համապատասխան աշխատասենյակներ, ինչպես նաև թվով 10 նիստերի դահլիճ:
- Քաղաք Երևան, Գեղարքունիքի Նժդեհի 23/1 հասցեում գտնվող շենքն ամրակցվել է Արդարադատության նախարարությանը: Տվյալ շենքում նախատեսված է թվով 8 դատավորի և նրանց աշխատակազմի համար համապատասխան աշխատասենյակներ, ինչպես նաև թվով 8 նիստերի դահլիճ:

ՀՀ դատարանների շենքերի ընթացիկ վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքները կրում են շարունակական բնույթ, որն ապահովվում է Դատական դեպարտամենտի կողմից՝ տվյալ տարվա համար ՀՀ պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին և շրջանակներում: Համաձայն ոլորտային փորձագետի, այս պահին դեռևս շարունակում է արդիական մնալ դատարանների շենքային պայմանների խնդիրը: Շատ դատարաններում է նկատվում դահլիճների պակասի խնդիրը, որի արդյունքում, օրինակ, դատավորները ստիպված են միմյանց հետ համաձայնեցնել նշանակվող նիստերի ժամանակացույցը:

Այսպիսով՝ **Գործողությունը գնահատվում է կատարված (վերապահումով):**

Գործողություն	Պատասխանատու մարմին	2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Դատարաններին ապահովել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով:	ՀՀ ԱՆ, ՀՀ ֆինանսների նախարարություն և ԲԴԽ (համաձայնությամբ):	Սկսվել է դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկի մշակումը:	Ավարտվել է դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկի մշակումը, սահմանվել են առաջնահերթությունները և տրամադրման ժամանակացույցը,	Դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների բարելավման կարիքների գնահատման, առաջնահերթությունները և ժամանակացույցը սահմանելու վերաբերյալ	**Գործողությունը չի կատարվել**

[16] https://www.moj.am/storage/uploads/hjk1.pdf

			դատարաններն սկսել են ապահովվել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով՝ ըստ սահմանված առաջնահերթությունների և ժամանակացույցի:	տեղեկանք և սկսված շինարարական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթեր:	

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատվել է «կատարված է մասնակի»: Համաձայն այս զեկույցի՝ դատարանների տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով ՀՀ 2020թ պետական բյուջեով նախատեսվել է 629.5 մլն դրամ, որից շուրջ 314.8 մլն դրամը 2020թ 1-ին կիսամյակում: Միաժամանակ, հակակոռուպցիոն դատարանների նյութատեխնիկական կարիքների գնահատման արդյունքում Հայաստանի Հանրապետության 2021-2023 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի «Նոր նախաձեռնություններ» հավելվածում նախատեսվել են հակակոռուպցիոն դատարանների կարիքների համար անհրաժեշտ միջոցներ:

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, գործողությունը «կատարված է մասնակի»:

Զեկույցի համաձայն՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ, ԵՄ դրամաշնորհային ծրագրերի հաշվին, դատարանների գործունեության համար նյութատեխնիկական բազայով ապահովման նպատկով հատկացվել է շուրջ 440.0 մլն դրամ:

Այսպիսով, քանի որ գործողությունն անգամ ժամկետների խախտմամբ չի կատարվել ամբողջությամբ, ապա այս զեկույցի գնահատման մեթոդաբանության համաձայն այն գնահատվում է չկատարված:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Գործողություն 4. Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումների ձեռնարկում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն	ՀՀ ԱՆ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ԲԴԽ	Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումների ձեռնարկում	Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն	**Գործողությունը չի կատարվել**

ուղղված իրազեկման միջոցառումների ձեռնարկում:	(համաձայնությամբ):	Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումների ձեռնարկում:	ուղղված իրազեկման միջոցառումների ծրագիրը մշակված է, միջոցառումներն իրականացման փուլում են:	

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատվել է «կատարված է»: Համաձայն զեկույցի՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի շրջանակներում սկսվել են դատահիրավական բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված բարեփոխումների ազդեցության մասով իրազեկման արշավներ:

Ներկայումս այս ուղղությամբ մշակվում են լայնածավալ ու արդիական էլեկտրոնային հաղորդակցության ծրագրեր, փորձարկվում է դատական իշխանության ընդգրկուն ու թափանցիկ պաշտոնական կայքը, որի ամբողջական և պատշաճ գործարկման նպատակով կազմված՝ Դատական օրենսգրքի պատվիրակված լիազորությունների իրացման շրջանակներում, թվով 3 որոշումների նախագծերը ներկայումս գտնվում են քննարկման վերջնափուլում:

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, գործողությունը «կատարված է մասնակի»: Ինչպես նշվում է զեկույցում, այս ուղղությամբ ներկայումս բանակցություններ են տարվում միջազգային գործընկերի հետ՝ արդիական էլեկտրոնային հաղորդակցության ծրագրերի ներդրման և գործարկման նպատակով:

Համաձայն այս գործողության մասով շահագրգիռ կողմերի հետ ՖԽՔ-ի արդյունքների՝ հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումներ չեն իրականացվել: Նույնի մասին են վկայում նաև կատարած գրասենյակային հետազոտությունները: Բացի այս, շահագրգիռ կողմերի հետ ՖԽՔ-ի ընթացքում փորձագետը բերեց պրակտիկ օրինակ՝ նշելով, որ այս Ռազմավարության հիմնական պատասխանատուները փաստացի ՀՀ ԱՆ-ը և ԲԴԽ-ն են, սակայն ԲԴԽ-ն բացարձակապես բաց չէ հաղորդակցության համար և չի տրամադրում հարցվող տեղեկատվությունը: Վերջինս նաև հրաժարվել է մասնակցել ՖԽՔ-ներին:

Հաջորդ խնդիրը՝ քաղաքացի-դատական իշխանության, գործադիր իշխանության մարմին հաղորդակցության գործընթացի ոչ պատշաճ կերպով իրականացումն է: Հաղորդակցության խնդիրներն առկա են բոլոր ասպեկտներում, սակայն լուծումները բացակայում են: Այս մասով, հատկապես ուսուցանելի կարող է լինել ԱՄՆ-ի դատական պրակտիկայի փորձը, որը կապված է դատական ակտերի պատճառաբանվածության հետ: Մասնավորապես, ԱՄՆ-ի օրինակն այս մասով ուսումնասիրելիս տեսնում ենք, որ դատական ակտի պատճառաբանություններից զատ, դատավորը դատական ակտը կայացնելուց հետո նաև զրուցում է կողմերի հետ, փորձում է նրանց բացատրել՝ ինչու պահանջը չբավարարվեց կամ բավարարվեց մասնակի, այսինքն պարզաբանում է կայացրած դատական ակտը: Սա դատական իշխանության հեղինակությունն ամրապնդելու համար է իրականացվում: Պատճառաբանությունն այն մեթոդն է, որով հետագայում կարող է նաև ստուգման ենթարկվել տվյալ

դատական ակտը: ՀՀ-ում դատական ակտերը չափազանց ծավալուն են, սակայն բովանդակային առումով քաղաքացու կամ նրա փաստաբանի կողմից բարձրացված հարցը պատշաճ կերպով չի բացահայտվում, այսինքն՝ հաճախ դատավորը դատական ակտում ներառում է ամեն ինչ, բացի ելակետային խնդրից, որը տվյալ դեպքում վերաբերելի և կարևոր է կողմերի համար: Ըստ ՖԽՔ-ի մասնակիցների՝ այս առումով ոչ թե օրենսդրական բարեփոխման, այլ պրակտիկայի բարելավման խնդիր է առկա: ՄԻԵԴ-ընակա այս մասով դիրքորոշում է հայտնել: Այն է՝ փաստաբանի կողմից բարձրացված բոլոր հարցերին չէ, որ դատարանը պետք է անդրադառնա և անպայմանորեն պատճառաբանի դատական ակտում: Նման պահանջ դնել հնարավոր չէ, բայց 2-3 տարի տևող դատական պրոցեսի պարագայում, երբ փաստաբանը այդ տարիների ընթացքում մշտապես նույն մեկ կամ մի քանի հարցերն է բարձրացնում, ապա դրանց դատավորի կողմից անգամ մեկ նախադասությամբ չանդրադառնալը պետք է կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսանա: Սակայն պրակտիկայում նման կարգավորումներ ներդնելը բարդ և միևնույն ժամանակ զգայուն խնդիր է, քանզի այն կարող է լծակ և ճնշման մեթոդ դառնալ դատավորի նկատմամբ, ինչն անընդունելի է:

Այս բերված օրինակը տեղեկատվության հաղորդման անմիջական, մարդակենտրոն ձև է, որը կարող է քաղաքացիների շրջանում նվազեցնել դատական իշխանությունից դժգոհության մակարդակը: Ռազմավարության առումով մեր պետության այժմյան իրականության պարագայում նկատելի է, որ հիմնական, վերջնական նպատակը գործողության ձևական կատարումն է, արդյունքը չափվում է գործողության կատարված/չկատարված լինելով: Իրականում տվյալ գործողությունները կարճաժամկետ՝ գործողության մակարդակում, միջնաժամկետ՝ խնդրի լուծման մակարդակում, և երկարաժամկետ՝ նպատակին և որոշակի ազդեցության հասնելու մակարդակում, չեն չափվում: Ցավալիորեն, որդեգրված է այնպիսի մոտեցում, որ Կառավարությունը, իրավասու պետական մարմինները չեն լուծում բուն պատճառը, այլ պայքարում են հետևանքների դեմ:

Փորձագետի կողմից ներկայացվեց այն կարծիքը, որ քաղաքական մակարդակում միտում կա նվազեցնել դատարանների նկատմամբ հասարակության վստահությունը, որն արտահայտվում է, օրինակ, ԱԺ ամբիոնից մի շարք գործող դատավորների պիտակավորմամբ, դատարանները որպես կոռումպացված կառույցներ ներկայացնելով: Համաձայն փորձագետի, դատարանների նկատմամբ որոշակի վստահության աղբյուր էր DataLex համակարգը, որը սակայն, ներկայումս պատշաճ չի գործում:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Նպատակներ 5, 6 և 7. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում և կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ

Ամփոփագիր
Նպատակներ 5, 6 և 7. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում և կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ

Հավելված 2	2019 2-րդ կիսամյակ	2020 1-ին կիսամյակ	2020 2-րդ կիսամյակ
Նախատեսված գործողությունների թիվ	**0**	**0**	**6**
որից ժամկետում կատարված՝	0	0	5
առկա չէ բավարար տեղեկատվություն	0	0	1
կատարողական ցուցանիշ	**83%**		

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 2)՝

1. դատավորներին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջազգային չափանիշներին համապատասխան հիմքերի և ընթացակարգերի ներդնում,
2. դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամի բարեվարքության գնահատման հավասարակշռված կառուցակարգի ներդնում
3. դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի համապատասխանեցում կոռուպցիայի հաղթահարման նպատակին

Գործողություն 1. Դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության գնահատման համար անհրաժեշտ՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջազգային չափանիշներին համապատասխան օրենսդրական հիմքերի մշակում

Գործողություն	Պատասխան ատու մարմին	2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ ուղղված դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի կատարելագործմանը, որոնք, ի թիվս այլնի, ներառում են. 1. հստակեցնել դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի	ՀՀ ԱՆ	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակվել և քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ուղարկվել է ՀՀ	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից, ուղարկվել է	«Հայատանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը և հարակից նախագծերի	**Կատարվել է ժամկետում**

անդամին լիազորությունների դադարեցման համար հիմք հանդիսացող էական կարգապահական խախտումների ցանկը. 2. հստակեցնել դատական սխալը դատավորի կողմից իր մասնագիտական գործունեության ընթացքում մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումից տարանջատելու հիմքերը. 3. հստակեցնել դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի վարքագծի կանոնները՝ դրանցից հանելով այն կանոնները, որոնք ձևակերպված են ոչ հստակ կամ որոնք բնույթով ոչ թե կարգապահական, այլ էթիկայի կանոններ են:		վարչապետի աշխատակազմ:	ՀՀ ԱԺ և քննարկվել է խմբակցությունների հետ:	փաթեթը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունն իրականացվել է ժամկետում: Շահակիցների հետ անցկացված ՖԽՔ-ի շրջանակներում մասնակիցներից մեկը ընդգծեց՝ «Մշտապես որոշակի օրենսդրական փոփոխություններ են կատարվում, մշակվում են համապատասխան փաթեթներ, որոնք հաճախ ժամանակ ներկայացվում են զարգացած որոշ երկրների կամ կազմակերպությունների փորձի և օժանդակության ներքո, սակայն մեզ մոտ խնդիրը բարեխղճության պակասի մեջ է: Իհարկե, կան բարեխիղճ, պատասխանատվության զգացում ունեցող դատավորներ, սակայն դրան հակառակ՝ կան և անբարեխիղճ բազմաթիվ դատավորներ: Պայմանականորեն առանձնացված նշյալ 2-րդ խմբի դատավորները դրական են արձագանքում բոլոր իրականացվող փոփոխություններին, սակայն իրենց գործողություններում ոչինչ չեն փոխում: 1-ին խմբի դատավորները շատ հաճախ, չհարմարվելով այդ նոր փոփոխություններին, լքում են համակարգը:»:

Համաձայն ոլորտային փորձագետի՝ բարեվարքության ստուգման կառուցակարգերի մշակումն ուժեղ հիմքերի վրա չէ: Դա հիմնականում ենթադրում է ֆինանսական աղբյուրների ստուգում: Մյուս կողմից, խնդրահարույց է Արդարադատության նախարարի կողմից դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի հարցումը, քանի որ սա միջամտություն է դատական իշխանությանը:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

Գործողություն 2. Դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության գնահատումն իրականացնելու համար անհրաժեշտ կառուցակարգերի ներդնում

Գործողություն	Պատասխան ատու մարմին	2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Հստակեցնել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում՝ 1.կարգապահական վարույթի և դատավորին, Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացակարգերը. 2.դատավորին, Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման ընթացակարգը. 3. ընդլայնել Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորին, Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկման հետ կապված լիազորությունները:	ՀՀ ԱՆ	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է, քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	**Կատարվել է ժամկետում**

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունն իրականացվել է ժամկետում:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

Գործողություն	Պատասխանատու մարմին	2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնք նախատեսում են՝ ա. դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների ցանկը համալրել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովով. բ. Կարգապահական հարցերի հանձնաժողովի փոխարեն ստեղծել Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, որի անդամները կընտրվեն ոչ թե հինգ, այլ երկու տարով և որը կընդգրկի ոչ միայն դատավորներին, այլև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ-ներին:	ՀՀ ԱՆ	Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն տրված չէ, իսկ կարգապահական վարույթ հարուցելու իրավասությունը տրված է միայն դատավորներից բաղկացած հանձնաժողովին, որը կազմավորվում է 5 տարի ժամկետով:	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրա-կան օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակվել և քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել ՀՀ ԱԺ:	**Կատարվել է ժամկետում**

Համաձայն 2020 թվականի առաջին կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը «կատարված է»: Զեկույցում նշվում է, որ դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների վերակազմավորման իրավական հիմքերը նախատեսվել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, սակայն որոշ առանձնահատկություններով (տարբերություններով): Մասնավորապես, Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամների նախատեսված 2 տարվա պաշտոնավարման ժամկետի փոխարեն սահմանվել է պաշտոնավարման 4 տարվա ժամկետ:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

Գործողություն	Պատասխանատու մարմին	2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներում հստակեցնել դատավորի վարքագծի կանոնները և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, ավելացնել այնպիսի վարքագծի կանոններ, որոնց խախտումը կասկածի տակ է դնում դատավորի անկախությունը, անկողմնակալությունը և անկաշառությունը, սահմանել դատավորների բարեվարքության գնահատման համար անհրաժեշտ կառուցակարգեր՝ ուղղված. 1.ՀՀ բոլոր դատավորների, Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից օրենքով սահմանված ժամկետում իրենց գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնելուն. 2.Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ՀՀ-ում գործող բոլոր դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրու-թյանը. 3. Բարձրագույն դատական խորհրդի անդամների՝ բարեվարքության տեսանկյունից խնդրահարույց հայտարարագրերի վերհանմանը, դրանց հիման վրա կարգապահական պատասխանատվության ենթարկելու	ՀՀ ԱՆ, ԿԿՀ (համաձայնությամբ):	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերը մշակվել և քննարկվել են շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ուղարկվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերը հաստատվել են ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ՀՀ ԱԺ:	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀԱԺ:	**Կատարվել է ժամկետում**

հարցի քննարկման համար համա-պատասխան նյութերը ԲԴԽ ներկայացնելուն. 4. Դատավորների՝ բարեվարքության տեսանկյունից խնդրահարույց հայտարարագրերի վերհանմանը, դրանց հիման վրա կարգապահական վարույթի հարուցմանը և ԲԴԽ ներկայացնելուն. 6.ԲԴԽ կողմից վերոգրյալ հայտարարագրերի արդյունավետ քննությանը:					

Համաձայն 2020 թվականի առաջին կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունն իրականացվել է ժամկետում: 2020 թվականի ապրիլից ԿԿՀ-ն իրականացրել է ԲԴԽ անդամների հայտարարագրերի վերլուծություն, որի արդյունքների հիման վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործողությունների կատարումն ընթացքի մեջ է: ԿԿՀ-ն ուսումնասիրել է ԲԴԽ 9 անդամների, նրանց ընտանիքի անդամների և համատեղ բնակվող անձանց 105 հայտարարագիր: 2020 թվականի մայիսից ԿԿՀ-ն վերլուծել է Սահմանադրական դատարանի անդամ/դատավորների, նրանց ընտանիքի անդամների և համատեղ բնակվող անձանց 105 հայտարարագիր: 2020 թվականի հունիսին ԿԿՀ-ն մշակել է գործող դատավորների հայտարարագրերի վերլուծության ընտրանքի սկզբունքները, որի հիման վրա ընթացքի մեջ է գործող դատավորների հայտարարագրերի վերլուծության գործընթացը:

Համաձայն շահագրգիռ մարմինների և ՔՀԿ-ների հետ ՖԽՔ-ների արդյունքների՝ այս գործողության շրջանակներում հիմնական և միակ նախաձեռնված փոփոխությունը, որի նախագիծն արդեն առկա է և շուտով կներկայացվի ՀՀ ԱՆ, վերաբերում է բարեվարքության եզրակացությունների եզրափակիչ մասի հրապարակմանը: Այն անձնական տվյալներ չի պարունակելու և ներկայացնելու է ԿԿՀ-ի դատողությունները տվյալ անձի վերաբերյալ, որը հրապարակվելու է որոշման կայացումից հետո: Մյուս փոփոխությունների գործիքակազմի մասով նշվեց, որ դրանք հիմնականում տեխնիկական բնույթ են կրում, մասնավորապես՝

- միջազգային գործընկերների հետ վերանայվում է բարեվարքության ստուգման մեթոդաբանությունը:
- Համապատասխան թեկնածուների կողմից լրացվող փոփոխված բարեվարքության հարցաթերթիկը, որն առավել մատչելի է լրացման տեսանկյունից, շուտով կհաստատվի:
- Հետագայում կիրականացվեն քննարկումներ՝ ինչպես համադրել բարեվարքության գործընթացը հայտարարագրերի հետ, երբ արդեն իսկ կլինի հայտարարագրման միասնական համակարգը: Այժմ աշխատանքներ են իրականացվում դոնորների, մրցույթը հաղթած կազմակերպության հետ, որպեսզի հնարավոր լինի հայտարարագրերի միասնական համակարգում առանձին դարակ ունենալ

բարեվարքության համար: Այն հնարավորություն կտա մեկ վայրում լրացնել հարցաթերթիկը, որից հետո տվյալների բազան ինքնուրույն կիրականացնի ստուգում՝ տվյալների մեծ մասը համադրելով այլ տվյալների հետ: Արդյունքում գործընթացը կիրականացվի առավել արագ և արդյունավետ:

Բացի այդ, ըստ շահագրգիռ մարմինների հետ կայացած ՖԽՔ-ի շրջանակներում քննարկվեց բոլոր դատավորների բարեվարքության ստուգման հարցը, որի արդյունքում պարզ դարձավ, որ ԿԿՀ-ն դեկտեմբերի 31-ի դրությամբ 129 դատավորի գույքային դրություն է ստուգել: Նախատեսվում է, որ 2022 թվականի մայիսի 1-ի դրությամբ մնացած դատավորների համապատասխան ստուգման արդյունքները նույնպես կլինեն:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

Գործողություն	Պատասխանատու մարմին	2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
«Հայաստանի Հանրապետու-թյան դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություն՝ նպատակ ունենալով Կարգապահական հարցերի հանձնաժողովի փոխարեն ստեղծել Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, որի անդամները կընտրվեն ոչ թե հինգ, այլ երկու տարով և որը կընդգրկի ոչ միայն դատավորներին, այլև Մարդու իրավունքների պաշտպանի մեկ և այն հասարակական կազմակերպությունների երկու ներկայացուցիչներ, որոնց կանոնադրական նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանությունը կամ դատական իշխանության հանրային հաշվետվողականության բարձրացմանն ուղղված գործունեությունը և որոնք վերջին հինգ տարիներին իրականացնում են նման գործունեություն:	ՀՀ ԱՆ, ԿԿՀ (համաձայնությամբ)	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակվել և քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ:	**Կատարվել է ժամկետում**

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունն իրականացվել է ժամկետում:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվական	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Վերապատրաստել 1.ԲԴԽ անդամներին (անհրաժեշտության դեպքում այդ նպատակով կատարելով օրենսդրական փոփոխություններ)՝ նպատակ ունենալով զարգացնել նրանց կարողությունները կատարված օրենսդրական փոփոխությունների և ներդրված նոր մեխանիզմների կիրառման բնագավառում. 2.Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամներին՝ նպատակ ունենալով զարգացնել նրանց կարողությունները կատարված օրենսդրական փոփոխությունների և ներդրված նոր մեխանիզմների կիրառման բնագավառում:	ՀՀ ԱՆ, ՀՀ արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ), ԿԿՀ (համաձայնությամբ)	Կազմվել են վերապատրաստումների ձեռնարկներ, ընտրվել են վերապատրաստում-ներն անցկացնող դասընթացավարները, կայացել են ԲԴԽ և ԿԿՀ անդամների վերապատրաստումներ:	Կայացել են ԲԴԽ և ԿԿՀ անդամների վերապատրաստումներ:	**Գործողությունը գնահատելու համար առկա չէ բավարար տեղեկատվություն**

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը «կատարվել է մասնակի»: ԿԿՀ-ը 2020 թվականի մարտի 25-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում կատարված փոփոխություններից հետո ԵՄ, ԵԽ, ԱՄՆ ՄԶԳ ծրագրի փորձագետների հետ համատեղ կազմակերպել է մի շարք քննարկումներ, որի շրջանակներում ներկայացվել են օրենսդրական փոփոխությունների հիման վրա իրականացվող գործողությունները, մասնավորապես՝

1. դատավորի թեկնածուի հավակնորդների բարեվարքության ստուգումը և մարդու՝ անձնական կյանքի անձեռնմխելիության, անձնական կյանքը հարգելու իրավունքը,

2. ԲԴԽ անդամների, ՍԴ անդամների, գործող դատավորների գույքային ստուգում և դրա հիման վրա իրականացվող գործողությունները՝ տվյալների հավաքագրում, տվյալների օգտագործում և պահպանում,

3. 2020 թվականի ԿԿՀ-ի մասնակցել են Միջազգային Իրավական Համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հայաստանյան գրասենյակի կողմից ԲԴԽ-ի և ԿԿՀ-ի անդամների համար կազմակերպված սեմինարին, որի շրջանակներում ներկայացվել են դատավորների պաշտոնին առաջադրվող պահանջները բարեվարքության տեսանկյունից:

Ըստ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ԻՀԱ-ին տրամադրած տեղեկատվության՝ ԿԿՀ անդամների հմտությունների զարգացման ուղղությամբ իրականացվել են մի շարք ծրագրեր և դասընթացներ, մասնավորապես՝

ա) ԵԽ/ԵՄ արդյունավետ կառավարման գործընկերության ծրագրի շրջանակներում շրջանակներում 2021 թվականի ապրիլի 21-ին կայացել է «Գույքի հայտարարագրերի էլեկտրոնային համակարգ և կարմիր դրոշակներ» խորագրով տարածաշրջանային աշխատաժողով, որին մասնակցել են ԿԿՀ 5 աշխատակից և 2 անդամ:

բ) 2021 թվականի մայիսի 13-ին կայացել է ԵՄ/ԵԽ գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ) ծրագրային ձևաչափի երկրորդ փուլի «Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում» ծրագրի «Պետական պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերի վերլուծության գործընթացը» խորագրով դասընթաց:

գ) 2021 թվականի հունիսի 24-25-ը կայացել է «Իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների թափանցիկության խթանումը» խորագրով միջազգային առցանց աշխատաժողով, որին մասնակցել է ԿԿՀ-ի 2 անդամ:

Ինչպես նաև 2021 թվականի փետրվարի 26-ին տեղի ունեցած «Բարեվարքության ստուգում. Հայաստանյան փորձ, ձեռքբերումներ և բարելավման հեռանկարներ» աշխատանքային քննարկման (մասնակիցներ՝ ՀՀ ԱՆ, Գլխավոր դատախազության, ԲԴԽ, ԱԺ ներկայացուցիչներ, ԱՄՆ ՄԶԳ, ԵԽ-ի երևանյան գրասենյակի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի փորձագետներ և ներկայացուցիչներ) արդյունքում ձևավորվել է աշխատանքային խումբ, որի աշխատանքների հիման վրա վերամշակվել և կատարելագործվել է «Դատավորների թեկնածուների հավակնորդների բարեվարքության ստուգման մեթոդաբանությունը»:

Այսպիսով, թեև որոշակի տեղեկատվություն առկա է ԿԿՀ-ի անդամների վերապատրաստումների վերաբերյալ, սակայն ԲԴԽ-ի կողմից իր անդամների վերապատրաստումների վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել, ուստի այս գործողության իրականացումը ժամկետների համապատասխանության տեսանկյունից հնարավոր չէ:

Այսպիսով՝ **Գործողությունը գնահատելու համար առկա չէ բավարար տեղեկատվություն:**

Նպատակ 6. Դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում

Ամփոփագիր Նպատակ 6. Դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում	
Հավելված 3	**2021 թվական**
Նախատեսված գործողությունների թիվ	**1**
որից ժամկետում կատարված՝	0
որից չի կատարվել	1
կատարողական ցուցանիշ	**0%**

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 3)՝

- դատական համակարգի գործունեության վերաբերյալ հաշվետվությունների և վիճակագրության հրապարակում:

Գործողություն 1. Ներդնել հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգ

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվական	Ստացված արդյունք
Ներդնել հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգ:	ՀՀ ԱՆ, ԲԴԽ (համաձայնությամբ)	Մշակվել են հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգի օրենսդրական հիմքերը և ծրագրային ապահովումը:	**Գործողությունը չի կատարվել** Զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգերը ներդրված չեն

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, գործողությունը կատարված է մասնակի:

Զեկույցում նշված է, որի կատարվում են օրենսդրական հիմքերի մշակման և ծառայությունների ապահովման աշխատանքներ: Այնուամենայնիվ, ինչպես կարելի է եզրակացնել գործողության իրականացման համար պատասխանատու պետական մարմինների և այլ շահագրգիռ կողմերի հետ ֆոկուս խմբային քննարկումների և գրասենյակային հետազոտությունների/ուսումնասիրությունների արդյունքներից, այս գործողության իրականացման ուղղությամբ էական քայլեր չեն ձեռնարկվել:

Փորձագետի կարծիքով՝ հանրային հաշվետվողականության լավագույն ձևը որևէ հարթակի գործարկումն է, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի կկարողանա տեսնել կոնկրետ դատական գործերով դատավորների դատական ակտերը: Պարզապես վիճակագրության հրապարակումը բավարար և նպատակային չէ դատարանների նկատմամբ վստահության բարձրացման տեսանկյունից: Այս նպատակին հասնելու համար փորձագետն առաջարկում է զարգացնել DataLex համակարգը:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Նպատակ 8. Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում

Ամփոփագիր Նպատակ 8. Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում	
Հավելված 3	**2021թ" 2-րդ կիսամյակ**
Նախատեսված գործողությունների թիվ	**3**
որից ժամկետում կատարված՝	1
որից չի կատարվել	2
կատարողական ցուցանիշ	**33%**

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 3)՝

1. դատարանների ծանրաբեռնվածության նվազեցում և դատական քննության ողջամիտ ժամկետի ապահովում
2. դատավորների և նրանց աշխատակազմի կարողությունների զարգացում

Գործողություն 1. Դատավորների և դատավորների օգնականների թվի ավելացում, աշխատակազմի ընդլայնում տարբեր ոլորտի մասնագետներով

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվական	Ստացված արդյունք
Դատավորների և դատավորների օգնականների թվի ավելացում, աշխատակազմի ընդլայնում:	ՀՀ ԱՆ, ԲԴԽ (համաձայնությամբ)	Մշակվել է դատավորների և դատավորների օգնականների թվի ավելացմանն ուղղված իրավական ակտի նախագիծը:	**Գործողությունը ժամկետում չի կատարվել**

Նշենք, որ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի Հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշմամբ 2021 թվականին կատարման ենթակա միջոցառումների իրականացման մասին» մոնիթորինգային զեկույցում գործողությունը գնահատվել է «կատարված է մասնակի»:

Վերոնշյալ զեկույցի համաձայն՝

- ՀՀ ԱԺ-ի կողմից 2021թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները, որոնցով նախատեսվում է Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծում՝ առնվազն 15 դատավորի թվակազմով:

- Նույն փոփոխությամբ նախատեսվել է նաև վերաքննիչ քրեական և վերաքննիչ քաղաքացիական դատարաններում 6-ական դատավորի ավելացում, ինչպես նաև վճռաբեկ դատարանի քրեական պալատում՝ 2 դատավոր:
- ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը: Ըստ փոփոխության՝ ԲԴԽ-ն դատավորների թվակազմն ավելացնելու համաձայնություն ստանալու համար դիմում է Կառավարություն՝
    1. Մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող առանձին դատավորների հաստիքների նախատեսման համար՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում առնվազն 17 դատավորի՝ ըստ դատարանների և հաստիքների, որոնցից առնվազն 8-ը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում:
    2. Վերաքննիչ քրեական դատարանում՝ 3 դատավոր:
- Վերոնշյալ օրենսդրական փոփոխության հիման վրա ԲԴԽ-ն ընդունել է «Աառաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների և Վերաքննիչ քրեական դատարանի դատավորների թվակազմն ավելացնելու մասին ԲԴԽ-49-Ո-112 որոշումը:
- Կառավարության թիվ 911-Ն որոշմամբ համաձայնություն է տրվել՝
    1. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավորների թվակազմը 3 դատավորով և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորների թվակազմը 3 դատավորով ավելացնելու վերաբերյալ ԲԴԽ համապատասխան առաջարկությանը:
    2. ՀՀ սնանկության դատարանի դատավորների թվակազմը 4 դատավորով ավելացնելու վերաբերյալ ԲԴԽ համապատասխան առաջարկությանը:

Շահագրգիռ մարինների հետ անցկացված ՖԽՔ-ի մասնակիցների պնդմամբ՝ այս գործողության իրականացմանը միտված քայլերը եղել են տարբեր ուղղություններով՝

- Հակակոռուպցիոն ոլորտում ստեղծվել է Հակակոռուպցիոն դատարան՝ դատավորների համապատասխան թվակազմով: Դատավորների թվակազմի ավելացումներ են իրականացվել վերաքննիչ դատարանում, այդպիսիք նախատեսվում են իրականացվել նաև Վճռաբեկ դատարանում:
- Ներդրվել է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր քննող դատարանների ինստիտուտը, որի արդյունքում 17 դատավորի հաստիք ավելացվել է, 8-ը՝ Երևանում, մնացածը՝ մարզերում: Ինչպես նաև վերաքննիչ քրեական դատարանում դատավորների թիվն ավելացել է 3-ով:
- ՀՀ կառավարությունը համաձայնություն է տվել ԲԴԽ-ի առաջարկությանը, և վերաքննիչ վարչական դատարանի, ինչպես նաև վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորների թիվը նշյալներից յուրաքանչյուրում ավելացել է 3-ով: Սնանկության դատարանում դատավորների թվակազմն ավելացվել է 4-ով:

Դատավորների թվակազմի ավելացման արդյունքում ենթադրվում է նաև դատավորների աշխատակազմի ավելացում՝ քարտուղարի, գործավարի, օգնականի համապատասխան հաստիքների նախատեսում: Միաժամանակ, ՖԽՔ-ի ընթացքում մասնակիցների կողմից արձանագրվեց, որ գործող դատավորների աշխատակազմերում թվակազմի ավելացում տեղի չի ունեցել, ինչը ևս բխում էր Ռազմավարության տրամաբանությունից: Ընդ որում, քննարկվել է դատարաններում փորձագետների հաստիքների նախատեսումը՝ որոշակի ուղղվածություններով, օրինակ՝ տնտեսագետներ, կոռուպցիոն հանցագործությունների դեպքում՝ տվյալ ոլորտի փորձագետներ և այլք, այս մասով իրականացվել են ուսումնասիրություններ, սակայն տվյալ պահին որևէ զարգացում չկա: Այս հարցի համատեքստում հնչեց նաև կարծիք, որ «դատավորների թվաքանակի ավելացումը հարցի լուծում չէ, այլ պայքար հետևանքի դեմ, այսինքն՝ առաջնահերթ պետք է լուծվի արդյունավետության խնդիրը»: Այսպես, ըստ շահագրգիռ պետական մարմինների և շահակիցների հետ անցկացված ՖԽՔ-ների արդյունքների՝ պետք է ուշադրություն դարձնել այն կարևոր հանգամանքին, որ դատավորների թվաքանակի ավելացումը հարցի լուծում չէ, այլ պայքար հետևանքի դեմ, առաջնահերթ պետք է լուծվի արդյունավետության և «ուշացած արդարադատության» վերականգման խնդիրները: Տվյալ գործողության արդյունքի մասով՝ դատական քննության ժամկետների կրճատումների հատվածը նույնպես ունի բարելավվման կարիք, քանզի այժմ չկա դրա ապահովման միջոցը: Ռազմավարության 2022-2023թթ. արդյունքն իրատեսական լինելու համար պետք է իրականացվեն որոշակի փոփոխություններ, որպեսզի արդյունքի 2-րդ հատվածն առավել իրատեսական լինի:

Թեև որոշակի քայլեր են ձեռնարկվել դատավորների և դատավորների օգնականների թվի ավելացման, աշխատակազմի ընդլայնման կապակցությամբ, այնուամենայնիվ այս առումով արդիական է մնում գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու խնդիրը, որի մասին մտահոգություն են հայտնել ՖԽՔ մասնակիցները: Հատկանշական է, որ բարձրացված հարցի առնչությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով Սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 16-ի ՍԴՈ-1585 որոշմամբ ևս արձանագրվել են գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու հետ կապված խնդիրները: Այսպես, Սահմանադրական դատարանը նշել է, որ ԲԴԽ 2019 թվականի տարեկան հաղորդման մեջ արտացոլված գործերի քանակական ցուցանիշների և գործերի քննության ժամկետների վերաբերյալ տվյալների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ՀՀ-ի դեմ կայացված վճիռների ուսումնասիրությունը վկայում է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի կենսագործման հարցի կապակցությամբ առկա խնդրահարույց իրավիճակի մասին: Ըստ այդմ, Սահմանադրական դատարանը ընդգծել է, որ «անհրաժեշտ է ապահովել դատարանների այնպիսի ծանրաբեռնվածություն, որի պայմաններում վերջիններս հնարավորություն կունենան գործերի քննությունն իրականացնել ողջամիտ ժամկետում՝ միաժամանակ արդար դատաքննության իրավունքի նաև մյուս պահանջների պահպանմամբ»[17]:

Այս հարցի շուրջ փորձագետների հետ հարցազրույցի արդյունքում դրական է գնահատվել մասնագիտացված դատարանների, մասնավորապես՝ Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը, քանի որ այն հակակոռուպցիոն կարևոր մեխանիզմ է համարվում: Այդուհանդերձ, խնդրահարույց է դատավորների ընտրությունը, մասնավորապես այն, որ վերջիններիս մեծ մասը նախկին դատախազներ են:

[17] Տե՛ս ՍԴՈ-1585, կետ 4. 2:

Այսպիսով, **Գործողությունը ժամկետում չի կատարվել / առկա է ժամկետից որոշակի շեղում:**

Գործողություն 2. Դատավորների կարողությունների շարունակական զարգացում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվական	Ստացված արդյունք
Շարունակել իրականացնել դատավորների վերապատրաստումներ հետևյալ բնագավառներում՝ ա) կոռուպցիոն, տնտեսական և պաշտոնեական հանցագործությունների քննություն, բ) էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրմանը զուգահեռ կարևորվում է դատավորների՝ էլեկտրոնային կրիչների վրա գտնվող ապացույցների հետ աշխատելու հմտությունների զարգացումը, գ) մասնագիտական վարքագծի կանոններ և էթիկա, դ) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի կոնկրետ հոդվածների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունք:	ՀՀ ԱՆ, ՀՀ արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ)	Շարունակվում են դատավորների վերապատրաստումները՝ մշակված ծրագրերի հիման վրա:	**Գործողությունը կատարվել է ժամկետում** 2021 թվականի ընթացքում իրականացվել են դատավորների վերապատրաստումներ՝ մշակված ծրագրերի հիման վրա:

Համաձայն Արդարադատության ակադեմիայի ԻՀԱ-ին կողմից տրամադրած տեղեկատվության՝ «Նպատակ 8»-ի շրջանակներում 2019, 2020 և 2021 թվականներին Արդարադատության ակադեմիայում դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի հիման վրա իրականացվել են վերապատրաստումներ՝ հետևյալ բնագավառներում.

ա) Կոռուպցիոն, տնտեսական և պաշտոնեական հանցագործությունների քննություն: 2019, 2020 և 2021 թվականներին կոռուպցիոն դեպքերի քննություն թեմայով դասախոսությունների մասնակիցների թիվն ընդհանուր առմամբ եղել է 63, պաշտոնեական կոռուպցիայի դեպքերի քննություն թեմայով դասախոսություններին մասնակցել է 68 հոգի, իսկ ՀՀ քրեական դատավարության արդի հարցերին վերաբերող դասախոսության մասակիցների թիվը կազմել է 63 հոգի: Ընդհանուր առմամբ բոլոր թեմատիկ ուղղություններով մասնակիցների թիվը կազմել է 194:

բ) Էլեկտրոնային կրիչների վրա գտնվող ապացույցների հետ աշխատելու հմտությունների զարգացում: 2020 և 2021 թվականներին իրականացված «Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում» թեմայով դասընթացների մասնակիցների թիվն ընդհանուր առմամբ եղել է 91:

գ) Մասնագիտական վարքագծի կանոններ և էթիկա: Դատավորի էթիկային, վարքագծի կանոններին և գործունեության գնահատմանը վերաբերող դասընթացների մասնակիցների քանակը 280 է՝ 2019 և 2021 թվականների տվյալները միասին վերցրած:
դ) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի կոնկրետ հոդվածների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունք: Վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցերի շուրջ դասընթացներին 2019, 2020, 2021 թվականներին մասնակիցների թիվն ընդհանուր առմամբ եղել է 87, քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցերի վերաբերյալ դասընթացներին՝ 68, քաղաքացիական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցերի վերաբերյալ դասընթացներին՝ 107:

2021թ. իրականացվել է դատական ակտերի մշակման հմտությունների զարգացմանն ուղղված դասընթաց, որին մասնակցել է 92 հոգի: Դատական իշխանության անկախությանը և թափանցիկությանը վերաբերող դասընթացի մասնակիցները եղել են 194-ը՝ 2019 և 2021 թվականները միասին վերցրած: 2019թ. կայացած իրավաբանական գիր և մեկնաբանում թեմայով դասընթացին մասնակցել է 102 հոգի: Վերապատրաստումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Հավելված 1-ում:

ՖԽՔ-ի ընթացքում վերապատրաստումների բովանդակության, արդյունավետության և մասնակիցների հետ հետադարձ կապի վերաբերյալ որոշակի հարցեր քննարկվեցին Արդարադատության ակադեմիայի ներկայացուցիչների հետ:

Տվյալ գործողության իրականացման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման տեսանկյունից դատավորների հետ հետադարձ կապի պահպանման անհրաժեշտության համատեքստում ՖԽՔ-ի ընթացքում նշվեց, որ գնահատման գործիքներ ներդրված չեն, այսինքն չկան գործիքներ, որոնք հնարավորություն կտան վերապատրաստված անձանց անանուն կերպով, առանց կաշկանդվելու գնահատել ուսումնական գործընթացը, ներկայացնել իրենց կարծիքը վերապատրաստումների բովանդակության և դասախոսների մասին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև տալ առաջարկություններ դրանց բարելավման, փոփոխման կամ լրացման նպատակով: Ըստ Արդարադատության ակադեմիայի՝ վերջիններս մշտապես կապ են հաստատում վերապատրաստված դատավորների հետ՝ հասկանալու համար՝ որքանով են դասընթացներն արդյունավետ իրականացվում, իսկ հնչեցված կարծիքները հետագայում հաշվի են առնում դրանց կատարելագործման համար:
Քննարկվեց նաև վերապատրաստումների թեմաների ընտրությանը վերաբերող հարցեր: Մասնավորապես, ՖԽՔ-ի ընթացքում հարցեր բարձրացվեցին, թե վերապատրաստումներում ներառված թեմաների ընտրությունը ա) որքանո՞վ են կարիքահեն, բ) արդյո՞ք դատավորներն իրենց մասնակցությունն ապահովում են դրանց ընտրության գործընթացում, եթե այո, ապա ի՞նչ մեխանիզմով, գ) արդյո՞ք թեմաների տրամադրումն իրականացվում է ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի Ուսումնական հարցերի հանձնաժողովի կողմից, իսկ Արդարադատության ակադեմիայի գործառույթն այս դեպքում զուտ վերապատրաստումների իրականացո՞ւմն է, թե՞ դրանց մշակումն իրականացվում է համատեղ քննարկումների միջոցով: Այս առնչությամբ նշվեց, որ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի

համաձայն՝ մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 1-ը Ուսումնական հարցերի հանձնաժողովից Ակադեմիան ստանում է առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ:
Վերապատրաստման ծրագրով յուրաքանչյուր առարկա ունի որոշակի ժամաքանակ: Վերջում մշակվում են համապատասխան փաթեթներ, որոնցից յուրաքանչյուրը 40 ժամ է: Ներառման ենթակա են թվով 4-6 առարկա: Նշյալ փաթեթները կազմելիս Արդարադատության ակադեմիան խորհրդակցում է նաև միջազգային գործընկերների հետ, ընդունում վերջիններիս առաջարկները: Դատավորները մինչև վերապատրաստումներին մասնակցելը ընտրում են մեկ փաթեթ՝ ընդհանուր մասնագիտական ոլորտից, ևս մեկ փաթեթ՝ հատուկ մասնագիտական ոլորտից՝ ըստ մասնագիտացումների: Ընդհանուր մասնագիտական ոլորտում ներառված են ընդհանուր առարկաներ՝ դատավորի էթիկա, վարքագծի կանոններ, սահմանադրական իրավունքի գիտություն, արդարադատության արդի միտումներ և այլն: Հատուկ մասնագիտական ոլորտը վերաբերելի է քրեական իրավունքին, քրեական դատավարությանը, քաղաքացիական իրավունքին, քաղաքացիական դատավարությանը, վարչական իրավունքին, վարչական դատավարությանը և սնանկության իրավական կարգավորումներին և վարույթին:
Շահակիցների հետ անցկացված ՖԽՔ-ի ընթացքում քննարկվեց նաև «ուղեղների արտահոսք»-ի ծրագիրը: Մասնավորապես, նպաստավոր է բարձրաստիճան պաշտոններում նաև սփյուռքի մեր հայրենակիցներին հնարավորություն տալ ծավալել մասնագիտական գործունեություն՝ փորձի փոխանակման շրջանակներում: Թեև Ռազմավարությունը նման ուղղություն չի նախատեսում, սակայն այս քննարկումը հնարավորություն տվեց գաղափարներ գեներացնել և առաջարկել, որ ներքոնշյալը իրականացվի թեկուզ կարճաժամկետ ծրագրերի տեսքով: Այսպես, ՄԱԿ-ը իրականացնում է փոխանակման ծրագրեր տարբեր երկրների մասշտաբով. փոխհատուցվում է «ուղեղների արտահոսք»-ը: Այսինքն՝ տվյալ ծրագրի շրջանակներում փորձ է արվում փոխհատուցելու այդ «ուղեղներ»-ի կարճաժամկետ վերադարձը հայրենիք՝ համապատասխան բնագավառներում իրենց գիտելիքների, փորձի տրամադրումը ապահովելու համար: Հայաստանի ներկա պայմաններում այս գործողությունը կարելի է նախատեսել որպես առանձին ուղղություն:

Այսպիսով, **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

Գործողություն 3. Դատարաններին ապահովել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվական	Ստացված արդյունք
Դատարաններին ապահովել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով:	ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ ԱՆ, ԲԴԽ (համաձայնությամբ)	Դատարանները շարունակում են ապահովվել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով՝ ըստ սահմանված առաջնահերթությունների և ժամանակացույցի:	**Գործողությունը կատարված չէ** Հակակոռուպցիոն դատարանների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով ապահովելու գործընթացն ավարտված չէ:

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը «կատարվել է մասնակի»: Զեկույցի հրապարակման ամսվա դրությամբ (2021թ հունվար) կատարվում էին շենք-շինությունների ուսումնասիրություններ վերջիններս վերակառուցելու և շահագործման հանձնելու նպատակով: Իրականացվել է հակակոռուպցիոն դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների բարելավման կարիքների նախնական գնահատում, որի հիման վրա արդեն իսկ սկսվել է հակակոռուպցիոն դատարանների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով ապահովելու գործընթացը:

Համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ԻՀԱ-ին տրամադրած տեղեկատվության՝ տվյալ գործողության իրականացումն այժմ ընթացքի մեջ է: ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով միջոցերի հաշվին սկսվել և ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին շարունակվել են հակակոռուպցիոն դատարանի Երևանի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան 5/1 հասցեում տեղակայված շենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման և հիմնանորոգման աշխատանքները, ինչպես նաև ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին սկսվել է նաև Աջափնյակ վարչական շրջանի «Սպանդարյան» կայարանի երկաթգծին հարակից 15 հեկտար մակերեսով հողատարածքում Հակակոռուպցիոն դատարանի գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների ապահովման (կառուցման) նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման աշխատանքները (ընդամենը շուրջ 175.3 մլն դրամ): ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով հակակոռուպցիոն դատարանների շինարարության համար նախատեսվել է 500.0 մլն դրամ:

Այսպիսով, **Գործողությունը ժամկետում չի կատարվել / առկա է ժամկետից որոշակի շեղում:**

Նպատակ 9. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների միասնական հարթակի ապահովում

Ամփոփագիր Նպատակ 9. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների միասնական հարթակի ապահովում	
Հավելված 3	2021 թ.
Նախատեսված գործողությունների թիվ	**3**
որից ժամկետում կատարված՝	1
որից չի կատարվել	2
կատարողական ցուցանիշ	**33%**

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 3)՝

1. «Մեկ պատուհանի» սկզբունքով գործող միասնական գրասենյակի ստեղծում
2. Փորձագիտական ծառայություններ մատուցող պետական մարմիններում ընդգրկված ստորաբաժանումների միավորում
3. «Դատափորձագիտական գործունեության մասին» օրենքի նախագծի մշակում, քննարկում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ

Գործողություն 1. Պետական որոշ ծառայությունների մատուցման միասնական կենտրոնի ստեղծումը «մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի կիրառմամբ

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվական	Ստացված արդյունք
Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող որոշ ծառայությունների մատուցման միասնական կենտրոնի ստեղծումը «մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի կիրառմամբ:	ՀՀ ԱՆ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ ոստիկանություն, ՀՀ կադաստրի կոմիտե	Մշակվել է պետական որոշ ծառայությունների մատուցման միասնական կենտրոնի ստեղծման ճանապարհային քարտեզը՝ անհրաժեշտ նյութական ռեսուրսների, շենքային պայմանների, տեխնիկական միջոցների մատնանշմամբ:	**Գործողությունը կատարվել է ժամկետում** ՀՀ ԱՆ-ի կողմից մշակվել է պետական որոշ ծառայությունների մատուցման միասնական կենտրոնի ստեղծման ճանապարհային քարտեզը:

ՀՀ ոստիկանության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից մշակվել է պետական որոշ ծառայությունների մատուցման միասնական կենտրոնի ստեղծման ճանապարհային քարտեզը /ՀՀ կառավարության 06.08.2021թ. թիվ 1264-Ն որոշում/, որի հիման վրա Իջևան և Գյումրի քաղաքներում գործարկվել են միասնական գրասենյակներ:

Ըստ Ոստիկանության և ԱՆ-ի կողմից ԻՀԱ-ին տրամադրած տեղեկությունների՝ 2021 թվականի մարտի 13-ից՝ Իջևան քաղաքում, իսկ հունիսի 23-ից՝ Գյումրի քաղաքում գործարկված միասնական գրասենյակներում տեղակայվել են նաև Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության /այսուհետ ԱՎ/ ստորաբաժանումները: ԱՎ վարչության հիշյալ ստորաբաժանումները գրասենյակում գործող այլ մարմինների և կազմակերպությունների համապատասխան ստորաբաժանումների հետ քաղաքացիներին մատուցում են օրենսդրությամբ ԱՎ վարչությանը վերապահված ծառայություններ, ինչով պայմանավորված՝ քաղաքացիների սպասարկումն իրականացվում է ավելի արագ և որակյալ:

Ներկայումս աշխատանքներ են իրականացվում Վանաձոր քաղաքում ևս պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակ ստեղծելու ուղղությամբ, որի շրջանակներում նախատեսվում է ԱՎ վարչության Գուգարքի անձնագրային ծառայությունը տեխափոխել գրասենյակ: Այս մասով հարկ է ավելացնել, որ գործում է էլեկտրոնային հերթագրման հնարավորություն՝[18] բջջային հավելվածով:

ՖԽՔ-ի մասնակիցների կողմից բարձրացվեց միասնական գրասենյակներում մատուցվող ծառայությունների քանակի տարբերության հարցը: Ըստ պատասխանատու մարմնի ներկայացուցչի՝ դա կապված է գրասենյակի գտնվելու վայրից: Այժմյան երևանյան գրասենյակում, որը գտնվում է Վազգեն Սարգսյան 3 հասցեում, բազմաթիվ ծառայություններ են մատուցվում, և որքան մեծ է դրանց քանակը, այնքան դժվար է քաղաքացիների լայն շերտերի սպասարկումը: Ի լրումն բարձրացված հարցին, մասնակիցները հետաքրքրվեցին նաև՝ արդյո՞ք առկա է ռազմավարություն կամ գործողությունների պլան, որում, ըստ մարզերի, նախատեսված է, թե Հայաստանում քանի նմանատիպ գրասենյակների ստեղծում է հարկավոր, որպեսզի քաղաքացիների համար ամբողջովին ապահովվի մատչելիությունը: Ըստ ՀՀ ԱՆ-ի ներկայացուցչի՝ նման փաստաթուղթ առկա չէ: Ի լրումն, ՀՀ ԱՆ-ը այժմ քայլեր է ձեռնարկում ՀՀ-ում վրացական մոդելով «Արդարադատության տներ» ստեղծելու ուղղությամբ, որտեղ կմիավորվեն քաղաքացիներին մատուցվելիք առավել լայն շրջանակի հանրային ծառայությունները: Օր. ՝ անձնագրային և վիզաների վարչության կողմից մատուցվող ծառայությունները, ինչպես նաև այլ ծառայություններ, որոնք ներկայումս Հանրային ծառայությունների միասնական գրասենյակի կողմից չեն մատուցվում: Հաջորդ դիտարկումը այն մասին էր, որը հարցը Արդարադատության տների վերաբերյալ չէր, այլ Հանրային ծառայությունների միասնական գրասենյակների, որոնք դեռևս անցած տարվանից են հիմնվել, ինչը նշանակում է, որ առնվազն պետք է լինեին գործողությունների պլան և ռազմավարություն, այսինքն՝ կարիքն արդեն իսկ գնահատված է եղել գրասենյակները հիմնելուց առաջ: Արդյո՞ք սրանով պատկեր ունենք, թե խնդիրն ընդամենը եղել է փորձնական 1 կամ 2 գրասենյակների ստեղծումը, որին հաջորդելու էր համապատասխան ռազմավարության մշակումը:
ՀՀ ԱՆ-ի ներկայացուցչի կողմից պարզաբանվեց, որ դրանցից առաջինն ուներ պիլոտային բնույթ: Այն իրենից ներկայացնում էր տարբեր գերատեսչությունների միավորում մեկ վարչական շենքում: Այնուհետև, դրա հիման վրա ՀՀ ԱՆ-ը «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությանն առաջարկեց իր համագործակցությունը: Վերոհիշյալի շրջանակներում ևս 2 գրասենյակներ բացվեցին Գյումրի և Իջևան քաղաքներում, իսկ այժմ նախատեսվում է նույնպիսի գրասենյակի ստեղծում նաև Վանաձոր քաղաքում: Բայց այս գործընթացին զուգահեռ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը հիշատակված 1 պատուհանի գաղափարն այլ միտում ունի, չի ենթադրում մուտք մեկ վարչական տարածք, նախատեսվեց միասնական գրասենյակի նոր մոդելի ձևավորում: Ուսումնասիրվում է ոչ միայն Վրաստանի մոդելը, որը բավականին թանկ

[18] https://play.google.com/store/apps/details?id=earlyone.earlyone&hl=ru

ծրագիր է, այլև մի շարք տարբեր երկրների, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի, Կանադայի և այլն: Ավելին, տեխնիկական առաջադրանք է գրվել, հայտարարվել է մրցույթ, որպեսզի 2022թ. ավարտին հստակ կերպով առկա լինի Ճանապարհային քարտեզ և Գործողությունների պլան այն մասին, , թե ինչ նոր մոդել է ստացվելու:

Համաձայն ԱՆ ներկայացուցչի, այս ընթացքում արդեն իսկ ՀՀ ԱՆ-ը պարզեցրել է իր կողմից մատուցվող ծառայությունների վարչարարությունը, որովհետև անկախ նրանից՝ քաղաքացիների ընդունումն ինչպիսի պայմաններում է իրականացվելու, եթե մեկ տեղեկանքի համար քաղաքացին պետք է բազմաթիվ փաստաթղթեր ներկայացնի, ապա որևէ բարեփոխման մասին խոսք լինել չի կարող:

Այսպիսով՝ **Գործողությունն կատարվել է ժամկետում:**

Գործողություն 2. ՀՀ-ում գործող պետական դատափորձագիտական հիմնարկները միավորել մեկ միասնական կենտրոնում, այդ կենտրոնին տրամադրել իր գործունեության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ տեխնիկա

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվական	Ստացված արդյունք
ՀՀ-ում գործող պետական դատափորձագիտական հիմնարկները միավորել մեկ միասնական կենտրոնում, այդ կենտրոնին տրամադրել իր գործունեության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ տեխնիկա:	ՀՀ ԱՆ, ՀՀ ֆինանսների նախարարություն	Մշակվել է պետական դատափորձագիտական հիմնարկները մեկ միասնական կենտրոնում միավորելու ծրագիրը, պատրաստվել՝ փորձագիտական կենտրոնին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ տեխնիկայի ցանկը, առաջնահերթությունները և տրամադրման ժամանակացույցը:	**Գործողությունը չի կատարվել ժամկետում** ՀՀ-ում գործող պետական դատափորձագիտական հիմնարկների միավորում չի կատարվել

ՀՀ Ֆինանսների նախարարության տեղեկատվության համաձայն՝ ՀՀ-ում գործող պետական դատափորձագիտական հիմնարկների միավորում չի կատարվել: ՀՀ կառավարության 25.02.2021թ. N 258-Ն որոշմամբ, ԵՄ դրամաշնորհային միջոցների հաշվին «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին նյութատեխնիկական հագեցվածության ապահովման նպատակով հատկացվել է 328.5 մլն դրամ:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել ժամկետում:**

Գործողություն 3. Մշակել «Դատափորձագիտական գործունեության մասին» օրենքի նախագիծը, ապահովել դրա քննարկումը և ներկայացումը Վարչապետի աշխատակազմ

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվական	Ստացված արդյունք
Մշակել «Դատափորձագիտական գործունեության մասին» օրենքի նախագիծը, ապահովել դրա քննարկումը և ներկայացումը Վարչապետի աշխատակազմ	ՀՀ արդարադատության նախարարություն	«Դատափորձագիտական գործունեության մասին» օրենքի նախագիծը մշակվել է	**Գործողությունը չի կատարվել ժամկետում** «Դատափորձագիտական գործունեության մասին» օրենքի նախագիծը մշակված չէ

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, գործողության իրականացումը գնահատվել է «մասնակի»: Ըստ զեկույցի՝ իրականացվում են «Դատափորձագիտական գործունեության մասին» օրենքի նախագծի մշակման աշխատանքներ, որն ակնկալվում է հանրային քննարկման ներկայացնել 2022թ հունվարին:
ՖԽՔ ընթացքում այս առումով նշվեց, որ ՀՀ-ում դատափորձագիտական գործունեության մասին օրենք, ըստ էության, առկա չէ: ՀՀ արդարադատության նախարարությունն արդեն իսկ ձեռնարկում է այդ օրենքի նախագծի քննարկման աշխատանքների ուղղությամբ քայլեր: Փորձագիտական կենտրոնը կարող է, իր հարուստ պրակտիկ գործունեությունից ելնելով, մի շարք առաջարկներ ներկայացնել: Կենտրոնում ստեղծվել է համապատասխան աշխատանքային խումբ, ընդգրկված են իրավաբաններ, ճյուղային/պրոֆիլային ստարաբաժանումների ղեկավարներ: Ներկայումս թիմն աշխատում է նշյալ օրենքի վերաբերությամբ ներկայացվելիք առաջարկների ուղղությամբ:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել ժամկետում:**

ՈԼՈՐՏ 6: ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Նպատակ 10. Իրավապահ համակարգի բարեփոխում

Ամփոփագիր Նպատակ 10. Իրավապահ համակարգի բարեփոխում			
Հավելված 2	2019 2-րդ կիսամյակ	2020 1-ին կիսամյակ	2020 2-րդ կիսամյակ
Նախատեսված գործողությունների թիվ	**0**	**0**	**5**
որից ժամկետում կատարված՝	0	0	2
որից կատարված ժամկետի որոշակի խախտմամբ	0	0	1
որից չի կատարվել	0	0	1
որից տեղեկատվություն առկա չէ	0	0	1
կատարողական ցուցանիշ	**60%**		
Հավելված 3	2021 թ.		
Նախատեսված գործողությունների թիվ	**2**		
որից ժամկետում կատարված՝	0		
որից չի կատարվել	2		
կատարողական ցուցանիշ	**0%**		

Ռազմավարական ուղղություն (Հավելված 2)՝

- Դատախազության համակարգի բարեփոխում

Գործողություն 1. Ներդնել դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգ՝ գործի դնելով դատավորների բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները, փոփոխել դատախազների բարեվարքության գնահատում իրականացնող էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը

Գործողություն	Պատասխան ատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Ներդնել դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգ՝գործի դնելով դատավորների	ՀՀ ԱՆ ՀՀ գլխավոր դատախազությ	Մշակվել է դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգը, այդ թվում՝	Դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգը և	Դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգը և	**Գործողությունը կատարվել է ժամկետի**

բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները, փոփոխելով Էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը	ւն (համաձայնությամբ)	փոփոխվել է դատախազների բարեվարքության գնահատում իրականացնող Էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը՝ ընդլայնելով ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկա-յացվածությունը և սահմա-նափակելով Գլխավոր դատախազի դերը հանձնաժողովի ձևավորման գործընթացում:	Էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը քննարկվել է շահագրգիռ մարմինների քաղաքացիական հասարակության հետ, հաստատվել է Կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ:	Էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը քննարկվել է շահագրգիռ մարմինների քաղաքացիական հասարակության հետ, հաստատվել է Կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ:	**որոշակի խախտմամբ**

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատվել է «կատարված է մասնակի»: Զեկույցում, մասնավորապես՝ ներկայացված է, որ ԵՄ-ի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության դատական համակարգի հզորացում» ծրագրի շրջանակներում Միջազգային իրավունքի զարգացման հիմնադրամի և ՀՀ ԱՆ-ի հետ համագործակցությամբ աշխատանքային կարգով հաստատվել է «Կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում բարեվարքության համակարգի և կարողությունների ուժեղացում» ծրագիրը: Վերջինիս շրջանակներում, ի թիվս այլնի, նախատեսված է 2021 թվականի հունվար-մարտ ամիսներին համապատասխան հետազոտությունների իրականացում և առաջարկությունների ներկայացում շահառու գերատեսչություններին, այդ թվում նաև՝ դատախազների թեկնածուների բարեվարքության ստուգման, ինչպես նաև դատախազների վարքագծի կանոնների մեկնաբանման ուղենիշների սահմանման նպատակով:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասին համաձայն՝ էթիկայի հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև դատախազ անդամների ընտրության կարգը սահմանվում է ՀՀ գլխավոր դատախազի հրամանով: ՀՀ գլխավոր դատախազի հրամանով լրացում է կատարվել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի դատախազ անդամների ընտրության կարգը սահմանելու մասին» 2018 թվականի ապրիլի 9-ի N 20 հրամանում, որի համաձայն՝ էթիկայի հանձնաժողովի 3 դատախազ անդամներից առնվազն մեկի պաշտոնը պետք է նախատեսված լինի «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով: Ընդ որում, ներկայումս արդեն էթիկայի հանձնաժողովի դատախազ անդամներից մեկը զբաղեցնում է նման պաշտոն:

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, կատարման ենթակա գործողությունների ընթացքի վերաբերյալ» զեկույցի՝ գործողության իրականացումը գնահատվել է «կատարված է»:

Տվյալ զեկույցում նշված է, որ Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանն ուղղված օրենսդրական փաթեթի շրջանակներում 2021թ. ապրիլի 14-ին ԱԺ-ի կողմից ընդունվել է նաև «Դատախազության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները, որոնցով սահմանվել են ԿԿՀ-ի կողմից դատախազների, այդ թվում՝ գլխավոր դատախազի և նրա թեկնածուների, բարեվարքության ստուգման կառուցակարգերը: Բացի այդ, նշված օրենքով սահմանված կարգավորումների համաձայն՝ բարեվարքության ուսումնասիրություն իրականացվում է նաև ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված դատախազների, գլխավոր դատախազի, նրա տեղակալների ընտրության ժամանակ: Օրենքն ուժի մեջ է մտել 2021թ. հոկտեմբերի 29-ին:

Նշված օրենսդրական փոփոխության հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի 2021 թ. նոյեմբերի 16-ի N 87 հրամանով ստեղծվել է Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող ստորաբաժանումը՝ վարչությունը, որի դատախազների բարեվարքությունը ստուգվել է: Նույն հրամանով դադարեցվել է Գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության գործունեությունը:

Համաձայն Դատախազության կողմից ԻՀԱ-ին փոխանցված տեղեկատվության՝ ՀՀ գլխավոր դատախազի 2020 թվականի հունիսի 30-ի N 59 հրամանով փոփոխվել է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը՝ ընդլայնելով ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը: Մասնավորապես, նշված հրամանի համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է լինի «Դատախազության մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով նախատեսված պաշտոն զբաղեցնող դատախազ:

Իրավասու մարմինների և շահակիցների հետ կազմակերպված ՖԽՔ-ի մասնակիցների մի մասը հաստատեց այն տեսակետը, որ դատախազների էթիկայի հանձնաժողովում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակիցների ներգրավվումը կարող է նպաստել վերահսկողության գործիքների հզորացմանը: Այս դիրքորոշմանը, սակայն, ՀՀ գլխավոր դատախազությունը կողմնակից չէ: Որպես վերահսկողական գործիքների մեխանիզմ, ՀՀ դատախազությունը ներկայացրել է առաջարկություններ ՀՀ դատախազության կոլեգիայի փոխարեն ստեղծել Դատախազության խորհուրդ՝ Գլխավոր դատախազի, նրա տեղակալների, Գլխավոր դատախազության վարչությունների 4 պետերի և իրավունքի ոլորտի 5 մասնագետների կազմով: Վերջիններս պետք է ընտրվեն դատախազների կողմից փակ, գաղտնի քվեարկությամբ, ունենան առնվազն դոցենտի գիտական կոչում, 10 տարվա գիտամանկավարժական ստաժ և վերջին 5 տարում առնվազն 3 տպագրված գիտական հոդված: Նախատեսում է, որ այս խորհուրդը, ի թիվս այլնի, լիազորություններ կունենա նաև որակավորման և էթիկայի հանձնաժողովների ձևավորման գործում: Նաև առաջարկվում է, որ այս երկու հանձնաժողովները գործեն ոչ թե Գլխավոր դատախազին առընթեր, այլ ունենան Դատախազական խորհրդի ենթահանձնաժողովի կարգավիճակ:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետի որոշակի խախտմամբ:**

Գործողություն 2. Փոփոխել Որակավորման հանձնաժողովի կազմման կանոնները, որպեսզի դրա անդամների պարզ մեծամասնությունը նշանակվի գլխավոր դատախազի մասնակցությունը չներառող գործընթացով և ընդլայնել ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը դատախազների ներկայացուցչական մարմիններում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020թվականի 1-ին կիսամյակ	2020թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Փոփոխել Որակավորման հանձնաժողովի կազմման կանոնները, որպեսզի դրա անդամների պարզ մեծամասնությունը նշանակվի գլխավոր դատախազի մասնակցությունը չներառող գործընթացով և ընդլայնել ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը դատախազների ներկայացուցչական մարմիններում	ՀՀ ԱՆ, ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)	Մշակվել է «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը:	«Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ներկայացվել է ԱԺ:	«Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ներկայացվել է ԱԺ:	**Գործողությունը չի կատարվել** Օրենքի նախագիծը ուղարկվել է ՀՀ ԱՆ

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատված է «կատարված է մասնակի»: Զեկույցում, մասնավորապես՝ ներկայացված է, որ «Դատախազության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել է և ներկայումս ենթարկվում է վերջնական լրամշակման ՀՀ դատախազության տարբեր ստորաբաժանումներից ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա: Օրենքի նախագծով լրամշակվելու են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի մի շարք երկիմաստություններ և մեկնաբանությունների տեղիք տվող դրույթներ: Նախագծով, ի թիվս այլնի, նախատեսվում է որակավորման հանձնաժողովի 4 դատախազ անդամների և 3 իրավաբան գիտնականների նշանակման իրավասությունը վերապահել ոչ թե ՀՀ գլխավոր դատախազին, այլ ՀՀ դատախազության կոլեգիային: Դատախազության կոլեգիայի անդամների ցանկը սահմանվում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով և չի կարող հայեցողաբար փոխվել ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Համաձայն Դատախազության կողմից ԻՀԱ-ին փոխանցված տեղեկատվության՝ այս ուղղությամբ ՀՀ դատախազությունում մշակվել է «Դատախազության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը և սահմանված կարգով ուղարկվել

է ՀՀ ԱՆ: Ըստ դատախազության՝ այս նախագիծն ուղղված է ոչ միայն նշյալ գործողության կատարման ապահովմանը, այլև՝ «Դատախազության մասին» օրենքում առկա իրավական խնդիրների հաղթահարմանը:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Գործողություն 3. Ապահովել դատախազների ընտրության մրցույթի թափանցիկությունը

Թեև այս գործողությունը ներկայացված է Հավելված 2-ում, որպես իրականացման ենթակա գործողություն, այս գործողության մասին աղյուսակային տվյալները բացակայում են, ինչը հավանաբար տեխնիկական վրիպակի արդյունք է:

Գործողություն 4. Իրականացնել դատախազության կառուցվածքային փոփոխություններ և կարողությունների զարգացում պետական շահերի ոչ քրեադատավարական միջոցներով պաշտպանության բնագավառում, ինչպես նաև կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Իրականացնել դատախազության կառուցվածքային փոփոխություններ և կարողությունների զարգացում պետական շահերի ոչ քրեադատավարական միջոցներով պաշտպանության բնագավառում, ինչպես նաև կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում:	ՀՀ ԱՆ, ՀՀ արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ), ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)	Մշակվել է կառուցվածքային փոփոխություններ նախատեսող՝ «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, մշակվել են համապատասխան բնագավառերում դատախազների վերապատրաստումների ծրագրերը:	Կառուցվածքային փոփոխություններ նախատեսող՝ «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ, հաստատվել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ:	Կառուցվածքային փոփոխություններ նախատեսող՝ «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ներկայացվել է ԱԺ, դատախազները սկսել են վերապատրաստվել՝ մշակված	**Գործողությունը կատարվել է:** «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ, հաստատվել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ

				ծրագրերի հիման վրա:	

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատվել է «կատարված է մասնակի»: Զեկույցում, մասնավորապես՝ ներկայացված է, որ նշված արդյունքին հասնելու նպատակով «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է: Այսպես, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումները՝ ներառյալ ՀՀ գլխավոր դատախազությունը և ՀՀ զինվորական դատախազությունը: «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական մարմնի կանոնադրությամբ սահմանվում են, ի թիվս այլնի, տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումները, իսկ նույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ մասի 8-րդ կետի համադրված վերլուծությունից բխում է, որ ՀՀ դատախազության կանոնադրությունը հաստատելու, դրանում փոփոխություններ կատարելու, ներառյալ՝ նոր կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու լիազորությունը վերապահված է ՀՀ գլխավոր դատախազին: Այսինքն՝ ՀՀ դատախազության, ներառյալ ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքում նոր մասնագիտական ստորաբաժանումները կարող են ստեղծվել ՀՀ գլխավոր դատախազի հրամանով՝ ՀՀ դատախազության կանոնադրության վերաբերելի հատվածներում փոփոխություններ կատարելու ճանապարհով:

Ինչպես նշում է ՀՀ դատախազությունը, իրականացվող դատաիրավական բարեփոխումների համատեքստում ՀՀ դատախազության բարեփոխումների տեսլականը, ի թիվս այլնի, հիմնված է ՀՀ դատախազության ստորաբաժանումների՝ ըստ հանցատեսակների մասնագիտացումն առավելագույնս խորացնելու և դրանով պայմանավորված՝ դատախազական գործառույթների արդյունավետությունը ավելի բարձրացնելու սկզբունքի վրա: Հարկ է արձանագրել, որ դատախազության՝ որպես պետական մարմնի գործունեությանը վերաբերող միջազգային-իրավական փաստաթղթերում ևս դատախազների մասնագիտացման անհրաժեշտությունը մշտապես նշվել է որպես դատախազության գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտ պայման: Մասնավորապես, Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի 2014թ. դեկտեմբերի 17-ի՝ «Դատախազների վերաբերյալ եվրոպական նորմերը և սկզբունքները» թիվ 9 խորհրդատվական կարծիքի 119-րդ կետում, 2016թ. նոյեմբերի 18-ի՝ «Դատախազական աշխատանքի որակի և արդյունավետության վերաբերյալ, ներառյալ ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը» թիվ 11 կարծիքի 27-րդ և 54-րդ կետերում հստակ մատնանշված է, որ դատախազների մասնագիտացման անհրաժեշտությունը, նաև դատախազության կազմակերպական կառուցվածքում, անհրաժեշտ է դիտարկել որպես առաջնահերթություն՝ դատախազների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև հանցավորության տարբեր դրսևորումներին պատշաճ արձագանքելու համար: Այս ամենով պայմանավորված՝ ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի N 39 հրամանով հաստատվել է ՀՀ դատախազության կանոնադրությունը, ներառյալ ՀՀ գլխավոր դատախազության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ցանկը, որում ընդգրկված են, ի թիվս այլնի, կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունը, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանվագործությունների գործերով վարչությունը, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը: Նման մոտեցումը

բարձրացնում է դատախազների առավելագույն մասնագիտացումը՝ նպաստելով դատախազական հսկողության և դատավարական ղեկավարման գործառույթների առավել պատշաճ իրականացմանը:

Անդրադառնալով պետական շահերի ոչ քրեադատավարական միջոցներով պաշտպանությանը, ՀՀ դատախազությունը տեղեկացնում է, որ 2020 թվականին ՀՀ գլխավոր դատախազության կազմում ստեղծվել է Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը, որն արդեն իսկ զբաղվում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործառույթների իրականացմամբ:

Պետական հատվածի արդիականացման 3-րդ ծրագրի շրջանակում «Հայաստանի քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի մատակարարման և տեղադրման» առաջադրանքի իրականացման նպատակով կնքվել է պայմանագիր: Մշակվել են համապատասխան բնագավառներում դատախազների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրեր: Մշակվել և Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից հաստատվել են Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների 2020 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման և Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց 2020 թվականի երկրորդ խմբի մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրերը:

Մշակված ծրագրի հիման վրա իրականացվել են դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումները և դատախազների տարեկան վերապատրաստումները: Նշված թեմաներով վերապատրաստման և մասնագիտական պատրաստման դասընթացներ մշակվել և իրականացվել են նաև միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի HELP հեռավար հարթակի շրջանակներում:

Իրականացվել են համապատասխան բնագավառներում դատախազների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ:

ՖԽՔ-ի ընթացքում հարցեր բարձրացվեցին, թե վերապատրաստումներում ներառված թեմաների ընտրությունը ա) որքանո՞վ են կարիքահեն, բ) արդյո՞ք դատախազներն իրենց մասնակցությունն ապահովում են դրանց ընտրության գործընթացում, եթե այո, ապա ի՞նչ մեխանիզմով: Հիշյալի վերաբերյալ Արդարադատության ակադեմիայի ներկայացուցիչը հայտնեց, որ սահմանված է ուսուցման գործընթացների, վերապատրաստումների ուսուցման ծրագրերի թեմաների ընտրության կարգը: Ըստ դրա՝ ուսուցումը կատարվում է ծրագրերի արդիականացմամբ: Յուրաքանչյուր տարի մինչև օգոստոսի 1-ը Գլխավոր դատախազը, իսկ քննիչների պարագայում Քննչական կոմիտեի նախագահը, իրենց կարիքներից ելնելով, ներկայացնում են առարկայական կուրսերի վերաբերյալ իրենց առաջարկությունները: Ակադեմիայի կողմից ևս արդի խնդիրների վերաբերյալ ուսումնասիրություններ են կատարվում, և դրանց արդյունքում մշակվում են նոր առարկաներ, որից հետո տեղի են ունենում քննարկումներ:

Մեկ այլ հարց, որ բարձրացվեց ՖԽՔ-ի ընթացքում, որի կատարման մասով իրավասու մարմինների կողմից չտրվեց հստակ պատասխան, վերաբերում էր այն գործողությանը, ըստ որի ԱԺ մշտական հանձնաժողովի կողմից ՀՀ գլխավոր դատախազի ընտրության գործընթացին անկախ փորձագետների ներգրավվումը պետք է լինի պարտադիր, և որոնց կարծիքը ունենալու է խորհրդատվական նշանակություն:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է:**

Ռազմավարական ուղղություն (Հավելված 2)՝

- Քննչական մարմինների բարեփոխում

Գործողություն 1. Քննիչների բարեվարքության գնահատման նպատակով վերանայել քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և ընթացակարգը՝դրա թափանցիկությունն ապահովելու նպատակով՝ գործի դնելով դատավորների բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները՝ ապահովելով բարեվարքության գնահատումը քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկող մարմնի կողմից

Գործողություն	Պատասխան ատու մարմին	2020թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Համապատասխան իրավական ակտերում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ ուղղված քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի կատարելագործմանը:	ՀՀ ԱՆ, ՀՀ քննչական կոմիտե, ՀՀ հատուկ քննչական ծառայություն, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	Քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի փոփոխություն նախատեսող համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծերի փաթեթը մշակվել է:	Քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի փոփոխություն նախատեսող համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծերի փաթեթը քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ, հաստատվել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ:	Քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի փոփոխություն նախատեսող համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծերի փաթեթը մշակվել է և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	**Գործողությունը ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ հատուկ քննչական ծառայության մասով կատարված է, ՀՀ ԱԱԾ մասով՝ տեղեկատվությունը բացակայում է**

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատված է «կատարված է մասնակի»: Զեկույցում, մասնավորապես՝ ներկայացված է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2014 թվականից գործում է Հատուկ քննչական ծառայության ծառայողների վարքագծի կանոնագիրքը և Հատուկ քննչական ծառայության ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն իրականացնելու կարգը, որոնք համապատասխանեցվել են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով ամրագրված պահանջներին:

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, գործողությունը կատարված է «մասնակի»: Զեկույցում ներկայացված է, որ ընդունվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքը, որի շրջանակներում ներդրվել են քննիչների և օպերլիազորների բարեվարության ստուգման գործիքակազմ:

Համաձայն Քննչական կոմիտեի կողմից ԻՀԱ փոխանցված տեղեկատվության՝ տվյալ գործողության շրջանակներում ՀՀ քննչական կոմիտեի կողմից մշակվել, շրջանառվել և ներկայացվել է ԱԺ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ընդունվել է *09.12.2020թ.: Վերոնշյալ՝ 09.12.2020թ. N ՀՕ-494-Ն օրենքով դրույթներ են նախատեսվել՝ ուղղված* քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի կատարելագործմանը: Մասնավորապես՝ հստակ ամրագրվել են կարգապահական խախտման փաստի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ իրականացվող ծառայողական քննության փուլերը՝ նախնական ուսումնասիրություն և կարգապահական վարույթ: Բացի այդ նախատեսվել է, որ ծառայողական քննություն անցկացնելու նպատակով նախնական ուսումնասիրություն կատարելու կարգը սահմանվում է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանով: Կատարված փոփոխությունների համաձայն՝ խիստ նկատողություն, դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնից ազատում տույժերը ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառվում են միայն ծառայողական քննություն անցկացնելուց հետո, իսկ զգուշացում և նկատողություն կարգապահական տույժերը՝ նշանակվում են առանց կարգապահական վարույթ անցկացնելու, որի դեպքում ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը գրավոր բացատրություն է ներկայացնում կարգապահական տույժ նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին: Եթե բացատրությունում կարգապահական խախտում թույլ տված ՀՀ քննչական կոմիտեի քննիչը չի ընդունում կատարված խախտման մեջ իր մեղավորությունը, ապա անցկացվում է ծառայողական քննություն:

Այս գործողության վերաբերյալ ԻՀԱ-ի ներկայացրած հարցմանը ՀՀ ԱԱԾ կողմից պատասխան չի տրվել:

Այսպիսով՝ **Գործողությունը ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ հատուկ քննչական ծառայության[19] մասով կատարված է, ՀՀ ԱԱԾ մասով՝ տեղեկատվությունը բացակայում է:**

Գործողություն 2. Իրականացնել քննիչների կարողությունների զարգացում կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում

Գործողություն	Պատասխան ատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Իրականացնել քննիչների կարողությունների զարգացում կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում:	ՀՀ ԱՆ, ՀՀ արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ)	Մշակվել են համապատասխան բնագավառերում քննիչների վերապատրաստումների ծրագրերը	Քննիչները սկսել են վերապատրաստվել՝ համաձայն մշակված ծրագրերի»	Քննիչները սկսել են վերապատրաստվել՝ համաձայն մշակված ծրագրերի:	**Կատարվել է ժամկետում** Քննիչները սկսել են վերապատրաստվել՝ համաձայն մշակված ծրագրերի:

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատված է «կատարված»:

Մշակվել են Ռազմավարությամբ նախատեսված բնագավառներում քննիչների վերապատրաստումների ծրագրերը, դրանցում ներառվել են, մասնավորապես, «Կոռուպցիոն դեպքերի քննությունը», «Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննությունը», «Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը», «Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան», ինչպես նաև «Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում» վերտառությամբ դասընթացները: Նշված թեմաներով վերապատրաստման դասընթացներ մշակվել և իրականացվում են նաև միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ, այդ թվում՝ ԵԽ-ի HELP հեռավար հարթակի շրջանակներում: ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների (քննիչների) վերապատրաստման ուսուցման 2020թ. ծրագրով վերապատրաստման

[19] Գործողությունը կատարելու ընթացքում Հատուկ քննչական ծառայությունը դեռևս օրենքով սահմանված կարգով լուծարված չէր:

ժամանակացույց է սահմանվել 2020թ. մայիս-դեկտեմբեր ամիսները: Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակում կատարման ենթակա գործողությունների ընթացքի վերաբերյալ զեկույցի՝ իրականացվել են քննիչների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումները:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 3)՝

1. Դատախազների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացում և դատախազների թվակազմի ավելացում
2. Քննիչների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացում և քննիչների թվակազմի ավելացում

Գործողություն 1. Մշակել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված դատախազների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը և դատախազների թվակազմի ավելացմանը

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվական	Ստացված արդյունք
Մշակել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված դատախազների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը և դատախազների թվակազմի ավելացմանը:	ՀՀ ԱՆ, ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)	Դատախազների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը և դատախազների թվակազմի ավելացմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթը մշակվել է:	**Գործողությունը չի կատարվել** Օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթը մշակված չէ

Համաձայն Դատախազության կողմից ԻՀԱ փոխանցված տեղեկատվության՝ ՀՀ գլխավոր դատախազությունում մշակվել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով առաջարկվում է դատախազներին վճարել ամսական հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 100 տոկոսի չափով: Նախագիծը ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2022 թվականի հունվարի 5-ին ուղարկվել է ՀՀ ԱՆ-ին:

Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ ԱՆ ուղարկված գրությամբ նշվել է, որ քրեական դատավարության նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելից հետո անխուսափելիորեն ավելանալու է դատախազի աշխատանքի ծավալը՝ պայմանավորված քրեադատավարական նոր ինստիտուտների ներդրմամբ (օրինակ՝ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու կամ վերսկսելու, քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու վերաբերյալ

դատախազի կողմից որոշումներ կայացնելը, համաձայնեցման վարույթի ընթացքում բանակցություններին մասնակցելը, հեռակա դատաքննությունը և այլն): Այդ հանգամանքով պայմանավորված՝ առաջարկվել է ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բոլոր կառուցվածքային ստորոբաժանումներում ավելացնել դատախազի մեկական հաստիք: Արդյունքում, ՀՀ գլխավոր դատախազության 13 վարչություններում, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության 3 բաժիններում, Երևան քաղաքի դատախազությունում, Երևան քաղաքի վարչական շրջանների 7 դատախազություններում, մարզային 10 դատախազություններում և կայազորների 9 դատախազություններում ընդհանուր առմամբ անհրաժեշտ կլինի ավելացնել դատախազների 43 հաստիքներ:

Համաձայն Ֆինանսների նախարարության կողմից ԻՀԱ փոխանցված տեղեկատվության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող դատախազների համար (համապատասխան պաշտոններ զբաղեցնող այլ դատախազների համեմատ) սահմանվել են պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման ավելի բարձր գործակիցներ (16.04.2020թ. ՀՕ-247-Ն և 25.06.2020թ. ՀՕ-342-Ն): ՀՀ ԱՆ-ի կողմից շրջանառվել է «Առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոնների առանձնահատկություններով պայմանավորված տրվող հավելումների վճարման չափերը, կարգը, ինչպես նաև առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոնների շրջանակը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հիմք ընդունելով 24.03.2021թ. ՀՕ-152-Ն), որի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացվել է ազդեցության գնահատական, համաձայն որի՝ նախագծի ընդունումը՝ վերոնշյալ դատախազների աշխատանքի վարձատրության ծախսերի գծով կպահանջի ՀՀ պետական բյուջեից տարեկան լրացուցիչ 209.5 մլն դրամ հատկացման անհրաժեշտության:

Մյուս կողմից, իրավասու մարմինների և շահակիցների հետ անցկացված ՖԽՔ-ների ընթացքում մասնակիցները փաստեցին, որ մշակվել է նախագիծ, որով բարձրացվելու են միայն Գլխավոր դատախազի, նրա տեղակալների, Հակակոռուպցիոն և Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունների դատախազների աշխատավարձերը և հավելավճարները, մինչդեռ Ռազմավարությամբ նախատեսված էր ընդհանուր դատախազների աշխատավարձի և հավելավճարների բարձրացում: *Այդ համատեքստում առաջարկվեց 2022, 2023 թվականների համար կազմել նախագիծ Ռազմավարությամբ նշված գործողությունը կատարելու համար կամ Ռազմավարությունը մշակելիս համապատասխան գործողություն սահմանել այլ վարչությունների համար, այլ ոչ ընդհանուր դատախազական համակարգի համար՝ ելնելով պետական բյուջեի հնարավորություններից:*

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Գործողություն 2. Մշակել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված քննիչների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը և քննիչների թվակազմի ավելացմանը

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվական	Ստացված արդյունք

Մշակել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված քննիչների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը և քննիչների թվակազմի ավելացմանը:	ՀՀ ԱՆ, ՀՀ ֆինանսների նախարարություն Քննչական կոմիտե (համաձայնությամբ), Հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ):	Քննիչների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը և քննիչների թվակազմի ավելացմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթը մշակվել է:	**Գործողությունը չի կատարվել** Օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթը մշակված չէ

Համաձայն Ֆինանսների նախարարությունից ԻՀԱ փոխանցված տեղեկատվության՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում կատարված լրացումներով և փոփոխություններով պայմանավորված (24.03.2021թ. ՀՕ-152-Ն) Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների համար (ի տարբերություն Քննչական կոմիտեի և Հատուկ քննչական ծառայության քննիչների) սահմանվել են պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման ավելի բարձր գործակիցներ, ինչպես նաև սահմանվել է, որ առանձնակի ռիսկային, բարդություններով պայմանավորված և մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնող անձանց համար, օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի հարյուր տոկոսի չափով:

Ըստ ՖՔԽ-ի մասնակիցների՝ առկա է խնդիր դատախազական ու քննչական մարմինների երաշխիքների փոփոխության, դրա արդյունքում նաև ծանրաբեռնվածության լուծումը իրար հետ կապելու առումով: Անհրաժեշտ աշխատեղերի համալրումը լիովին չի կատարվում և թափուր աշխատատեղերը մնում են դատարկ: Միաժամանակ, փորձ է կատարվում Հակակոռուպցիոն կոմիտե ներգրավվել առավել փորձառու քննիչներին՝ այդպիսով թափուր թողնելով մյուս աշխատատեղերը: Այսպիսով, այս փոփոխություններով համակարգային բարելավում չի կատարվում: Քննիչների և դատախազների աշխատավարձի բարձրացմամբ համապատասխան հաստիքների աշխատողների թվաքանակի բարձրացմամբ գաղափարը իրատեսական չէ: Կոմիտեն իր հերթին չի կիսում այս մտահոգություններ, նշելով, որ «Հակակոռուպցիոն կոմիտեի» մասին օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով կարգավորում են Կոմիտեի ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջները և պաշտոնի նշանակելու պայմանները:

Համաձայն ՖԽՔ-ի մասնակիցների, շեշտը անհրաժեշտ է դնել քննչական և դատախազական գործունեության հեղինակության և վստահության բարձրացման վրա: ՖԽՔ մասնակիցներից մեկը որպես հեղինակության և վստահության բարձրացման լավագույն միջոցներ առաջարկեց բովանդակային տեսաֆիլմերի, տեսահոլովակների կամ այլ իրազեկման նյութերի պարբերաբար ներկայացումը՝ հիմնվելով ԱՄՆ գործընկերների փորձի վրա: Ինչպես նաև ապահովել որոշակի սոցիալական երաշխիքներ, որոնց բովանդակությունը կհամապատասխանի համակարգում առկա կարիքներին, մասնավորապես՝ մարզերում աշխատող քննիչների և դատախազների համար (օր՝ բժշկական ապահովագրություն):

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

ՈԼՈՐՏ 7. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Նպատակ 11. Քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխումներ[20]

Ամփոփագիր Նպատակ 11. Քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխումներ			
Հավելված 2	2019 2-րդ կիսամյակ	2020 1-ին կիսամյակ	2020 2-րդ կիսամյակ
Նախատեսված գործողությունների թիվ	**5**	**5**	**0**
որից ժամկետում կատարված՝	5	1	0
որից կատարված ժամկետի որոշակի խախտմամբ	0	2	0
որից Կատարված ժամկետի էական խախտմամբ	0	2	0
որից չի կատարվել	0	0	0
կատարողական ցուցանիշ	**80%**		

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 2)՝

- Քրեական ենթամշակույթի վերացում
- Այլընտրանքային պատժի համակարգի ներդնում
- Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ներդնում
- Քրեական դատավարության օրենսդրության բարեփոխում
- Այլընտրանքային խափանման միջոցների ներդնում
- Համաձայնեցման (plea bargaining) և համագործակցության վարույթներ
- Անչափահասների և խոցելի անձանց մասնակցությամբ վարույթների կատարելագործում
- Քրեական գործերով իրավական փոխօգնության արդյունավետ կարգավորման նախատեսում

Գործողություն 1. Մշակել և ԱԺ ներկայացնել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծ

[20] Այս հատվածում սույն նպատակի ներքո ներկայացված գործողությունների հերթականությունը չի համապատասխանում Հավելված 2-ում ներկայացված հերթականությանը, քանի որ իրականացվել են ՀՀ քրեական նոր օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքին վերաբերող համանման գործողությունների խմբավորումներ՝ այն ընթերցողի համար առավել ընկալելի դարձնելու նպատակով:

Գործողություն	Պատասխանատու մարմին	2019թ.-ի 2-րդ կիսամյակ	2020 թ.-ի 1-ին կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Մշակել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծ:	ՀՀ ԱՆարդարադատության նախարարություն	ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը մշակվել է:		ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը մշակվել է:	**Կատարվել է ժամկետում** 2019 թվականի 2-րդ կիսամյակում ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:
Կազմակերպել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի հանրային քննարկումը:	ՀՀ ԱՆ	ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը քննարկվել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ, ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակվել է:		ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի՝ բոլոր շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցված տարբերակը մշակված է, առկա է նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթերթը:	**Կատարվել է ժամկետում** 2019 թվականի երկրորդ կիսամյակում ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը քննարկվել է ՔՀԿ ներկայացուցիչների և շահագրգիռ կողմերի հետ:
ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության, ապա՝ ՀՀ ԱԺ քննարկմանը:	ՀՀ ԱՆ	ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից:	ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով:	ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	**Կատարվել է ժամկետում** 2020 թվականի առաջին կիսամյակում ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ:

Ըստ ՀՀ ԱՆ-ի կողմից ԻՀԱ-ին տրամադրած տեղեկատվության՝ 2019 թվականի 2-րդ կիսամյակում ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից, ապա 2020 թվականի առաջին կիսամյակում ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: ՀՀ ԱԺ ներկայացված նախագծով ՀՀ քրեական օրենսդրությունը կատարելագործվել է, արդիականացվել է պատժահամակարգը, հստակեցվել են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու և քրեական պատասխանատվությունից ազատելու հետ կապված հարցերը, բարելավվել են անչափահասների նկատմամբ քրեական

ներգործության միջոցները, վերանայվել է հանցանք համարվող արարքների շրջանակը, հստակեցվել են հանցանքների որակման կանոնները, վերացվել են գործող օրենսգրքում առկա հակասությունները: 2019 թվականի երկրորդ կիսամյակում ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը քննարկվել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ, ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակվել է: Այսպիսով, նոր ՀՀ քրեական օրենգիրքը ընդունվել է 05.05.2021 թվականին ՀՀ ԱԺ-ի կողմից, ստորագրվել է 27.05.2021 թվականին ՀՀ նախագահի կողմից: Ուժի մեջ է մտնելու 01.07.2022 թվականից:

Այսպիսով՝ **այս գործողություն իր ենթագործողություններով կատարվել է ժամկետում:**

Գործողություն 2. Մշակել և ԱԺ ներկայացնել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ

Գործողություն	Պատասխանատու մարմին	2019թ.-ի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Մշակել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ:	ՀՀ ԱՆ	ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակվել է:	ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակվել է:	**Կատարվել է ժամկետում** 2019 թվականի 2-րդ կիսամյակում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակվել է
Կազմակերպել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի հանրային քննարկումը:	ՀՀ ԱՆ	ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը քննարկվել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ, ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակվել է:	ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի՝ բոլոր շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցված տարբերակը մշակված է, առկա է նախագծի վերաբերյալ ամփոփաթերթը:	**Կատարվել է ժամկետում** ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը քննարկվել է ՔՀԿ ներկայացուցիչների և շահագրգիռ կողմերի հետ
ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծներկայացնել ՀՀ կառավարության, ապա՝ ՀՀ ԱԺ քննարկմանը:	ՀՀ ԱՆ	ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից:	ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ:	**Կատարվել է ժամկետում** ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծին, ապա *ըստ ՀՀ ԱՆ-ի կողմից ԻՀԱ-ին տրամադրած տեղեկատվության*՝ 2019 թվականի 2-րդ կիսամյակում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակվել է: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով հստակեցվել և կատարելագործվել են ՀՀ-ում քրեական վարույթի ընթացակարգերը, ներդրվել են համաձայնեցման և համագործակցության վարույթներ, քրեական վարույթի մասնակիցների գործառույթները և դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները, բարելավվել են քրեական վարույթում մարդու իրավունքների պաշտպանության օրենսդրական հիմքերը և գործնական կառուցակարգերը, արդիականացվել են քննչական և այլ դատավարական գործողությունների կատարման վերաբերյալ կարգավորումները, բարեփոխվել են դատական ակտերի վերանայման հետ կապված կանոնակարգումները, օրենսգիրքը համապատասխանեցվել է ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 4-րդ փուլի արդյունքում ներկայացված առաջարկներին: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը քննարկվել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ, ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակվել է: Բոլոր շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցված տարբերակը մշակված է, առկա է նախագծի վերաբերյալ ամփոփաթերթը:

Այսպիսով, նոր ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ընդունվել է 30.06.2021 թվականին Ազգային Ժողովի կողմից, ստորագրվել է 27.07.2021 թվականին ՀՀ Նախագահի կողմից, ուժի մեջ է մտնելու 01.07.2022 թվականին:

Այսպիսով՝ **այս գործողություն իր ենթագործողություններով կատարվել է ժամկետում:**

Գործողություն	**Պատասխանատու մարմին**	**2019թ.-ի 2-րդ կիսամյակ**	**2020 թ.-ի 1-ին կիսամյակ**	**Ստուգման միջոց**	**Ստացված արդյունք**
ՀՀ քրեական նոր օրենսգրքի վերաբերյալ քրեական վարույթի բոլոր հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստումներ:	ՀՀ ԱՆ, ՀՀ արդարադատության ակադեմիա	Ընտրվել են վերապատրաստումների ծրագրերի մշակման և վերապատրաստումների անցկացման համար մասնագետներ, մշակվել են վերապատրաստման ծրագրերի հիմնական ուղղություններ:	Մշակվել են վերապատրաստման ծրագրերը, անցկացվում են վերապատրաստումներ:	Մշակվել են քրեական վարույթի հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստման ծրագրեր, անցկացվում են վերապատրաստումներ:	**Գործողությունը կատարվել է ժամկետի որոշակի խախտմամբ**
ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի վերաբերյալ քրեական վարույթի բոլոր հանրային մասնակիցների և	ՀՀ ԱՆ, ՀՀ արդարադատության ակադեմիա	Ընտրվել են վերապատրաստումների ծրագրերի մշակման և վերապատրաստումների անցկացման համար մասնագետներ, մշակվել են վերապատրաստման	Մշակվել են վերապատրաստման ծրագրերը, անցկացվում են վերապատրաստումներ:	Մշակվել են քրեական վարույթի հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստման ծրագրեր, անցկացվում են	**Գործողությունը կատարվել է ժամկետի որոշակի խախտմամբ**

դատավորների վերապատրաստում ներ:		ծրագրերի հիմնական ուղղություններ:		վերապատրաստումն եր:	

Ըստ 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ վերապատրաստումների իրականացումը և՛ ՀՀ քրեական նոր օրենսգրքի, և՛ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի վերաբերյալ գնահատվել է «մասնակի կատարված»: Զեկույցում, մասնավորապես՝ նշվում է, որ մշակվել են վերապատրաստման ծրագրերը, որոնցում ընդգրկվել են ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգային դրույթներին, նախատեսվող փոփոխություններին վերաբերող թեմաները: Մշակված ծրագրի հիման վրա իրականացվել են քրեական վարույթի հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստումներ: Իրականացվել են քրեական վարույթի հանրային մասնակիցների և դատավորների իրազեկմանն ուղղված աշխատանքները՝ քրեական նոր օրենսգրքի կարգավորումների վերաբերյալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական նոր օրենսգիրքը դեռևս ամբողջությամբ ընդունված չէ՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի վերաբերյալ քրեական վարույթի բոլոր հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստումների իրականացմանն ուղղված աշխատանքները չեն սկսվել: Համանման տեղեկատվություն է տրամադրվել նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի վերաբերյալ վերապատրաստումների շուրջ:

Համաձայն Արդարադատության ակադեմիայի կողմից տրամադրված տեղեկատվության՝ Քրեական նոր օրենսգրքի կարգավորումներին վերաբերվող վերապատրաստումներն անցկացվել են Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրով: Քրեաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլով (Քրեաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլով նախատեսված դասընթացները ներառել են Քրեական նոր օրենսգրքի կարգավորումներին վերաբերվող հիմնահարցեր) նախատեսված դասընթացներով 2021 թվականին վերապատրաստվել է 76 դատավոր Հայաստանի Հանրապետությունից, 7-ը՝ Արցախի Հանրապետությունից, 2020 թվականին՝ 78 և 2019 թվականին՝ 77 դատավոր Հայաստանի Հանրապետությունից:

Քրեական նոր օրենսգրքի կարգավորումներին վերաբերվող վերապատրաստումներն անցկացվել են Դատախազների տարեկան վերապատ-րաստման ուսուցման ծրագրով: Հատուկ մասնագիտական դասընթացներով (Հատուկ մասնագիտական դասընթացները ներառել են Քրեական նոր օրենսգրքի կարգավորումներին վերաբերվող հիմնահարցեր) 2021 թվականին վերապատրաստվել է 158 դատախազ Հայաստանի Հանրա-պետությունից, 33-ը՝ Արցախի Հանրապետությունից, 2020 թվականին՝ 176 Հայաստանի Հանրապետությունից և 2019 թվականին՝ 105 Հայաստանի Հանրապետությունից և 12 Արցախի Հանրապետությունից:

Քրեական նոր օրենսգրքի կարգավորումներին վերաբերվող վերապատրաստումներն անցկացվել են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչներ) վերապատրաստման ուսուցման ծրագրով: 2021 թվականին վերապատրաստվել է 58 քննիչ, 2020 թվականին՝ 247 քննիչ և 50 ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչ և 2019 թվականներին՝ 270 քննիչ:

2021 թվականի սեպտեմբերի 3-ին Արդարադատության ակադեմիայի և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Հայաստանում արդարադատության համակարգի ամրապնդում» ծրագրի շրջանակում «ՀՀ քրեական նոր օրենսգրքի կիրառման հիմնախնդիրները» թեմայով վերապատրաստվել է ՀՀ տարբեր ատյանների դատարանների շուրջ 15 դատավոր: Նույն ծրագրի շրջանակում 2021 թվականի սեպտեմբերի 17-ին Արդարադատության ակադեմիայում «ՀՀ քրեական նոր օրենսգրքի կիրառման հիմնախնդիրները» թեմայով վերապատրաստվել է 11 դատախազ և 11 քննիչ: 2021 թվականի հոկտեմբերի 1-3-ը Աղվերանում անցկացվել է վերապատրաստում դասընթացավարների համար՝ նվիրված ՀՀ քրեական նոր օրենսգրքին: Վերապատրաստումն իրականացվել է Արդարադատության ակադեմիայի և ԵԽ-ի հետ համատեղ՝ «Աջակցություն քրեական բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում» ծրագրի շրջանակում: Մասնակցել են 10 դատավոր և դատախազ:

Համաձայն Արդարադատության ակադեմիայի կողմից ԻՀԱ ներկայացված տեղեկատվության՝ 2021 թվականի սեպտեմբերի 24-ին «Հայաստանում արդարադատության համակարգի ամրապնդում» ծրագրի շրջանակում «ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կիրառման հիմնախնդիրները» թեմայով վերապատրաստվել է 15 դատավոր: Նույն ծրագրի շրջանակում 2021 թվականի հոկտեմբերի 1-ին Արդարադատության ակադեմիայում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի վերաբերյալ անցկացվել է 9 դատախազի և 8 քննիչի վերապատրաստում: 2021 թվականի հոկտեմբերի 8-ից 10-ը Աղվերանում անցկացվել է Արդարադատության ակադեմիայի, Փաստաբանական դպրոցի, Ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի 16 դասընթացավարների վերապատրաստում՝ նվիրված Քրեական դատավարության նոր օրենսգրքի առկա հարցերին:

Պետական մարմինների և շահագրգիռ կողմերի հետ ՖԽՔ-ների ժամանակ անդրադարձ կատարվեց վերապատրաստումների բովանդակային կողմին, ինչի առնչությամբ նշվեց, որ վերապատրաստումներին որպես մասնակից հանդես են գալիս Արդարադատության ակադեմիայում դասավանդող անձինք: Վերապատրաստումներին կիրառվում են նյութեր, որոնք վերաբերում են նոր ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի արդի հարցերին:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետի որոշակի խախտմամբ:**

Գործողություն	**Պատասխանատու մարմին**	**2019թ.-ի 2-րդ կիսամյակ**	**2020 թ.-ի 1-ին կիսամյակ**	**Ստուգման միջոց**	**Ստացված արդյունք**
ՀՀ քրեական նոր օրենսգրքի օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման	ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ ԱՆ, ԲԴԽ (համաձայնությամբ), Քննչական կոմիտե (համաձայնությամբ), Գլխավոր	Մշակվել է Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին օրենսդրական	Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին սկսել են տրամադրվել օրենսդրական	Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին օրենսդրական փոփոխություններից	**Կատարվել է ժամկետի էական խախտմամբ** Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի

համար անհրաժեշտ նյութատեխնիկակա ն աջակցություն տրամադրել քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին:	դատախազություն (համաձայնությամբ), Հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ), ՀՀ ոստիկանություն	փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկը, առաջնահերթությունն երը և ժամանակա-ցույցը:	փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները՝ ըստ առաջնահերթությունն երի և ժամանակացույցի:	բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկը, առաջնահերթությունն երը և ժամանակա-ցույցը մշակված են, միջոցները սկսել են տրամադրվել:	շրջանակներում կնքված պայմանագրերով քրեական վարույթն իրականացնող մարմիններին տրամադրվել է անհրաժեշտ նյութատեխնիկական աջակցություն 2021 թ երկրորդ կիսամյակի ընթացքում:
ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկակա ն աջակցություն տրամադրել քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին:	ՀՀ ֆինանսների նախարարություն	Մշակվել է Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկը, առաջնահերթություն-ները և ժամանակացույցը:	Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին սկսել են տրամադրվել օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները՝ ըստ առաջնահերթությունն երի և ժամանակացույցի:	Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկը, առաջնահերթությունն երը և ժամանակացույցը մշակված են, միջոցները սկսել են տրամադրվել:	**Իրականացվել է ժամկետի էական խախտմամբ** Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրերով քրեական վարույթն իրականացնող մարմիններին տրամադրվել է անհրաժեշտ նյութատեխնիկական աջակցություն 2021 թ երկրորդ կիսամյակի ընթացքում:

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ վերապատրաստումների իրականացումը և՛ ՀՀ քրեական նոր օրենսգրքի, և՛ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի վերաբերյալ գնահատվել է «կատարված չէ»: Զեկույցում նշվում է, որ նախատեսված օրենսդրական փոփոխությունները չեն հանգեցնում ՀՀ ոստիկանության գործառույթների այնպիսի փոփոխության, որը կարող է առաջացնել լրացուցիչ նյութատեխնիկական միջոցների ձեռքբերման անհրաժեշտություն:

Համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ԻՀԱ տրամադրված տեղեկատվության՝ նյութատեխնիկական բազայով ապահովման նպատակով ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է. 1) դատարանների համար՝ 2019թ. շուրջ 704.0 մլն դրամ, որից փաստացի ծախսվել է 627.1 մլն դրամ և 2020թ. շուրջ 629.5 մլն դրամ, որից փաստացի ծախսվել է 441.0 մլն դրամ, 2) Քննչական կոմիտեի համար՝ 2019թ. շուրջ 26.4 մլն դրամ, որից փաստացի ծախսվել է 26.3 մլն դրամ և 2020թ. շուրջ 27.5 մլն դրամ, որից փաստացի ծախսվել է 22.5 մլն դրամ, 2) Դատախազության համար՝ 2019թ. շուրջ 31.1 մլն դրամ, որից փաստացի ծախսվել է 29.1 մլն դրամ և 2020թ. շուրջ 40.8 մլն դրամ, որից փաստացի ծախսվել է 28.7 մլն դրամ: ՀՀ կառավարության 08.07.2021թ. N 1113-Ա որոշմամբ՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված թիվ 8539-AM վարկային համաձայնագրի շրջանակներում պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրերով քրեական վարույթն իրականացնող մարմիններին տրամադրվել է անհրաժեշտ նյութատեխնիկական աջակցություն:

Այսպիսով՝ **Գործողությունն կատարվել է ժամկետի էական խախտմամբ:**

Նպատակ 12. Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում

Ամփոփագիր Նպատակ 12 Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում			
Հավելված 2	2019 2-րդ կիսամյակ	2020 1-ին կիսամյակ	2020 2-րդ կիսամյակ
Նախատեսված գործողությունների թիվ	**0**	**0**	**3**
որից ժամկետում կատարված՝	0	0	0
որի չի կատարվել	0	0	3
կատարողական ցուցանիշ	**0%**		
Հավելված 3	2021 թ.		
Նախատեսված գործողությունների թիվ	**3**		
որից ժամկետում կատարված՝	0		
որի չի կատարվել	3		
կատարողական ցուցանիշ	**0%**		

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 2)՝

1. Քաղաքացիական օրենսդրության բարեփոխում
2. Քաղաքացիական դատավարության իրավակիրառ պրակտիկայում ծագած խնդիրների գույքագրման արդյունքներով արձանագրված խնդիրների լուծում
3. Քաղաքացիական դատավարությունում պարտադիր հաշտարարության դեպքերի սահմանումը և հաշտարարի նշանակման ընթացակարգի կատարելագործում /հավելված 3/
4. Քաղաքացիական օրենսդրության բարեփոխում Հայցադիմումը վերադարձնելու ինստիտուտի վերանայում /հավելված 3/

Գործողություն 1. Մշակել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելուն ուղղված օրենքների նախագծեր:

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Մշակել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և այլ իրավական ակտերում	ՀՀ ԱՆ, ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	Օրենքի նախագծերը մշակվել են, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել են ՀՀ	Օրենքի նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության	Օրենքի նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ:	**Գործողությունը չի կատարվել** Առկա են նախագծեր, որոնք

փոփոխություններ կատարելուն ուղղված օրենքների նախագծեր:		վարչապետի աշխատակազմ:	կողմից և ներկայացվել են ԱԺ:		դեռևս լրամշակման փուլում են

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատվել է «մասնակի կատարված»: Համաձայն այս զեկույցի նախագծերը մշակվել են: Միևնույն ժամանակ մի շարք հարցերի մասով փորձագիտական աջակցություն ստանալու համար ակնկալվում է ԵԽ-ի աջակցությունը. այդ մասով մշակվել է տեխնիկական առաջադրանք և ներկայացվել ԵԽ-ի գործընկերներին: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով առաջացած ռազմական դրության, ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով:

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, մշակվել և շրջանառվել է Քաղաքացիական օրենսգրքում և այլ իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող փաթեթ, որով կարգավորվում են էլեկտրոնային պայմանագրերի, պայմանագրի օրինակելի պայմանների, պետական կարիքների համար կնքվող պայմանագրերի վերաբերյալ հարցեր և այլն: Մտավոր սեփականության օրենսդրության բարելավման մասով բոլոր իրավական ակտերը մշակվել և շրջանառվել են Էկոնոմիկայի նախարարության կողմից:

Շահակիցների հետ անցկացված ՖԽՔ-ի ընթացքում փորձագետները կարևորեցին քաղաքացիական և վարչական դատավարություններում էլեկտրոնային այնպիսի գործիքների ներդրումը, որոնք հնարավորություն կտան հայցադիմումները և այլ դատավարական փաստաթղթեր ներկայացնել էլեկտրոնային եղանակով, այդ թվում՝ datalex.am հարթակի միջոցով, որը ներկայումս գտնվում է վերակառուցման փուլում: Հիշյալը առավել արդիական դարձավ վերջին շրջանում համավարակով պայմանավորված սահմանափակումների լույսի ներքո:

Այսպիսով, քաղաքացիական օրենսդրության բարեփոխումների մասով փաստացի Ռազմավարությունից բխող որևէ գործողություն պատշաճ կերպով իրականացված չէ: Առկա են նախագծեր, որոնք դեռևս լրամշակման փուլում են:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Գործողություն	**Պատասխանատու մարմին**	**2020 թվականի 1-ին կիսամյակ**	**2020 թվականի 2-րդ կիսամյակ**	**Ստուգման միջոց**	**Ստացված արդյունք**
Մշակել ՀՀ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, «Ավտոտրանսպորտային	ՀՀ ԱՆ, ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	Օրենքի նախագծերը մշակվել են, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել են ՀՀ	Օրենքի նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ:	Օրենքի նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ:	**Գործողությունը չի կատարվել** Առկա են նախագծեր, որոնք

միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի և նշված օրենքներից բխող այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելուն ուղղված նախագծեր:		վարչապետի աշխատակազմ:			դեռևս լրամշակման փուլում են

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունն իրականացվել է «մասնակի»: Համաձայն այս զեկույցի՝ «Բանկային ավանդների ներգրավման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը սույն թվականի հունիսի 3-ին ԱԺ-ի կողմից ընդունվել է առաջին ընթերցմամբ և ներկայումս գտնվում է ԱԺ-ում: Այնուամենայնիվ, գործողությամբ նախատեսված մյուս օրենքներում փոփոխություններ կատարելու մասով ներկայումս կատարվում են ուսումնասիրություններ՝ փորձագետներ ներգրավելու և նախագծման աշխատանքներն իրականացնելու համար: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով առաջացած ռազմական դրության, ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով:

Համաձայն ԿԲ կողմից ԻՀԱ տրամադրված տեղեկատվության՝ այս գործողության կատարման շրջանակներում ընդունվել են «Բանկային ավանդների ներգրավման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքները:

Հիմնվելով ՖԽՔ-ի վրա՝ հարկ է ավելացնել, որ Քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունները ուղղված են էլեկտրոնային պայմանագրերի կնքման կարգի սահմանմանը և նշանակալի բարեփոխումների սահմանմանը: Նախագիծը դեռևս մշակվել է 2020 թվականին դրվել է հանրային քննարկման և քննարկվել է շահագրգիռ մարմինների հետ: Արդյունքում, ստացված նկատառումների և առաջարկների հիման վրա նախագիծը

կրկին լրամշակվել է: 2021 թվականին լրամշակման արդյունքում կրկին դրվել է հանրային քննարկման: Ներկայումս ստացված առաջարկների հիման վրա այն վերջնականացվում է, որպեսզի փոխանցվի ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագծի մշակումը առավելապես կարևորվում է, քանի որ էլեկտրոնային տեխնոլոգիաների զարգացման փուլում օրենսդրական կարգավորումները պետք է հնարավորինս պաշտպանեն սպառողների իրավունքները էլեկտրոնային պայմանագրեր կնքելիս: Կարգավորումներ են նաև նախատեսվում էլեկտրոնային հարթակների միջոցով էլեկտրոնային մուտքագրման վերաբերյալ, հավելվածների ներբեռման արդյունքում պայմանագրերի կնքմանը:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Գործողություն 2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառության ընթացքում ծագած խնդիրների առանձնացում և դրանց լուծման նպատակով փոփոխությունների կատարում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառության ընթացքում ծագած խնդիրների առանձնացում և դրանց լուծման նպատակով փոփոխությունների կատարում:	ՀՀ ԱՆ, ՀՀ ԲԴԽ (համաձայնությամբ):	Մշակվել է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից:	«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	**Գործողությունը չի կատարվել** «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը դեռևս մշակված չէ

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատվել է «մասնակի կատարված»: Համաձայն զեկույցի՝ նախագծերը գտնվում են մշակման փուլում, քննարկումներ են իրականացվում դատական իշխանության ներկայացուցիչների հետ: Այս մասով ակնկալվում է միջազգային փորձագիտական աջակցություն Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի ծրագրով, հանդիպումներ են տեղի ունեցել ծրագրի փորձագետների հետ: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով:

Այս մասով կարելի է ասել, որ հիմնականում բոլոր օրենքների մեջ փոփոխություններ արդեն իսկ կատարվել են և ընդունվել, սակայն «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը դեռևս մշակված չէ: Անհրաժեշտ է նաև ավելացնել, որ համաձայն ԱՆ ներկայացուցիչների, նոր ռազմավարության մշակման փուլում այս միջոցառման նպատակահարմարությունը կարող է դառնալ քննարկման առարկա:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Ռազմավարական ուղղություն (Հավելված 3)՝

- Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում

Գործողություն 1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում և Հաշտարարության մասին օրենքում փոփոխությունների կատարում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվական	Ստացված արդյունք
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում և Հաշտարարության մասին օրենքում փոփոխությունների կատարում:	ՀՀ ԱՆ, ԲԴԽ (համաձայնությամբ)	Մշակվել է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հաշտարարության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծեր, նախագծերը սահմանված կարգով շրջանառվել և ուղարկվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:	**Գործողությունը չի կատարվել** Օրենսդրական նախագծերը մշակման փուլում են

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատված է «մասնակի կատարված»: Համաձայն այս զեկույցի՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հաշտարարության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը գտնվում են մշակման փուլում: Արդեն առկա են «Հաշտարարության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի և համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախնական տարբերակները: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով առաջացած ռազմական դրության ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով:

Ըստ նույն աղբյուրի՝ «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների վերաբերյալ նախագիծը մշակվել է, իրականացվել է հանրային քննարկում: Մշակված տարբերակի շուրջ քննարկումներ են կազմակերպվել նաև դատական իշխանության ներկայացուցիչների հետ: Արդյունքում ստացված նկատառումների և առաջարկների հիման վրա այն վերամշակվել է: Վերամշակված տարբերակը մոտ ապագայում կներկայացվի վարչապետի աշխատակազմ: Ակնկալվում է այս օրենքի ընդունմամբ թեթևացնել դատարանների ծանրաբեռնվածությունը: Նախատեսվել է

ընտանեկան որոշ հարցերով պարտադիր հաշտարարության ինստիտուտը, ինչպես նաև նախատեսվել են մի շարք երաշխիքներ, որպեսզի անձինք չկրեն ֆինանսական բեռ, ինչ համար ներդրված է պետական բյուջեի որոշակի փոխհատուցման համակարգ: Նախատեսվել է առցանց հաշտարարության իրականացման հնարավորություն, ինչպես նաև հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության, կառավարման մարմինների, կարգապահական պատասխանատվության ենթարկելու մի շարք իրավական կարգավորումներ: Այս փոփոխություններով ակնկալվում է հաշտարարության ինստիտուտի բարելավում:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Գործողություն 2. Մշակել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելուն ուղղված օրենքների նախագծեր

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվական	Ստացված արդյունք
Մշակել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելուն ուղղված օրենքների նախագծեր:	ՀՀ ԱՆ	Օրենքի նախագծերը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	**Գործողությունը չի կատարվել** Նախագծերը գտնվում են մշակման փուլում

Համաձայն 2020 թվականի առաջին կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը կատարված է մասնակի: Զեկույցում նշվում է, որ նախագծերը գտնվում են մշակման փուլում, կատարվում է նաև միջազգային փորձի ուսումնասիրություն: Միևնույն ժամանակ մի շարք հարցերի մասով փորձագիտական աջակցություն ստանալու համար ակնկալվում է ԵԽ աջակցությունը. այդ մասով մշակվել է տեխնիկական առաջադրանք և ներկայացվել ԵԽ գործընկերներին: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով:

Այսպիսով, համաձայն այս զեկույցի գնահատման մեթոդաբանության գործողությունը չի կատարվել:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Գործողություն 3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ վերանայելով հայցադիմումները վերադարձնելու ինստիտուտը

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվական	Ստացված արդյունք
ՀՀ քաղաքացիական դատավարության	ՀՀ ԱՆ, ՀՀ ԲԴԽ (համաձայնությամբ):	Մշակվել է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում	**Գործողությունը չի կատարվել**

օրենսգրքում փոփոխություններ կատարելու միջոցով հայցադիմումը վերադարձնելու ինստիտուտի վերանայում:		փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	Օրենսդրական նախագծերը չեն մշակվել

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, գործողության կատարումը գնահատվել է «մասնակի»: Ըստ զեկույցի՝ ԵԽ ծրագրի շրջանակներում ուսումնասիրություններ են ընթանում առկա խնդիրների գույքագրման ուղղությամբ: Աշխատանքները ձգձգվել են երկրում նոր ընտրությունների անցկացման և դրա արդյունքում ձևավորված նոր Կառավարության գործունեության ծրագրով հնարավոր առաջնահերթությունների որոշմամբ պայմանավորված:

Հիմնվելով ՖԽՔ-ի վրա՝ կարող ենք նշել, որ սույն գործողության կատարումն այժմ ընթացքի մեջ է. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի փոփոխություններ կատարելու առումով ԵԽ-ի շրջանակներում ուսումնասիրություններ են կատարվում գործնականում առաջացած խնդիրները դուրս բերելու նպատակով, այդ թվում ուսումնասիրվում է թե՛ դատական պրակտիկան, թե՛ տարբեր նկատառումները և առաջարկները: Ուսումնասիրության ավարտից հետո կմեկնարկեն նախագծի մշակման աշխատանքները:

Այս նպատակի ներքո նախատեսված գործողությունները մասնակի/ոչ ամբողջությամբ կատարելու վերաբերյալ պատկան մարմինների ներկայացուցիչների կողմից նշվեց, որ խնդիրը 2020 թվականին ծագած ոչ կանխատեսելի հանգամանքներն են եղել՝ համավարակի, պատերազմի, նոր Կառավարության ձևավորումը:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Նպատակ 13. Վարչական արդարադատություն և վարչական վարույթ

Ամփոփագիր Նպատակ 13. Վարչական արդարադատություն և վարչական վարույթ			
Հավելված 2	2019 2-րդ կիսամյակ	2020 1-ին կիսամյակ	2020 2-րդ կիսամյակ
Նախատեսված գործողությունների թիվ	**0**	**0**	**10**
որից ժամկետում կատարված՝	0	0	2
որից կատարված է ժամկետ որոշակի խախտմամբ	0	0	1
որից չի կատարվել	0	0	7
կատարողական ցուցանիշ	**30%**		
Հավելված 3	2021 թ.		
Նախատեսված գործողությունների թիվ	**1**		
որից ժամկետում կատարված՝	0		
որից չի կատարվել	1		
կատարողական ցուցանիշ	**0%**		

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 2)՝

1. Վճռաբեկ դատարանի վարչական պալատի ստեղծում
2. Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման վարչադատավարական կարգի վերացում
3. Վարչական դատավարությունում ծանուցման ընթացակարգերի բարելավում
4. Գրավոր և պարզեցված ընթացակարգերի կիրառում վարչական դատավարությունում
5. Պետական տուրքի հետ կապված կարգավորումների վերանայում
6. Վարչական դատավարության հատուկ վարույթների արդյունավետության բարձրացում
7. Վարչական մարմինների և նրանց գործողությունների վիճարկման շրջանակի ընդլայնումը
8. Վարչական կարգով վարչական ակտերի բողոքարկման արդյունավետության բարձրացում
9. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության կատարելագործում
10. Վարչական իրավախախտումների համար նախատեսված տույժերի վերանայում

Գործողություն 1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ նախատեսելով Վճռաբեկ դատարանի վարչական պալատ

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ նախատեսելով Վճռաբեկ դատարանի վարչական պալատ:	ՀՀ ԱՆ, ԲԴԽ (համաձայնությամբ)	«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը մշակվել են, սահմանված կարգով շրջանառվել են և ուղարկվել ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ:	«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ:	**Կատարվել է ժամկետում**

2020 թվականի 1-ին կիսամյակում «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը մշակվել են, սահմանված կարգով շրջանառվել են և ուղարկվել ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2020 թվականի 2-րդ կիսամյակում «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ: Այսպիսով, Վճռաբեկ դատարանում վարչական պալատի ստեղծմանն ուղղված նախագիծը մշակվել և շրջանառվել է, որի հիման վրա լրամշակվել և կազմվել է նախագծի ամփոփաթերթը:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

Գործողություն 2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում և ՀՀ քրեական դատավարու-թյան օրենսգրքում կատարել փոփոխություններ:	ՀՀ ԱՆ, ԲԴԽ (համաձայնությամբ):	«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը մշակվել են, սահմանված կարգով շրջանառվել և ուղարկվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ:	«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ:	**Գործողությունը չի կատարվել** Օրենսդրական նախագծերը չեն մշակվել

ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցում, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, սույն գործողությունը գնահատվել է «կատարված մասնակի»: Ինչպես նշված է զեկույցում, Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի ՍԴՈ-1439 որոշման հիման վրա մշակվել և 2019 թվականի հուլիսի 16-ի սահմանված կարգով վարչապետի աշխատակազմ է ներկայացվել օրենսդրական փաթեթ: Միասնական մոտեցում ձևավորելու նպատակով՝ քննարկումներ են տեղի ունեցել շահագրգիռ կողմերի հետ: Ըստ այդմ՝ Նախագիծը լրամշակվել է և 2020 թվականի հուլիսի 15-ին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ, որտեղից էլ առաջարկներ են ստացվել Նախագծում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Ներկայումս քննարկումներ են տեղի ունենում շահագրգիռ մարմինների հետ:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Գործողություն 3. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով ծանուցումների նոր ընթացակարգեր

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում	ՀՀ ԱՆ, ՀՀ ԲԽԴ (համաձայնությամբ)	Վարչական դատավարությունում ծանուցումների	«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում	«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում	**Գործողությունը չի կատարվել**

կատարել փոփոխություններ՝ ներդնելով ծանուցումների նոր ընթացակարգեր:		բարեփոխման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրությունն իրականացվել է, մշակվել է «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ:	փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	Օրենսդրական նախագծերը չեն մշակվել

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, գործողությունը գնահատված է «կատարված է մասնակի»: Սույն գործողության շրջանակներում նախագիծը մշակվել է և գտնվում է լրամշակման փուլում՝ հաշվի առնելով շահագրգիռ մարմիններից, այդ թվում՝ դատական իշխանության ներկայացուցիչներից, ստացված առաջարկները: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում նոր ընտրությունների անցկացման և դրա արդյունքում ձևավորված նոր Կառավարության գործունեության ծրագրով հնարավոր առաջնահերթությունների որոշմամբ պայմանավորված:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Գործողություն 4. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով գրավոր և պարզեցված նոր վարույթներ

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով գրավոր և պարզեցված նոր վարույթներ:	ՀՀ ԱՆ, ՀՀ ԲԴԽ (համաձայնությամբ)	Վարչական դատավարությունում պարզեցված և գրավոր ընթացակարգերի վերաբերյալ համապարփակ ուսումնասիրությունն իրականացվել է, մշակվել է «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ:	«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	**Գործողությունը կատարված է ժամկետի որոշակի խախտմամբ** Վարչական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխությունները կատարվել են, ներդրվել են գրավոր և պարզեցված նոր վարույթներ

ԱՆրչական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխությունները կատարվել են, ներդրվել են գրավոր և պարզեցված նոր վարույթներագրգիռ մարմիններից, այդ թվում՝ դ սույնկան դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխությունների մշտադիտարկման զեկույցում, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակու մասին» 2019 թվականի հոկտեմբե

Այսպիսով՝ **Գործողությունը կատարված է ժամկետի խախտմամբ:**

Գործողություն 5. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում և «Պետական տուրքի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով պետական տուրք վճարելու պարտականություն

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում և «Պետական տուրքի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով պետական տուրք վճարելու պարտականություն:	ՀՀ ԱՆ, ՀՀ ԲԽԴ (համաձայնությամբ)	Մշակվել է «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել են և ուղարկվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ:	«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ:	**Գործողությունը կատարված է** «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխությունները կատարված են

«Պետական տուրքի մասին» օրենքի մասով փոփոխություններ կատարված են, անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումների վիճարկումը այլևս ազատված չէ պետական տուրքից: Այս փոփոխության նպատակներից էր կանխել իրավունքի չարաշահման հետ կապված գործողությունները, որը կարող է նպաստել դատարանների բեռնաթափմանը իրավունքի չարաշահումների հայցերի մասով: «Պետական տուրքի մասին» օրենքով հարկադիր կատարումների և որոշումների գործընթացը մտել է պետական տուրքի գանձման տիրույթ: Սակայն այս առումով շահակիցների հետ անցկացված ՖԽՔ-ի ընթացքում ներկայացվեց հակադիր կարծիք, համաձայն որի՝ «Պետական տուրքի մասին» օրենքի կատարված փոփոխությունները իրականում ազդում են դատարանների հասանելիության և մատչելիության վրա. հաճախ քաղաքացիները չունեն բավարար ֆինանսական միջոցներ պետական տուրքը մուծելու, ինչը խոչընդոտում է դատական պաշտանության իրավունքի կիրարկմանը:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարված է:**

Գործողություն 6. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ վերանայելով հատուկ վարույթների տեսակները

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ վերանայելով հատուկ վարույթների տեսակները:	ՀՀ ԱՆ, ՀՀ ԲԽԴ (համաձայնությամբ)	Մշակվել է «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ:	«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	**Գործողությունը կատարված չէ** Օրենքի նախագիծը մշակված չէ

ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցում, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, գործողությունը գնահատված է «կատարված է մասնակի»: Զեկույցից տեղեկանում ենք, որ այս պահին իրականացվում են ուսումնասիրություններ: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում նոր ընտրությունների անցկացման և դրա արդյունքում ձևավորված նոր Կառավարության գործունեության ծրագրով հնարավոր առաջնահերթությունների որոշմամբ պայմանավորված:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարված չէ:**

Գործողություն 7. Վարչական մարմինների և նրանց գործողությունների վիճարկման շրջանակի ընդլայնումը

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում և Վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝	ՀՀ ԱՆ, ՀՀ ԲԽԴ (համաձայնությամբ)	«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը	«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ	«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և «ՀՀ վարչական	**Գործողությունը կատարված չէ** Օրենսդրական նախագծերը մշակված չեն

ընդլայնելով վարչական մարմինների և նրանց գործողությունների վիճարկման շրջանակը:		մշակվել են, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:	կատարելու մասին» օրենքի նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ:	դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ:	

Ըստ ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, գործողությունը գնահատվել է «կատարված է մասնակի»: Ներկայումս իրականացվում են ուսումնասիրություններ: Միջոցառման իրականացմանը ներգրավված է Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում նոր ընտրությունների անցկացման և դրա արդյունքում ձևավորված նոր Կառավարության գործունեության ծրագրով հնարավոր առաջնահերթությունների որոշմամբ պայմանավորված:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարված չէ:**

Գործողություն 8. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով վարչական ակտերի պարտադիր բողոքարկման ընթացակարգեր

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով վարչական ակտերի պարտադիր բողոքարկման ընթացակարգեր:	ՀՀ ԱՆ	«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ:	«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և	**Գործողությունը կատարված չէ** Օրենքի նախագիծը մշակված չէ

				ներկայացվել է ՀՀ ԱԺ:	

ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի համաձայն, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, սույն գործողությունը գնահատված է «կատարված է մասնակի»: Զեկույցում նշվում է, որ այս պահին տարվում են ուսումնասիրությունների իրականացման աշխատանքներ: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում նոր ընտրությունների անցկացման և դրա արդյունքում ձևավորված նոր Կառավարության գործունեության ծրագրով հնարավոր առաջնահերթությունների որոշմամբ պայմանավորված:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարված չէ:**

Գործողություն 9. Վարչական ակտերի վերադասության կարգով բողոքարկման արդյունավետ մեխանիզմների ներդնում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ նախատեսելով վարչական ակտերի վերադասության կարգով բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ:	ՀՀ արդարադատության նախարարություն	«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ:	«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	**Գործողությունը կատարված չէ** Օրենքի նախագիծը մշակված չէ

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, սույն գործողությունը գնահատված է «կատարված է մասնակի»: Ըստ զեկույցում տեղ գտած տեղեկությունների՝ այս պահին կատարվում են ուսումնասիրություններ: Միջոցառման իրականացմանը ներգրավված է Եվրասիա միջազգային

համագործակցության հիմնադրամը: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում նոր ընտրությունների անցկացման և դրա արդյունքում ձևավորված նոր Կառավարության գործունեության ծրագրով հնարավոր առաջնահերթությունների որոշմամբ պայմանավորված:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարված չէ:**

Գործողություն 10. Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունում:	ՀՀ արդարադատության նախարարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ:	Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	**Գործողությունը կատարված չէ** Օրենսգրքի նախագիծը մշակված չէ

ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի համաձայն, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, գործողության կատարումը գնահատված է «մասնակի»: Նախատեսվում է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի մշակում՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարված չէ:**

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 3)՝

- վարչական դատավարության սկզբունքների, ապացույցների, ապացուցման բեռի բաշխման կանոնների, հայցատեսակների դասակարգման, վարչական դատարանի լրացուցիչ որոշումների, վարչական դատարանի վճիռների բողոքարկման շրջանակի, վերաքննության և վճռաբեկության սահմանների վերանայում:

Գործողություն 1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխությունների կատարում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվականի 1-ին կիսամյակ	Ստացված արդյունք
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխությունների կատարում:	ՀՀ ԱՆ, ՀՀ ԲԴԽ (համաձայնությամբ)	Մշակվել է «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	**Գործողությունը կատարված չէ** Օրենսգրքի նախագիծը մշակված չէ

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, գործողությունը գնահատված է «կատարված չէ»: Զեկույցում նշվում է, որ գործողությամբ նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում նոր ընտրությունների անցկացման և դրա արդյունքում ձևավորված նոր Կառավարության գործունեության ծրագրով հնարավոր առաջնահերթությունների որոշմամբ պայմանավորված:

ՖԽՔ-ի ընթացքում արձանագրվեց, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի հետ կապված դեռևս փոփոխություններ չկան:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարված չէ:**

Ընդհանուր առմամբ, քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխման և վարչական արդարադատության և վարչական վարույթի բարեփոխումների նպատակների ներքո գործողությունների մասնակի կատարման պատճառներ նշվեց 2020 թվականին ծագած ոչ կանխատեսելի իրադարձությունները՝ համավարակը, պատերազմը, նոր Կառավարության ձևավորումը: Նշվեց նաև, որ նախագծերի առկա խնդիրների վերհանման ընթացքում ծագում են դրանցից բխող այլ խնդիրներ և ուղղություններ: Այն հարցին, թե որոնք են այդ հավելյալ խնդիրները, ըստ էության իրավասու մարմինների կողմից պատասխան չտրվեց:

ՈԼՈՐՏ 8. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Նպատակ 14. Սնանկության համակարգ

Ամփոփագիր Նպատակ 14՝ Սնանկության համակարգ			
Հավելված 2	2019 2-րդ կիսամյակ	2020 1-ին կիսամյակ	2020 2-րդ կիսամյակ
Նախատեսված գործողությունների թիվ	**0**	**0**	**6**
որից ժամկետում կատարված՝	0	0	4
որից կատարված ժամկետի որոշակի խախտմամբ՝	0	0	2
կատարողական ցուցանիշ	**100%**		
Հավելված 3	2021 թվական		
Նախատեսված գործողությունների թիվ	**3**		
որից ժամկետում կատարված՝	3		
կատարողական ցուցանիշ	**100%**		

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 2)՝

1. Սնանկության կառավարիչների մասնագիտության ձեռք բերման, որակավորման, նշանակման ընթացակարգերի բարելավում, պատասխանատվության և գործունեության արդյունավետության բարձրացման գործիքակազմի ներդնում
2. Սնանկության վարույթում պարտապանի գույքի գույքագրմանը, գնահատմանը և վաճառքին վերաբերող կարգավորումների վերանայում և կատարելագործում
3. Սնանկության վարույթում պարտատերերի, դատավորների (դատարանի) դերակատարման բարձրացում

Գործողություն 1. Ընդունել սնանկության կառավարիչների որակավորման իրականացման կարգ սահմանող նախարարի նորմատիվ իրավական ակտ

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Ընդունել սնանկության կառավարիչների որակավորման իրականացման կարգ սահմանող նախարարի	ՀՀ ԱՆ	Նորմատիվ իրավական ակտի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել է:	Նորմատիվ իրավական ակտն ընդունվել է:	Սնանկության կառավարիչների որակավորման նոր կարգը ընդունվել է և գործում է:	**Կատարվել է ժամկետում** Սնանկության կառավարիչների որակավորման

նորմատիվ իրավական ակտ:					իրականացման կարգ սահմանող նախարարի նորմատիվ իրավական ակտն ընդունված է:

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատված է «կատարված է»: ՖԽՔ-ի ընթացքում պատկան մարմնի ներկայացուցիչը նույնպես տվյալ գործողության վերաբերյալ նշեց, որ այն ըստ էության կատարված է սնանկության կառավարիչների որակավորման իրականացման կարգ սահմանող նախարարի նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ: Արդարադատության նախարարի կողմից 2020 թվականին ընդունվել է թիվ 112-Ն հրաման, որը սահմանում էր նոր կարգը:

Շահակիցների հետ անցկացրած ՖԽՔ-ի ընթացքում շեշտակիորեն կարևորեց նախագծերի, հայեցակարգերի, նոր կենտրոնների բացման շուրջ կատարվող հանրային քննարկումները, որոնք մի շարք գործողությունների համար Ռազմավարությամբ սահմանված չեն: Ռազմավարության մակարդակով պետք է կարևորվեն քաղաքացիական և հասարակական կազմակերպությունների հետադարձ կապը՝ Ռազմավարությամբ կատարվող միջոցառումների վերաբերյալ: Ռազմավարության շրջանակներում բացակայում է հանրային քննարկումներին մասնակիցների կազմը, մասնավորապես՝ թե ո՞ր հասարակական կամ քաղաքական կազմակերպության հետ են նախատեսում կատարել հանրային քննարկում:

Համաձայն փորձագիտական հարցազրույցների, այս գործողության կատարումը շատ կարևոր է՝ պայմանավորված երկու հանգամանքով: Առաջին հերթին հեշտացել է գործընթացը, այն դարձել է ավելի հասանելի և նվազեցվել են տուրքերը: Մյուս կողմից, սնանկության կառավարիչների որակավորման գործընթացը բովանդակային առումով ավելի է բարդացել և այլևս չկա շտեմարանային տրամաբանություն: Նոր ընթացակարգով սահմանվում են ոլորտները որտեղից տրվում են հարցերը:

Այսպիսով՝ **Գործողությունն կատարվել է ժամկետում:**

Գործողություն 2. Նախաձեռնել «Սնանկության մասին» օրենքի գիտագործնական մեկնաբանությունների, ձեռնարկների և (կամ) ուղեցույցների մշակում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Նախաձեռնել «Սնանկության մասին» օրենքի գիտագործնական	ՀՀ ԱՆ, Բարձրագույն ուսումնական հաստատություններ (համաձայնությամբ), Սնանկության	Աշխատանքների իրականացման ժամանակացույցի կազմում, համապատասխան	Նախանշված ուղղությունների հիման վրա համապատասխան աղբյուրների, աշխատությունների	Կազմվել և հրապարակվել են «Սնանկության մասին» օրենքի գիտագործնական	**Կատարվել է ժամկետի որոշակի խախտմամբ (վերապահումով)**

մեկնաբանությունների, ձեռնարկների և (կամ) ուղեցույցների մշակում:	դատարան (համաձայնությամբ)	մասնագետների ներգրավում, աշխատությունների հիմնական ուղղությունների նախանշում:	մշակում, խմբագրական աշխատանքների կազմակերպում, աշխատանքների փորձաքննություն, ամփոփում, հրապարակում:	մեկնաբանությունների, ձեռնարկներ և (կամ) ուղեցույցներ:	«Սնանկության մասին» օրենքի մասին ձեռնարկը գտնվում է հրապարակման փուլում:

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը «կատարված է մասնակի»: Համաձայն այս զեկույցի՝ աշխատանքներ են տարվում ՎԶԵԲ-ի հետ՝ վերջինիս աջակցությամբ ուղեցույցները մշակելու համար:

Ըստ ՖԽՔ-ի արդյունքների՝ աշխատանքներն ավարտվել են և ներկայումս «Սնանկության մասին» օրենքի մասին ձեռնարկը գտնվում է հրապարակման փուլում: Արդյունքում կարող ենք գնահատել, որ գործողությունը կատարված է (վերապահումով), սակայն այն կատարվել է ժամկետների խախտմամբ՝ Ռազմավարությամբ նախատեսված ժամկետից ուշ, ինչի վերաբերյալ դարձյալ ֆոկուս խմբային քննարկման ընթացքում նշվեց, որ աշխատանքների հետաձգման պատճառը եղել է երկրում տիրող անկանխատեսելի իրավիճակը՝ համավարակը, պատերազմը:

Միաժամանակ պետք է նշել, որ ՖՔԽ-ի ընթացքում բարձրացրվեց այն հարցը, որ բուհերը որևէ կերպ չեն ներգրավվել այս գործողության կատարմանը՝ չնայած այն հանգամանքին, որ որպես գործողության համակատարող նշված են նաև բուհերը:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է (վերապահումով) ժամկետի որոշակի խախտմամբ:**

Գործողություն 3. Բարելավել սնանկության կառավարիչների վերապատրաստման ծրագրերը

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Բարելավել սնանկության կառավարիչների վերապատրաստման ծրագրերը:	ՀՀ ԱՆ, Սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունների (համաձայնությամբ)	Աշխատանքների իրականացման ժամանակացույցի կազմում, համապատասխան մասնագետների ներգրավում, վերապատրաստման ծրագրերի հիմնական	Նախանշված ուղղությունների հիման վրա ուսումնասիրությունների իրականացում, վերապատրաստման նոր ծրագրերի մշակում (ծրագրերի արդիականացում),	Կազմվել և հաստատվել են սնանկության կառավարիչների վերապատրաստման նոր ծրագրեր:	**Կատարվել է ժամկետի որոշակի խախտմամբ (վերապահումով)** Դասընթացների ծրագիրը ներկայացված է:

		ուղղությունների նախագծում:	քննարկում, ամփոփում և հաստատում:		

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատված է «կատարված է մասնակի»: Համաձայն այս զեկույցի՝ վերապատրաստումներ իրականացնելու կարգը սահմանող նախարարի՝ «Սնանկության գործով կառավարիչների ամենամյա պարտադիր վերապատրաստումներ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 104-Ն հրամանն ընդունվել է 2020 թվականի մարտի 12-ին: Սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը ներկայացրել է դասընթացների ծրագիրը, որի հիման վրա ԱՆ-ը առաջիկայում ներկայացրել է դասընթացավարների թեկնածուներ: 2020 թվականի համար սնանկության գործերով կառավարիչների վերապատրաստման դասընթացներին, համաձայն «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպության ներկայացրած գրության, 24 ակադեմիական ժամ տևողությամբ մասնակցել են բոլոր կառավարչները (բացառությամբ երկուսի): 2021 թվականի համար «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպությունը հայտարարություն է հրապարակել վերապատրաստման դասընթացների անցկացման մասին:

Պատկան մարմինների հետ ՖԽՔ-ը նույնպես ցույց տվեց, որ գործողությունը կատարված է, սակայն այն կատարվել է ժամկետների խախտմամբ՝ ավելի ուշ, քան նախատեսված էր Ռազմավարությամբ: Նախատեսվում են իրականացնել հեռավար դասընթացներ ՎՀԵԲ-ի աջակցությամբ, որի ծրագրի աշխատանքային տարբերակն արդեն մշակվել է և նախատեսվում է մեկնարկել առաջիկայում: Սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը վերապատրաստման դասընթացների ծրագրերը և ժամանակացույցը հաստատում և հրապարակում է պաշտոնական կայքում (http://www.snank.am/)՝ համաձայն նախարարի հրամանի 9-րդ կետի:

Համաձայն փորձագետների հետ հարցազրույցների, վերապատրաստումների իրականացումն ընդհանուր առմամբ գնահատվում է դրական, սակայն համավարակի պայմաններում առցանց ձևաչափի անցումն նվազեցրել է դրանց արդյունավետությունը:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետի որոշակի խախտմամբ:**

Գործողություն 4. Մշակել գույքի հայտարարագրման ձևանմուշներ, ներդնել գույքագրման և գնահատման գործընթացի նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Մշակել գույքի հայտարարագրման	ՀՀ ԱՆ	«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ	«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ	«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ	**Իրականացվել է ժամկետում**

ձևանմուշներ, ներդնել գույքագրման և գնահատման գործընթացի նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ:		նախատեսող օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	նախատեսող օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից:	նախատեսող օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	Գույքի հայտարարագրման ձևանմուշներ մշակելու և գույքագրման ու գնահատման գործընթացի նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ ներդնելու համար փոփոխություններ են կատարվել «Սնանկության մասին» օրենքում:

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատված է «կատարված է»: Գույքի հայտարարագրման ձևանմուշներ մշակելու և գույքագրման ու գնահատման գործընթացի նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ ներդնելու համար փոփոխություններ են կատարվել «Սնանկության մասին» օրենքում: Մասնավորապես փոփոխություն է կատարվել 54⍰1 հոդվածում, որտեղ նշվել է՝ պարտապանը պարտավոր է հայտարարագիր ներկայացնել կառավարչին: Այս առումով նաև 2020 թվականին Արդարադատության նախարարն ընդունել է թիվ 102-Ն հրաման, որտեղ կարգավորվել են հայտարարագրի սահմանման ձևը, կարգը և համանման հարցեր: «Սնանկության մասին» օրենքում անդրադարձ է կատարվել վերահսկողությանը: Մասնավորապես՝ կարգավորվել են սնանկության կառավարիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի հետ կապված հարաբերությունները, և այս առումով վերահսկողություն է կատարում Արդարադատության նախարարը, որն օժտված է օրենքների դրույթների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասությամբ:

Փորձագետները դրական են գնահատում մշակված ձևանմուշը՝ նշելով, որ այն տալիս է ամբողջական ցանկ: Մյուս կողմից, համաձայն նրանց, դեռևս նկատվում է դրա իրական կիրառության, ամբողջական լրացման պակաս:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

Գործողություն 5. Մշակել սնանկության վարույթում գույքի վաճառքի իրականացման կարգը սահմանող Կառավարության որոշման նախագիծ

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք

Մշակել սնանկության վարույթում գույքի վաճառքի իրականացման կարգը սահմանող Կառավարության որոշման նախագիծ:	ՀՀ ԱՆ	Կառավարության որոշման նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	Կառավարության որոշումն ընդունվել է:	Սնանկության վարույթում պարտապանի գույքի վաճառքի իրականացման կարգը ընդունվել է և գործում է:	**Կատարվել է ժամկետում**

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատված է «կատարված է»: Այս զեկույցում նաև նշվում է, որ Ռազմավարության ընդունումից հետո «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծը, որից բխում էր այս միջոցառման իրականացումը, որոշակի փոփոխությունների է ենթարկվել, որի արդյունքում սահմանվել է, որ Արդարադատության նախարարը ընդունելու է սնանկության վարույթում գույքի վաճառքի իրականացման կարգ, որն արդեն իսկ ընդունվել է և իրացվել է ռազմավարությամբ սահմանված գործողության արդյունքը: Ինչ վերաբերում է Կառավարության կողմից ակտի ընդունմանը, ապա Կառավարությունը սահմանելու է էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը, որի համար վերոնշյալ նախագծով սահմանվել է ժամկետ մինչև 2021թ. մարտ ամիսը:

Այսպիսով, սույն գործողությամբ նախատեսված՝ սնանկության վարույթում գույքի վաճառքի իրականացման կարգը սահմանող Կառավարության որոշման նախագծի մշակումը կատարված է: Այս առումով Արդարադատության նախարարը 2020 թվականին ընդունել է թիվ 107 Ն հրամանը՝ ֆինանսական վիճակի վերլուծության ձևի սահմանման մասով և 2020 թվականի թիվ 116 Ն հրամանը, որը վերաբերում է գույքի հրապարակային սակարկություններով վաճառքի կարգին:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

Գործողություն 6. Վերանայել սնանկության դատավորների վերապատրաստման ծրագրերը

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Վերանայել սնանկության դատավորների վերապատրաս	ՀՀ ԱՆ, ԲԴԽ (համաձայնությամբ) Արդարադատության ակադեմիա	Աշխատանքների իրականացման ժամանակացույցի կազմում, համապատասխան	Նախանշված ուղղությունների հիման վրա ուսումնասիրությունների իրականացում,	Կազմվել և հաստատվել են դատավորների վերապատրաստման նոր ծրագրեր:	**Կատարվել է ժամկետում** Մշակվել են սնանկության

տման ծրագրերը:	(համաձայնությամբ)	մասնագետների ներգրավում, վերապատրաստման ծրագրերի հիմնական ուղղությունների նախագծում:	վերապատրաստման նոր ծրագրերի մշակում (ծրագրերի արդիականացում), քննարկում, ամփոփում և հաստատում:		դատավորների վերապատրաստման ծրագրերը

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատված է «կատարված է»: Այս զեկույցում նաև նշվում է, որ Իրավունքի զարգացման միջազգային կազմակերպության և ՎԶԵԲ-ի հետ համատեղ ծրագրի շրջանակներում մշակվում են սնանկության դատավորների էլեկտրոնային վերապատրաստման ծրագիր, որը նախատեսվում է մեկնարկել աշնանը: Իր հերթին էլեկտրոնային դասընթացի պլատֆորմ է մշակում նաև Համաշխարհային բանկը, որը տրամադրվելու է Դատական դեպարտամենտին և սնանկության դատավորներին՝ դասընթացներին մասնակցելու համար:

Աշխատանքների իրականացման ժամանակացույցը կազմվել է: Ծրագրերի նախապատրաստման գործընթացին ներգրավվել են համապատասխան մասնագետներ: Հաստատվել է դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստման ուսուցման 2020թ. ծրագիրը՝ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2019թ. Նոյեմբերի 29-ի թիվ ԿԽ-010-19/1 որոշման հավելված 1-ին, որի 2-րդ մասի 2-րդ կետը նվիրված է սնանկության մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլին:

Մշակված ծրագրի հիման վրա իրականացվել են սնանկության դատավորների վերապատրաստումներ: Իրավական հարցերի վերաբերյալ վերապատրաստումից («Սնանկության վարույթի արդի հարցեր», «ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր», «Կորպորատիվ իրավունքի արդի հարցեր», «Պարտավորական հարաբերությունների արդի հարցեր», «Բանկային իրավունքի արդի հարցեր») բացի, իրականացվել է սնանկության դատավորների վերապատրաստումներ նաև ոչ իրավական դասընթացով՝ «ֆինանսական կառավարում» վերտառությամբ, որը իր մեջ ներառում է հետևյալ թեմաները՝ ֆինանսական կառավարման ժամանակակից հայեցակարգեր, ֆինանսական կառավարման զարգացման ուղղություններ, ֆինանսական կառավարման հարաբերությունները կարգավորող իրավանորմերի կիրառման գործնական հմտություններ, տվյալ ոլորտին առնչվող արդի այլ հիմնախնդիրներ:

Այսպիսով, գործողություն 6-ը ևս կատարված է: Իրավունքի զարգացման միջազգային կազմակերպության և ՎԶԵԲ-ի հետ համատեղ ծրագրի շրջանակներում մշակվել են սնանկության դատավորների էլեկտրոնային վերապատրաստման ծրագրեր: Իրականացվել է դատավորների վերապատրաստումը:

Համաձայն փորձագետների հետ հարցազրույցների՝ ցանկալի կլինի, որ սնանկության դատարանի դատավորների վերապատրաստումները հանգեցնեն իրենց շրջանում միասնական մոտեցումների ձևավորման, և վերապատրաստումները պետք է նպաստեն այս հարցի լուծմանը:

Այլապես, մոտեցումների տարբերության դեպքում քաղաքացին կարող է տուժել կամ շահել՝ կախված նրանից, թե կոնկրետ որ դատավորն է քննում գործը, իսկ սնանկության ոլորտում այս հարցը հատկապես սուր է:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 3)՝

- Սնանկության կառավարիչների մասնագիտության ձեռք բերման, որակավորման, նշանակման ընթացակարգերի բարելավում, պատասխանատվության և գործունեության արդյունավետության բարձրացման գործիքակազմի ներդնում
- Ֆինանսական առողջացմանը նպաստող կայուն մեխանիզմների սահմանում
- Սնանկության վարույթում դատավորների (դատարանի) դերակատարման բարձրացում
- Սնանկության համակարգի վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացում
- Սնանկության ունիվերսալ օրենսդրության մշակում

Գործողություն 1. «Սնանկության մասին» օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ վերանայելով սնանկության կառավարչին ներկայացվող պահանջները և նշանակման կարգը

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվականի 1-ին կիսամյակ	2021 թվականի 2-րդ կիսամյակ	Ստացված արդյունք
«Սնանկության մասին» օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ վերանայելով սնանկության կառավարչին ներկայացվող պահանջները և նշանակման կարգը:	ՀՀ ԱՆ	«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից:	**Իրականացվել է ժամկետում** «Սնանկության մասին» օրենքում 2019թ. դեկտեմբերի 12-ի ՀՕ-294-Ն օրենքով կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Ըստ ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, «Սնանկության մասին» օրենքում 2019թ. դեկտեմբերի 12-ի ՀՕ-294-Ն օրենքով կատարվել են համապատասխան փոփոխություններ: Միևնույն ժամանակ, փոփոխություններ են կատարվել Արդարադատության նախարարի 13.03.2020 թ.-

ի N 111-Ն հրամանում: Գործողությունն այս զեկույցում գնահատվել է «կատարված է»: Այս արդյունքների մասին հաստատվեց նաև ՖԽՔ-ի ընթացքում:

Այսպիսով՝ **Գործողությունը իրականացվել է ժամկետում:**

Գործողություն 2. «Սնանկության մասին» օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ սահմանելով ֆինանսական առողջացման ծրագրերի իրականացումը խթանող գործիքակազմ, մասնավորապես՝ ֆինանսական առողջացման ծրագրերի հաստատման դեպքում սնանկության կառավարիչների վարձատրության և պարգևավճարների ճկուն մեխանիզմներ, ընկերությունների ֆինանսական առողջացմանը պետության օժանդակության ապահովման գործիքներ

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվականի 1-ին կիսամյակ	2021 թվականի 2-րդ կիսամյակ	Ստացված արդյունք
«Սնանկության մասին» օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ սահմանելով ֆինանսական առողջացման ծրագրերի իրականացումը խթանող գործիքակազմ, մասնավորապես՝ ֆինանսական առողջացման ծրագրերի հաստատման դեպքում սնանկության կառավարիչների վարձատրության և պարգևավճարների ճկուն մեխանիզմներ, ընկերությունների ֆինանսական առողջացմանը պետության օժանդակության ապահովման գործիքներ:	ՀՀ ԱՆ	«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից:	**Կատարվել է ժամկետում** «Սնանկության մասին» օրենքում 2019թ. դեկտեմբերի 12-ի ՀՕ-294-Ն օրենքով կատարվել են համապատասխան փոփոխություններ:

ՖԽՔ-ի մասնակիցները բարձր գնահատեցին «Սնանկության մասին» օրենքի փոփոխությունները, որոնք կարող են հեշտացնել սնանկության ոլորտի աշխատանքը: Միևնույն ժամանակ, համաձայն նրանց, կան որոշ օրենսդրական և գործնական հակասություններ, որոնք կարող են առաջացնել որոշակի խնդիրներ: Մասնավորապես, «Սնանկության մասին» օրենքում ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելուց պետք է լինի գրավատուի համաձայնությունը գրավի առարկաները օգտագործելու համար, ինչը շատ դեպքերում չի համընկնում, որովհետև գրավատները չեն համաձայնվում իրենց գրավի առարկաները կառավարչի կողմից օգտագործելու նպատակով ներդնել ֆինանսական առողջացման ծրագրի մեջ՝ հաշվի առնելով, որ այդ գրավատները հանդիսանում են ՀՀ բանկերը:

Փորձագիտական կարծիքի համաձայն՝ կարևոր է սնանկության կառավարիչների աշխատավարձերի վերանայումը, քանի որ նույն սանդղակն է գործում ինչպես փոքր, այնպես էլ մեծ արժեք ունեցող գույքի դեպքում: Ցանկալի է այն հաշվարկել գույքի գնին համապատասխան՝ որոշակի տոկոսներով:

Փորձագետը երկու հիմնական խնդիր է նշել ֆինանսական առողջացման ծրագրերի մասով

- Ֆինանսական առողջացման ծրագրի ընդհանուր տևողությունը դատարանի կողմից դրա սկզբնական հաստատումից հետո չի կարող գերազանցել 72 ամիսը, իսկ սկզբնական հաստատվող ֆինանսական առողջացման ծրագրի տևողությունը չի կարող գերազանցել 36 ամիսը: Սա սահմանափակում է: Անհրաժեշտության դեպքում պետք է հնարավոր լինի նաև ավելի երկար ժամանակ ներառել:
- Խնդիր կա նաև ֆինանսական առողջացման ծրագրի գնահատման հետ կապված, մասնավորապես այն առումով, որ ծրագիրը համարվում է ընդունված, եթե դրա ընդունման օգտին քվերակում է պարտատերերի պարզ մեծամասնությունը: Ցանկալի կլիներ, որ դա կախված չլինի, օրինակ, ձայների 51%-ից: Պետք է օրենքով ավելի հստակ լինեն չափանիշները, որոնց հիման դատարանի կողմից ընդունվում կամ մերժվում է առողջացման ծրագիրը, որպեսզի ավելի մեծ բաժին ունեցող պարտատերը չկարողանա մյուսներին պարտադրել իր կարծիքը:

Այսպիսով՝ **Գործողությունը իրականացվել է ժամկետում:**

Գործողություն 3. Մշակել ֆինանսական առողջացման ծրագրի ձևանմուշներ, կազմակերպել սնանկության կառավարիչների, դատավորների և շահագրգիռ անձանց համար համապատասխան դասընթացներ

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվականի 1-ին կիսամյակ	2021 թվականի 2-րդ կիսամյակ	Ստացված արդյունք
Մշակել ֆինանսական առողջացման ծրագրի ձևանմուշներ, կազմակերպել սնանկության կառավարիչների, դատավորների և շահագրգիռ անձանց համար համապատասխան դասընթացներ:	ՀՀ ԱՆ, ԲԴԽ (համաձայնությամբ) Արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ) Սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպություններ (համաձայնությամբ)	Աշխատանքների իրականացման և վերապատրաստման ծրագրերի մշակման ժամանակացույցի կազմում, համապատասխան մասնագետների ներգրավում:	Նախանշված ուղղությունների հիման վրա ուսումնասիրությունների իրականացում, վերապատրաստման ծրագրերի մշակում (ծրագրերի արդիականացում), քննարկում, ամփոփում և հաստատում, ձևանմուշների պատրաստում և հաստատում:	**Կատարվել է ժամկետում** Դասընթացներն իրականացվում են: Ձևանմուշների մշակման վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

Այս գործողության ներքո իրականացված դասընթացների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 2 Գործողություն 3-ի ներքո: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ԱՆ կողմից հրապարակվող մոնիթորինգային զեկույցներում չի տրամադրվում տեղեկատվություն ֆինանսական առողջացման ծրագրի ձևանմուշների մշակման վերաբերյալ:

Ոլորտային փորձագետներից մեկի կարծիքով՝ սնանկության դատարանին դիմելը, այդ ամբողջ գործընթացն անցնելը բավականին բարդ է: Խոսքը հատկապես վերաբերում է կամավոր սնանկության գործերին: Այս պարագայում, մի կողմից, ավելի մեծ թվով փաստաթղթեր են պահանջվում, մյուս կողմից, դատավորների շրջանում առկա է մոտեցումների խիստ տարբերակվածություն: Ի տարբերություն սրա, հարկադիր սնանկության գործընթացն ավելի պարզ է, միաժամանակ որոշակի պայմանավորվածությունների/սխեմաների ավելի մեծ ռսիկեր է պարունակում: Այսինքն՝ անհրաժեշտ է հավասարակշռել կամավոր և հարկադիր սնանկության գործընթացները. կամավորի դեպքում շեմը (հատկապես պահանջվող փաստաթղթերի առումով) պետք է որոշակիորեն իջեցվի, հարկադիրի դեպքում՝ բարձրացվի:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

Նպատակ 15. Վեճերի լուծման այլընտրանքային եղանակներ

Ամփոփագիր Նպատակ 15. Վեճերի լուծման այլընտրանքային եղանակներ			
Հավելված 2	2019 2-րդ կիսամյակ	2020 1-ին կիսամյակ	2020 2-րդ կիսամյակ
Նախատեսված գործողությունների թիվ	**0**	**1**	**1**
որից ժամկետում կատարված՝	0	0	0
որից չի կատարվել	0	1	1
կատարողական ցուցանիշ	**0%**		
Հավելված 3	2021 1-ին կիսամյակ		
Նախատեսված գործողությունների թիվ	**2**		
որից ժամկետում կատարված՝	0		
որից չի կատարվել	2		
կատարողական ցուցանիշ	**0%**		

Ռազմավարական ուղղություն (Հավելված 2)՝

- Արբիտրաժային օրենսդրության կատարելագործում

Գործողություն 1. Մշակել «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծ

Գործողություն	Պատասխան ատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Մշակել «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծ:	ՀՀ ԱՆ	Օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	Օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից:	Օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	**Գործողությունը չի կատարվել** «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծը մշակված չէ:

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատված է «կատարված է մասնակի»: Մասնավորապես՝ զեկույցում նշվում է, որ մշակվել է հայեցակարգ, նախագծերի մշակումը պայմանավորված է արբիտրաժային կենտրոնի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքներով: Այս մասով կազմվել է տեխնիկական առաջադրանք և ներկայացվել դոնոր կազմակերպությանը՝ ֆինանսավորում տրամադրելու և փորձագետներ ներգրավելու համար: Արդյունքում ակնկալվում է կատարել ոչ միայն քննարկվող գործողությունը, այլ նաև արբիտրաժի ոլորտում ռազմավարությունից բխող մյուս գործողությունները (հաջորդ տարիների համար) մեկ փաթեթով: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով առաջացած ռազմական դրության, ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով:

ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի համաձայն, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, այս գործողությունը նույնպես ամբողջությամբ չի իրականացել: Մասնավորապես, զեկույցում նշվում է, որ մշակվել են զեկույցներ, որոնք վերաբերում են Հայաստանում վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացմանը, այդ թվում անդրադարձ է կատարվել արբիտրաժի վերաբերյալ օրենսդրության զարգացմանը: Այնուամենայնիվ, վերոնշյալ զեկույցներին հղումներ ԱՆ-ի կողմից չեն տրվում: Մոնիթորինգային զեկույցում նաև նշվում է, որ հաշվի առնելով Կառավարության 2021-2026թթ ծրագրով նախատեսված արբիտրաժի զարգացման միջոցառումները՝ զեկույցներում հիման վրա բարձրացված խնդիրների հիման վրա օրենսդրությունը կվերանայվի Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի հիմնադրման աշխատանքների շրջանակում:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների որոշակի խախտումներ**

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 3)՝

1. Արբիտրաժային կենտրոնների ստեղծում
2. Վեճերի լուծման այլընտրանքային այլ միջոցների զարգացում
3. Համապատասխան իրավական կրթության մակարդակի և հանրային իրազեկվածության բարձրացում

Գործողություն 1. Նախաձեռնել և (կամ) աջակցել արբիտրաժի ինստիտուցիոնալ կառույցի ստեղծմանը

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվականի 1-ին կիսամյակ	Ստացված արդյունք
Նախաձեռնել և (կամ) աջակցել արբիտրաժի ինստիտուցիոնալ կառույցի ստեղծմանը:	<< ԱՆ	Նախանշվել են կենտրոնի ստեղծման ուղղությունները, ֆինանսավորման աղբյուրները, ներգրավվել են համապատասխան մասնագետները:	**Գործողությունը չի կատարվել** Կենտրոնի ստեղծման ուղղությունները, ֆինանսավորման աղբյուրները հստակ չեն,

			ներգրավված չեն համապատասխան մասնագետները:

Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, գործողությունը գնահատված է «կատարված է մասնակի»: Այս զեկույցում նշվում է, որ կենտրոնի ստեղծման աշխատանքներին աջակցելու նպատակով կապեր են հաստատվել միջազգային դոնորների, ինչպես նաև հեղինակավոր ընկերությունների մասնագետների հետ: Վերջիններիիս հետ աշխատանքների արդյունքում կազմվել է կենտրոնի ստեղծման աշխատանքների ժամանակացույցը, կենտրոնի ֆինանսական մոդելի նախնական տարբերակը: Միևնույն ժամանակ, մշակվել են կենտրոնի արբիտրաժային կանոնների և կանոնադրության նախագծերը: Հաշվի առնելով, որ Կենտրոնի ստեղծման աշխատանքների գործողությունների պլանը և ժամկետները վերանայվել են Կառավարության 2021-2026 թթ ծրագրին համապատասխան՝ այս միջոցառումը կիրականացվի Կառավարության նոր ծրագրին համապատասխան:

Գործողության իրականացման համար պատասխանատու պետական մարմինների հետ ՖԽՔ ընթացքում նույնպես ներկայացվեց, որ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագծի մասով աշխատանքները մեկնարկվել են, մշակվել է հայեցակարգ, փոխգործակցությամբ համատեղ աշխատանքներ են կատարվել միջազգային գործընկերների և փորձագետների հետ: Հիմնական շեշտադրումը կատարվում է նոր կենտրոնի ստեղծմանը, որի առումով Կառավարության ծրագրում ժամկետային փոփոխություններ են կատարվել՝ որոշ գործողություններ պիտի կատարվեն 2024-ից մինչև 2026 թվականներ: Միևնույն ժամանակ, որոշ գործողությունների ժամկետների վերանայում նախատեսվում է իրականացնել նոր ռազմավարությունում: Նախատեսվում է հետագայում իրականացնել նաև իրազեկման արշավներ: Այդուհանդերձ, ինչպես պարզ դարձավ ՖԽՔ-ի ընթացքում՝ արբիտրաժային նոր կենտրոնի կազմակերպաիրավական կարգավիճակի, կառավարման մոդելի վերաբերյալ դեռևս քննարկումներ չեն տարվել: Ինչ վերաբերում է ոլորտում նախատեսվող փոփոխությունների քննարկմանը մասնագիտական հանրության հետ, ապա ևս պարզ դարձավ, որ այդպիսիք չեն իրականացվել:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Գործողություն 2. 1) իրականացնել հանրային իրազեկումներ (գովազդային վահանակների, հեռուստատեսային գովազդների, հեռուստահաղորդումների, մամուլի միջոցով) սնանկության գործընթացների վերաբերյալ, 2) մշակել և ներդնել համապատասխան կրթական ծրագրեր կամ արդիականացնել առկա կրթական ծրագրեր

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվականի 1-ին կիսամյակ	Ստացված արդյունք
1) Իրականացնել հանրային իրազեկումներ (գովազդային վահանակների, հեռուստատեսային գովազդների,	ՀՀ ԱՆ, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Կազմվել է հանրային իրազեկումների ծրագիրը և իրականացման-պլան ժամանակացույցը, մշակվել են կրթական ծրագրերը:	**Գործողությունը չի կատարվել**

հեռուստահաղորդումների, մամուլի միջոցով) վեճերի լուծման այլընտրանքային եղանակների վերաբերյալ, 2) մշակել և ներդնել համապատասխան կրթական ծրագրեր կամ արդիականացնել առկա կրթական ծրագրերը:			Հանրային իրազեկումների ծրագրի, իրականացման-պլան ժամանակացույցի, կրթական ծրագրերի մշակումն ավատրված չէ:

Նշենք, որ 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների ԱՆ մշտադիտարկման զեկույցում այս գործողության մասով ներկայացված տեղեկատվությունը կրկնում է արբիտրաժի ինստիտուցիոնալ կառույցի ստեղծմանը վերաբերող տեղեկատվությունը և չի անդրադառնում հանրային իրազեկումների ծրագրի, իրականացման-պլան ժամանակացույցի, կրթական ծրագրերի մշակմանը:

ՖԽՔ-ի ընթացքում ՀՀ ԱՆ ներկայացուցիչները փաստեցին, որ վերոնշյալ գործողության կատարումն այս պահին ընթացքի մեջ է: Իրազեկման արշավների պլանի մասին քննարկումներ են տեղի ունենում, սակայն դեռևս առկա չէ ժամանակացույց: Միևնույն ժամանակ, որոշ գործողությունների ժամկետների վերանայում նախատեսվում է իրականացնել նոր ռազմավարությունում:Համաձայն ԿԳՄՍ նախարարության կողմից տրամադրված լրացուցիչ տեղեկատվության, ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում 8-12-րդ դասարաններում ուսումնասիրում են «Հասարակագիտություն» առարկան, որի շրջանակներում սովորողները անդրադառնում են նաև իրավական կրթության կարևոր թեմաների՝ մարդ և հասարակություն, հիմնարար արժեքներ, ազատություն, արդարություն, հանդուրժողականություն, իշխանություն, իրավունք, օրենքի գերակայություն, մարդու հիմնարար իրավունքներ և ազատություններ, քաղաքացիական հասարակություն և այլն: Մասնավորապես 9-րդ, 11-րդ դասարանի հասարակագիտության դասագրքերը նպատակ ունեն սովորողի մեջ ձևավորելու հոգեբանական վճռականություն, սեփական իրավունքների ու ազատությունների համար պայքարող, իր պարտականություններն ու պատասխանատվությունը գիտակցող, իրավական մշակույթ ունեցող քաղաքացիների: Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում դասավանդվում է «Իրավունքի հիմունքներ» առարկան՝ ըստ կրթական չափորոշիչների: Բարձրագույն ուսումնական հաստատությունները, համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ բարձրագույն ուսումնական հաստատության իրավասությունն է՝ «բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակումն ու հաստատումը, ուսումնական գրականության և ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակումը»: Նշված իրավական կարգավորման հիման վրա բուհերը ինքնուրույն են իրականացնում իրենց կրթական ծրագրերի մշտադիտարկումները և դրանց հիման վրա առարկայական ծրագրերի կամ ուսումնական պլանների փոփոխությունները:

Այսպիսով, քանի որ այս գործողության ներքո նախատեսվում է 2021 թվականի 1-ին կիսամյակին մշակել հանրային իրազեկումների ծրագիրը և իրականացման-պլան ժամանակացույցը և կրթական ծրագրերը, սակայն այն դեռևս չի իրականացվել և գտնվում է քննարկումների փուլում, գործողությունը գնահատվում է չկատարված:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Նպատակ 16. Նոտարական համակարգ

Ամփոփագիր Նպատակ 16. Նոտարական համակարգ	
Հավելված 3	2021 1-ին կիսամյակ
Նախատեսված գործողությունների թիվ	**3**
որից ժամկետում կատարված՝	0
որից չի կատարվել	3
կատարողական ցուցանիշ	**0%**

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 3)՝

1. Կատարողական մակագրության թերթի ինստիտուտի բարելավում
2. Նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի վերանայում
3. Նոտարական գործողությունների արդյունավետության բարձրացում

Գործողություն 1. Նոտարիատի մասին օրենքում և այլ օրենսդրական ակտերում փոփոխությունների կատարում՝ բարձրացնելով կատարողական մակագրության թերթի ինստիտուտի արդյունավետությունը

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվականի 1-ին կիսամյակ	Ստացված արդյունք
Նոտարիատի մասին օրենքում և այլ օրենսդրական ակտերում կատարել փոփոխություններ՝ բարձրացնելով կատարողական մակագրության թերթի ինստիտուտի արդյունավետությունը:	ՀՀ ԱՆ, ՀՀ Նոտարական պալատ (համաձայնությամբ):	Մշակվել են նախագծերը, նախագծերը սահմանված կարգով շրջանառվել են և ուղարկվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:	**Գործողությունը չի կատարվել** Նախագծերը սահմանված կարգով չեն շրջանառվել և չեն ուղարկվել ՀՀ վարչապետի աշխատակազմ:

2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների ԱՆ մշտադիտարկման զեկույցում գործողության իրականացումը գնահատվել է «կատարվել է մասնակի»: Համաձայն այս զեկույցի իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն, նածագծերը դեռևս գտնվում են մշակման փուլում: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում նոր ընտրությունների անցկացման և դրա արդյունքում ձևավորված նոր Կառավարության գործունեության ծրագրով հնարավոր առաջնահերթությունների որոշմամբ պայմանավորված:

ԱՆ և ՀՀ Նոտարական պալատի ներկայացուցիչների հետ ՖԽՔ-ի ընթացքում ներկայացվեց, որ Կատարողական մակագրության թերթի ինստիտուտի արդյունավետության բարձրացմանը անդրադարձ կատարող նախագիծը մշակվել է և առաջիկայում կիրապարակվի:

Համաձայն ՖԽՔ-ի մասնակիցների՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում օրենսդրական տեսանկյունից փոփոխություններ սահմանված են, սակայն գործնական գործունեության տեսանկյունից դեռևս կան մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ ոչ ամբողջական կիրառությունը ապահովելու պատճառով: Եթե գործին ծանոթանալիս նոտարները տեսնում են, որ գործընթացի ժամանակ առկա է վեճ առաջանալու փոքր հավանականություն, մերժում են տրամադրում: Գործն հանգուցալուծելու համար ուղարկում են դատարան՝ պատճառաբանելով նոտարի գործիքակազմի բացակայությունը: Դա նպաստում է դատարանների ծանրաբեռնվածության աճին: Այստեղ համաձայն մասնակիցների՝ առկա է ոչ թե Նոտարիատի խնդիրն, այլ՝ օրենսդրական բացերի:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների որոշակի խախտումներ**

Գործողություն 2. Նոտարիատի մասին օրենքում փոփոխությունների կատարում՝ բարելավելով նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվականի 1-ին կիսամյակ	Ստացված արդյունք
Նոտարիատի մասին օրենքում կատարել փոփոխություններ՝ բարելավելով նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը:	ՀՀ ԱՆ, ՀՀ Նոտարական պալատ (համաձայնությամբ):	Մշակվել է «Նոտարիատի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել ՀՀ վարչապետի աշխատակազմ:	**Գործողությունը չի կատարվել** Կատարման ժամկետները վերանայվել են Կառավարության 2021-2026թթ ծրագրին համապատասխան:

Համաձայն 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ այս գործողությունը չի իրականացել և դրա կատարման ժամկետները վերանայվել են Կառավարության 2021-2026թթ ծրագրին համապատասխան:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / վերանայվել են ժամկետները**

Գործողություն 3" Նոտարիատի մասին օրենքում փոփոխությունների կատարում՝ ապահովելով ինչպես նոտարների, այնպես էլ կողմերի շահերի արդյունավետ պաշտպանությունը, նվազեցնել դատական վեճերի հավանականությունը և ապահովել դատական վեճերի դեպքում հավելյալ ապացույցների օգտագործման հնարավորությունը

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվականի 1-ին կիսամյակ	Ստացված արդյունք

«Նոտարիատի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ապահովելով ինչպես նոտարների, այնպես էլ կողմերի շահերի արդյունավետ պաշտպանությունը, նվազեցնել դատական վեճերի հավանականությունը և ապահովել դատական վեճերի դեպքում հավելյալ ապացույցների օգտագործման հնարավորությունը:	ՀՀ ԱՆ, ՀՀ Նոտարական պալատ (համաձայնությամբ)	Մշակվել է Նոտարիատի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել ՀՀ վարչապետի աշխատակազմ:	**Գործողությունը չի կատարվել** Կատարման ժամկետները վերանայվել են Կառավարության 2021-2026թթ. ծրագրին համապատասխան:

Համաձայն 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ այս գործողությունը չի իրականացվել և դրա կատարման ժամկետները վերանայվել են Կառավարության 2021-2026թթ. ծրագրին համապատասխան:

Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է արձանագրել, որ Նպատակ 16-ի ներքո նոտարական համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները չեն կատարվել:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / վերանայվել են ժամկետները**

Նպատակ 17. Փաստաբանական համակարգ

Ամփոփագիր Նպատակ 17. Փաստաբանական համակարգ			
Հավելված 2	2019 2-րդ կիսամյակ	2020 1-ին կիսամյակ	2020 2-րդ կիսամյակ
Նախատեսված գործողությունների թիվ	**0**	**2**	**4**
որից ժամկետում կատարված՝	0	0	2
որից չի կատարվել	0	2	2
կատարողական ցուցանիշ	**33%**		

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 2)՝

1. Անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակի ընդլայնում
2. Անվճար իրավաբանական օգնության տրամադրման այլընտրանքային կառուցակարգերի զարգացում
3. Հանրային պաշտպանների գործունեության արդյունավետության բարձրացում
4. Փաստաբանական դպրոցի գործունեության զարգացում
5. Փաստաբանի վարքագծի և բարեվարքության կանոնների կատարելագործում
6. Փաստաբանների պալատի ներքին կառուցակարգերի զարգացում

Գործողություն 1. «Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ընդլայնելով անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը

Գործողություն	Պատասխան ատու մարմին	2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվականի 1-ին կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
«Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ընդլայնելով անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը:	ՀՀ ԱՆ, ՀՀ փաստաբաններ ի պալատ (համաձայնությամբ):	«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ	«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից:	«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	**Գործողությունը չի կատարվել** «Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխությունները կատարված չեն:

		վարչապետի աշխատակազմ:			

Համաձայն 2020 թվականի երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատված է «կատարված է մասնակի»: Մշակվում է անվճար իրավաբանական օգնություն ստանալու մեխանիզմների ընդլայնմանն ուղղված նախագիծ, ինչպես նաև մշակվում է ոլորտի բարեփոխման հայեցակարգային փաստաթուղթ: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է երկրում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով առաջացած ռազմական դրության ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով: Համաձայն ԱՆ 2019, 2020, 2021 թվականներին կատարման ենթակա գործողությունների մշտադիտարկման զեկույցի, որոնք կատարվել են 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում, գործողության կատարումը գնահատված է «մասնակի»: Գործողության շրջանակներում մասնավորապես մշակվել է փաստաբանական ոլորտի զարգացման հայեցակարգ, որի հիման վրա սկսվել են օրենքի նախագծի մշակման աշխատանքները: Հայեցակարգային մոտեցումների կատարելագործման նպատակով ներգրավվել են միջազգային փորձագետներ, ովքեր պատրաստել են համապատասխան զեկույցներ, որոնց մի շարք առաջարկություններ նույնպես ներառվել են հայեցակարգում և նախագծում: Ներկայումս առկա է նախագծի նախնական տարբերակը, որն անցնում է աշխատանքային և մասնագիտական քննարկումների փուլ մինչև պաշտոնապես հանրային քննարկման ներկայացնելը:

Համաձայն փորձագիտական գնահատականի, սույն գործողության իրագործումը դրական է, սակայն անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց շրջանակն ընդլայնելիս անհրաժեշտություն է առաջանում ռեսուրսների համապատասխանեցումը: Այս պահին Հանրային պաշտպանի գրասենյակն աշխատում է գերծանրաբեռնված: Միևնույն ժամանակ, կարևորվում է անվճար իրավական օգնություն տրամադրելու հստակ չափանիշների սահմանումը (օրինակ ասվում է, որ 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող անձիք իրավունք ունեն օգտվել ծառայությունից, սակայն կարող է լինել այն, որպես վերջիններս լինեն բավականին վճարունակ են): Հստակեցման կարիք ունեն նաև մերժման հիմքերը, որպեսզի որոշ անհարկի գործերով Հանրային պաշտպանի գրասենյակը և դատական համակարգը չծանրաբեռնվեն:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների էական խախտումներ:**

Գործողություն 2. «Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով pro-bono իրավաբանական ծառայությունների արդյունավետ կառուցակարգը

Գործողություն	Պատասխանատու մարմին	2019 թվականի 2-րդ կիսամյակ	2020 թվականի 1-ին կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
«Փաստաբանության մասին» օրենքում	ՀՀ ԱՆ, ՀՀ փաստաբանների	«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում	«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում	«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում	**Գործողությունը չի իրականացվել**

կատարել փոփոխություններ՝ ներդնելով pro-bono իրավաբանական ծառայությունների արդյունավետ կառուցակարգը:	պալատ (համաձայնությամբ):	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից:	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	«Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխությունները կատարված չեն:

Այսատարված չենն միրականացման ռականացմանչենն մասին» օրենքում կատարել փոՀամաձայնմանչենն մասին» օրենքում կա Pro-bono-անչենն մասին» o ro-bono-անչելուծումo-անչենն մասին» օրենքում կատարել փոփոխություն միg:ակարգըկի գործերով Հպաշտպանի աշտպանի-անչեՄյուսանի-անչեայսանի-անչենն մասին» օչպետքանիփաստաբաններինորևէասին» օրենքում կատարլ:ստաբաններինորևէասին» օրենքում կատարել փոփոխություն լրացումներ կատարելու մասին» օրենքի պանի գրասենյակը և դատական համակարգը չծա

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների էական խախտումներ:**

Գործողություն 3. Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության և հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրության իրականացում, ուսումնասիրության արդյունքներով համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության և հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրության իրականացում, ուսումնասիրության	ՀՀ ԱՆ, ՀՀ փաստաբանների պալատ (համաձայնությամբ):	Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության և հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրությունն իրականացվել է, մշակվել է համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագիծ, նախագիծը սահմանված կարգով	Համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից:	Համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	**Գործողությունը չի կատարվել** «Փաստաբանության մասին» օրենքում օրենքում փոփոխությունները ներկայացված չեն ԱԺ:

արդյունքներով համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարում:		շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:			

Համաձայն 2020 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատված է «կատարված է մասնակի»: Մշակվում է անվճար իրավաբանական օգնություն ստանալու մեխանիզմների ընդլայնմանն ուղղված նախագիծ, ինչպես նաև մշակվում է ոլորտի բարեփոխման հայեցակարգային փաստաթուղթ: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով:

Այս հարցի վերաբերյալ փորձագետի կարծիքի համաձայն՝ հանրային պաշտպանները միայն ստանում են աշխատավարձ, սակայն չեն օգտվում այլ սոցիալական երաշխիքներից (սոց՝ փաթեթ, հավելավճար), ինչը աշխատանքով ծանրաբեռնվության և գործերի բարդության հետ համաչափ չէ:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել / առկա են ժամկետների էական խախտումներ:**

Գործողություն 4. Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, որակավորման քննության և փաստաբանների մասնագիտական վերապատրաստման կատարելագործված կարգերի ներդնում

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, որակավորման քննության և փաստաբանների մասնագիտական վերապատրաստման կատարելագործվա	ՀՀ ԱՆ, ՀՀ փաստաբանների պալատ (համաձայնու-թյամբ):	Առաջադեմ փորձի ուսումնասիրության հիման վրա Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, փաստաբանների մասնագիտական վերապատրաստման կարիքների գնահատում, որակավորման	Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, փաստաբանների մասնագիտական վերապատրաստման արդիականացված ծրագրերի, ինչպես նաև որակավորման քննության կատարելագործված կարգերի ներդնում:	Ուսուցման և վերապատրաստման ծրագրերի կառուցվածքը, բովանդակությունը և ձևաչափն արդիականացված են, որակավորման քննությունների անցկացման կարգերը կատարելագործված են:	**Գործողությունը կատարվել է:**

ծ կարգերի ներդնում:		քննության կատարելագործված կարգերի մշակում:			

Համաձայն 2020 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատված է «կատարված է մասնակի»: Զեկույցում ներկայացված է, որ ՀՀ փաստաբանների դպրոցի խորհրդի 27.05.2020 թ. Թիվ 04/03-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կազմակերպման ընթացակարգը: ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 08.04.2020 թ. Թիվ 7/6-Լ որոշմամբ հաստատվել է «Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ի հավելվածը հանդիսացող «Արտակարգ դեպքերում որակավորման քննության ընդունման և հանձնման կարգը»: ՀՀ փաստաբանների պալատը գործարկել է համընդհանուր հեռավար վերապատրաստումների կազմակերպման ինստիտուտը:

Ըստ ՀՀ փաստաբանների պալատի կողմից ԻՀԱ-ին տրամադրած տեղեկության՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կառավարման խորհրդի 17.11.2021թ. թիվ 7/1-Լ որոշմամբ հաստատվել է ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման նոր կարգը, դպրոցի տնօրենի 02. 02. 2022 թ. թիվ 8-Լ հրամանով հաստատվել է արտակարգ դեպքերում ուսուցումը հեռավար (դիստանցիոն) եղանակով կազմակերպելու մասին կարգը, դպրոցի կառավարման խորհրդի 17.11.2021թ. թիվ 7/2-Լ որոշմամբ հաստատվել է ուսուցման կազմակերպման ընթացակարգը, դպրոցի կառավարման խորհրդի 17.11.2021թ. թիվ 7/3-Լ որոշմամբ հաստատվել են ունկնդիրների վարքագծի կարգապահական կանոնները, դպրոցի տնօրենի 29. 05. 2020թ. թիվ 23-3/20-Լ հրամանի 2-րդ հավելվածով հաստատվել է բողոքարկման հանձնաժողովի գործունեության ու բողոքարկման կարգը, ՀՀ Փաստաբանների պալատի խորհրդի 21.10.2020թ. թիվ 21/9-լ որոշմամբ կատարվել են փոփոխություններ և լրացումներ որակավորման քննության ընդունման և հանձնման կարգում, ինչպես նաև պալատի կողմից գործարկել է համընդհանուր հեռավար վերապատրաստումների կազմակերպման ինստիտուտը:

Ինչպես նշեց փորձագետը, Փաստաբանական դպրոցի մի դասընթացի մասնակիցների գիտելիքների, փորձի մակարդակները կարող են տարբեր լինել, ինչի պատճառով առաջանում է դասընթացի բովանդակության բարդության աստիճանի խնդիր: Ուստի կարող է լինել իրավիճակ, երբ դասընթացների մասնակիցների համար տրվող բովանդակության նշաձողը լինի ցածր և վերջիններիս կողմից դասընթացին մասնակցությունը չունենա գործնական օգուտ: Խնդիր լուծում կարող է լինել մասնակիցներին՝ տարբեր խմբերի բաժանելը, ինչը սակայն կապված է լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման հետ: Ինչ վերաբերում է փաստաբանների վերապատրաստումներին, գործընթացն ընդհանուր առմամբ և բովանդակությունը դրական է գնահատվում: Նշվում է, որ վերապատրաստումների առցանց ձևաչափը նվազեցնում է արդյունավետությունը: Մյուս կողմից, դա հնարավորություն է տվել վերապատրաստումներին ներգրավել նաև մարզերում բնակվող փաստաբաններին:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է:**

Գործողություն 5. Փաստաբանների պալատի հետ համագործակցությամբ բարելավել փաստաբանների վարքագծի կանոնները

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
Փաստաբանների պալատի հետ համագործակցությամբ բարելավել փաստաբանի վարքագծի կանոնները:	ՀՀ ԱՆ, ՀՀ փաստաբանների պալատ (համաձայնությամբ):	Փաստաբանի վարքագծի կանոնների բարելավման նախագիծը մշակվել է և դրվել քննարկման:	Փաստաբանի վարքագծի կանոնների բարելավման նախագիծը հաստատվել է Փաստաբանների պալատի կողմից:	Փաստաբանի վարքագծի կանոնների բարելավման նախագիծը հաստատվել է Փաստաբանների պալատի կողմից:	**Գործողությունը կատարվել է ժամկետում** Փաստաբանի վարքագծի կանոնների բարելավման նախագիծը հաստատված է:

2020 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների ԱՆ մշտադիտարկման զեկույցի համաձայն՝ գործողությունը գնահատված է «կատարված է մասնակի»: Համաձայն այս զեկույցի, ներկայումս մշակվում է ոլորտի բարեփոխման հայեցակարգային փաստաթուղթ:

Ըստ ՀՀ փաստաբանների պալատի կողմից ԻՀԱ-ին տրամադրած տեղեկության՝ Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատվել է Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, ինչը թույլ է տալիս գնահատել նշված կետը:

Համաձայն փորձագիտական կարծիքի, գործող փաստաբանները դեմ չեն փաստաբանական գործունության շրջանակներում էթիկայի կանոնների սահմանումը, սակայն հանրային գործունեության տիրույթում դրանց անհրաժեշտությունն այնքան սուր չէ, ինչպես օրինակ դատավորների պարագայում է: Առաջարկվում է նաև ազատականացնել շահերի բախման տիրույթը՝ օրինակ եթե չկա իրական շահերի բախում, փաստաբանները կարող են ավելի ճկուն լինել գործն ընտրելիս:

Այսպիսով՝ **Գործողությունը կատարվել է ժամկետում:**

Գործողություն 6. «Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով Փաստաբանների պալատի ինքնակառավարման գործուն կառուցակարգեր

Գործողություն	Պատասխանատու մարմին	2020 թվականի 1-ին կիսամյակ	2020 թվականի 2-րդ կիսամյակ	Ստուգման միջոց	Ստացված արդյունք
«Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով Փաստաբանների պալատի ինքնակառավարման գործուն կառուցակարգեր:	ՀՀ ԱՆ, ՀՀ փաստաբանների պալատ (համաձայնությամբ):	«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից:	«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ:	**Գործողությունը չի կատարվել** «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխությունները ներկայացված չեն ԱԺ:

Այս գործողության իրականացման ընթացքը համանման է նախորդ գործողությանը:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել /առկա են ժամկետների էական խախտումներ**

Ընդհանուր առմամբ ՖԽՔ-ի արդյունքում նույնպես արձանագրվում է, որ Նպատակ 17-ի՝ «Փաստաբանական համակարգի արդյունավետության բարձրացմանն» ուղղված ռազմավարական բոլոր գործողություններն իրականացված են մասնակի են: Որպես պատճառաբաններություններ պատկան մարմինների ներկայացուցիչները նշում են 2020 թվականին երկրում տիրող իրավիճակը: Ըստ ԱՆ-ի՝ այս պահին «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը մշակվել է, ուղարկվել բոլոր փաստաբաններին, տեղի են ունեցել քննարկումներ Փաստաբանական պալատի ներկայացուցիչների և Կառավարման խորհրդի փաստաբանների մասնակցությամբ: Ստացված առաջարկների հիման վրա նախագիծը լրամշակվել է, դրվել է հանրային քննարկման: Այժմ նախագիծը գտնվում է Փաստաբանական պալատի հետ համատեղ լրամշակման փուլում:

Այնուամենայնիվ անհրաժեշտ է արձանագրել, որ փաստաբանական ոլորտի բարեփոխումների շրջանակներում երկու տարվա ընթացքում մշակվել է միայն մեկ հայեցակարգ: Բերված հիմնավորումն այն է, որ հայեցակարգի մշակումը, ինչպես նաև օրենսդրական բարեփոխումների ուղղությունների մշակումը բավականին լայնածավալ աշխատանք է: Բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում նաև փաստաբաններից ստացված արձագանքը հաշվի առնելու հանգամանքով պայմանավորված աշխատանքները կատարվում են ժամկետների խախտմամբ: Անհրաժեշտ է նաև նկատել, որ քննարկումներին մասնակից փաստաբանները հակադարձում են՝ նշելով, որ նրանք՝ որպես փաստաբաններ, որևէ կերպ չեն մասնակցել այդ գործողություններին և քննարկումներին, իսկ այդ աշխատանքները մեկնարկել են ընդամենը մի քանի ամիս առաջ, հետևապես՝ ԱՆ-ի վերը նշված պատճառաբանությունը հիմնավոր չէ:

Համաձայն փորձագիտական կարծիքի՝ նախագիծն ունի թերությունների, օրինակ այն առումով, որ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացում ենթադրվում է ներառել արտաքին ներկայացուցիչներ՝ դատական համակարգից, ՀԿ-ներից, ՄԻՊ գրասենյակից, ինչն արդեն չի տեղավորվում ինքնակառավարման տրամաբանության մեջ:

Նպատակ 18. Հարկադիր կատարման համակարգ

Ամփոփագիր Նպատակ 18. Հարկադիր կատարման համակարգ		
Հավելված 3	**2021թ" 1-ին կիսամյակ**	**2021թ" 2-րդ կիսամյակ**
Նախատեսված գործողությունների թիվ	**1**	**1**
որից ժամկետում կատարված՝	0	0
որիվ չի կատարվել	1	1
կատարողական ցուցանիշ	**0%**	

Ռազմավարական ուղղություններ (Հավելված 3)՝

1. Հարկադիր կատարման ոլորտի օրենսդրության համակարգային վերանայում
2. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում

Գործողություն 1. Մշակել «Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագիծ

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվականի 2-րդ կիսամյակ	Ստացված արդյունք
Մշակել «Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագիծ:	ՀՀ ԱՆ	«Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	**Գործողությունը չի կատարվել**

Համաձայն 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատված է «մասնակի կատարված»: Զեկույցում, մասնավորապես՝ նշվում է, որ գործողության կատարման շրջանակներում մշակվել է «Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագիծը: 21 գլուխները վերամշակվել են և քննարկվել են Արդարադատության նախարարի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից: Գործողության մասնակի կատարումը պայմանավորված է Կառավարության 2021 թվականի թիվ 1902 - Լ որոշմամբ՝ «Կատարողական վարույթի մասին» օրենքի համապարփակ իրավակարգավորումների սահմանման ժամկետի փոփոխությամբ, որը սահմանվել է մինչև 2023 թվականի դեկտեմբերի երրորդ տասնօրյակը:

ՖԽՔ-ի մասնակիցներն անդրադարձան որոշակի խնդիրների, բացթողումների: Մասնավորապես՝

- «Սնանկության մասին» օրենքում նշված է՝ վճիռ կայացնելուց հետո բոլոր կատարողական վարույթները կարճվում են պարտապանին սնանկ ճանաչելու վճռից հետո: Շատ դեպքերում Հարկադիր ծառայությունը չի ստանում կայացած վճիռների օրինակները: Կառավարիչը չունի պարտապանի կամ ընկերության սնանկ ճանաչելու վարույթ ընդունելու մասին հարկադիր ծառայությանը ծանուցելու պարտականություն: Այս պահին կան բացեր ծանուցումների ներկայացման հետ կապված:

- Հարկադիր ծառայության թիրախային խնդիրներից առանձնացվեց շահերի բախումը, երբ այն հարկադիր կատարողին, ում գործողությունները բողոքարկվում են վերադասության կարգով, կրկին մակագրում են վերադասության կարգով ստացված բողոքը քննության առնել:
- Այլ խնդիրների թվում են միասնական պրակտիկայի բացակայությունը հակադիր կատարողների կողմից, բռնագանձման վարույթներում առկա խնդիրները և այլն:

Այսպիսով՝ **Գործողությունը չի կատարվել:**

Գործողություն 2. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում:

Գործողություն	Պատասխանատու մարմին	2021 թվականի 1-ին կիսամյակ	Ստացված արդյունք
Հարկադիր կատարումն ապահովող ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում:	ՀՀ ԱՆ	Սահմանվել են տեխնիկական աջակցության, առաջնահերթությունները և հաստատվել է աջակցության տրամադրման ժամանակացույցը, մշակվել և հաստատվել են համապատասխան տեխնիկական առաջադրանքները:	**Առկա չէ տեղեկատվություն**

Համաձայն 2021 թվականի առաջին և երկրորդ կիսամյակի ԱՆ մշտադիտարկման զեկույցի՝ գործողությունը գնահատված է «մասնակի կատարված»: Զեկույցում, մասնավորապես՝ նշվում է, որ Ռազմավարության Հավելված 3-ում այս գործողության կատարված լինելու ստուգման միջոցը և գործողության արդյունքը սահմանված են որպես 2021 թվականի առաջին և 2023 թվականի երկրորդ կիսամյակի ընթացում կատարման ենթակա գործողությունների ամբողջական կատարման ստուգման միջոց և վերջնարդյունք, դրանք 2021 թվականի առաջին կիսամյակին կատարման ենթակա գործողությունների նկատմամբ մասամբ են կիրառելի: Այսպիսով, ըստ էության, ԱՆ-ի կողմից հրապարակված մոնիթորինգային զեկույցում այս գործողության մասին տեղեկատվություն տրամադրված չէ:

Այսպիսով՝ **Գործողության վերաբերյալ առկա չէ տեղեկատվություն:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՎ ԸՆՏՐԱՆՔՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ծանոթագրություն

Ռազմավարության ներքո ընդունվող իրավական ակտերի գնահատման որակական ցուցանիշներն անդրադառնում են ազդեցության մակարդակի արդյունքներին և գործողությունների պլանների (ռազմավարական ուղղությունների) ներքո իրականացվող գործողություն(եր)ը կապում են սպասվող արդյունքների, ռազմավարական առանձնահատուկ նպատակների և ռազմավարական ուղղությունների հետ:
Իրավական վերլուծության են ենթարկվել Ռազմավարության գործողությունների քանակական գնահատման արդյունքում 50 տոկոս և ավելի կատարողական ցուցանիշ ունեցող հետևյալ երեք նպատակները՝

- Նպատակ 4. Ընտրական օրենսդրության բարեփոխում:
- Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում:
- Նպատակներ 5, 6 և 7. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում և կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ:
- Նպատակ 11. Քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխումներ:

Կատարված գործողությունների իրավական վերլուծությունների ամփոփում[21]

Նպատակ 4. Ընտրական օրենսդրության բարեփոխում

Ռազմավարական առանձնահատուկ նպատակների **համապատասխանության գնահատման** արդյունքում գործողությունների իրականացումը գնահատվել է հետևյալ կերպ.

ա) Ընտրողների համար հասկանալի և կանխատեսելի ընտրակարգի ներդրում՝ **մասնակի համապատասխան,**
բ) Բոլոր օղակներում ընտրական վարչարարության բարելավում՝ **մասնակի համապատասխան,**
գ) Քարոզարշավի ֆինանսավորման վերահսկողության արդյունավետության ու թափանցիկության բարձրացում՝ **ոչ համապատասխան,**
դ) Ընտրակաշառքի և ընտրողների նկատմամբ ճնշումները բացառելու համար անհրաժեշտ գործուն մեխանիզմների ներդրում՝ **մասնակի համապատասխան,**
ե) Բազմակի քվեարկությունը բացառող երաշխիքների ավելացում և քվեարկության գործընթացների մատչելիության ապահովում՝ **մասնակի համապատասխան,**
զ) Ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող դերակատարների պատշաճ գործունեության երաշխավորում՝ **մասնակի համապատասխան,**
է) Ընտրական վեճերի գործընթացները հստակեցում՝ դրանց արդյունավետությունը բարձրացնելու միջոցով՝ **ոչ համապատասխան**:

Ուստի, հաշվի առնելով ռազմավարական առանձնահատուկ նպատակների գնահատման մեթոդաբանությունը, Ռազմավարության բոլոր առանձնահատուկ նպատակները **համապատասխանության տեսանկյունից գնահատվում են ոչ համապատասխան**:

[21] Ամփոփումները կատարվել են ընտրված նպատակների ներքո ընդունված իրավական ակտերի իրավական վերլուծության արդյունքում: Վերլուծությունները հասանելի են առանձին հավելվածների տեսքով, որոնք կարող են տրամադրվել ըստ անհրաժեշտության:

Ռազմավարական **ուղղությունների ամբողջության** գնահատման արդյունքում դրանց իրականացումը գնահատվել է հետևյալ կերպ.

ա) Թեկնածուների տարածքային ցուցակների վերացում, պարզ համամասնական ընտրակարգի ընդունում ՝ **ամբողջական համապատասխան,**

բ) Կուսակցական բազմակարծության ապահովման նպատակով՝ ընտրվելու նվազագույն շեմի իջեցում ՝ **մասնակի համապատասխան,**

գ) Կոալիցիաների ձևավորման կարգի բարեփոխում՝ **ոչ համապատասխան,**

դ) Ընտրական գործընթացների նկատմամբ վերահսկողության հնարավորությունների բարձրացում, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկման ընթացակարգի վերանայում՝ **մասնակի համապատասխան,**

ե) Ընտրագրավի գումարի չափի վերանայում՝ **մասնակի համապատասխան,**

զ) Հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացի մատչելիության ապահովում՝ **ոչ համապատասխան,**

է) Ընտրողների ցուցակների կազմման և վարման գործընթացի արդյունավետության բարձրացում՝ **մասնակի համապատասխան,**

ը) Բանավեճի և լուսաբանման վերաբերյալ կարգավորումների բարեփոխում՝ **մասնակի համապատասխան,**

թ) Դիտորդական գործունեությամբ ընտրական գործընթացների վերահսկողության բարեփոխում՝ **ոչ համապատասխան:**

Ուստի, հաշվի առնելով ռազմավարական ուղղությունների գնահատման մեթոդաբանությունը, Ռազմավարության բոլոր ռազմավարական ուղղությունները **ամբողջության տեսանկյունից գնահատվում են ոչ ամբողջական:**

Այսպիսով՝ Ռազմավարության «Ընտրական օրենսդրության բարեփոխում» հիմնանպատակի ներքո գրանցած ազդեցության մակարդակի արդյունքները և գործողությունների պլանների (ռազմավարական ուղղությունների) ներքո իրականացվող գործողություն(եր)ը «Ընտրական օրենսդրության բարեփոխում» ռազմավարական առանձնահատուկ նպատակների և ռազմավարական ուղղությունների համապատասխանության և լրիվության տեսանկյունից գնահատվում է. **«Չի համապատասխանում և ամբողջական չէ»:**

Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում

Ռազմավարական **առանձնահատուկ նպատակների համապատասխանության** գնահատման արդյունքում դրանց իրականացումը գնահատվել է հետևյալ կերպ.

ա) Բարձրագույն դատական խորհրդի՝ գործնականում թափանցիկության և մասնագիտական ներուժի ապահովում՝ **ոչ համապատասխան,**

բ) Դատավորների ընդհանուր ժողովի գործունեության՝ գործնականում թափանցիկության ապահովումը, մասնագիտական ներուժի և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը՝ **ոչ համապատասխան,**

գ) Դատական իշխանության ֆինանսավորման, դատավորների և նրանց աշխատակազմի համաչափ վարձատրությունը՝ **ոչ համապատասխան,**

դ) Դատավորների նշանակման և նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգավորումների կատարելագործումը՝ **մասնակի համապատասխան,**

ե) Դատավորների նկատմամբ հանրային վստահության բարձրացումը՝ **ոչ համապատասխան:**

Ուստի, հաշվի առնելով ռազմավարական **առանձնահատուկ նպատակների** գնահատման մեթոդաբանությունը, Ռազմավարության բոլոր առանձնահատուկ նպատակները համապատասխանության տեսանկյունից գնահատվում են **ոչ համապատասխան:**

Ռազմավարական **ուղղությունների ամբողջության** գնահատման արդյունքում դրանց իրականացումը գնահատվել է հետևյալ կերպ.

ա) Դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման նոր՝ միջազգային չափանիշներին համապատասխան ընթացակարգերի ներդնում՝ **ոչ ամբողջական,**

բ) Դատավորներին և Բարձրագույն դատական խորհրդի անդամներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ միջազգային չափանիշներին համապատասխան հիմքերի և ընթացակարգերի ներդնում՝ **ոչ ամբողջական,**

գ) Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացում՝ **ոչ ամբողջական,**

դ) Դատավորների և նրանց աշխատակազմի վարձատրության բարձրացում և թվակազմի ավելացում՝ **ոչ ամբողջական:**

Ուստի, հաշվի առնելով ռազմավարական ուղղությունների գնահատման մեթոդաբանությունը, Ռազմավարության բոլոր ռազմավարական ուղղությունները **ամբողջության տեսանկյունից գնահատվում են ոչ ամբողջական:**

Այսպիսով՝ Ռազմավարության «Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում» հիմնանպատակի ներքո գրանցած ազդեցության մակարդակի արդյունքները և գործողությունների պլանների (ռազմավարական ուղղությունների) ներքո իրականացվող գործողություն(եր)ը սույն հիմնանպատակի ռազմավարական առանձնահատուկ նպատակների և ռազմավարական ուղղությունների համապատասխանության և լրիվության տեսանկյունից գնահատվում է **«Չի համապատասխանում և ամբողջական չէ»:**

Նպատակներ 5, 6 և 7. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում և կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ

Ռազմավարական առանձնահատուկ նպատակների **համապատասխանության գնահատման** արդյունքում դրանց իրականացումը գնահատվել է հետևյալ կերպ.

ա) Դատական իշխանության անկախության և անաչառության ապահովում՝ **ոչ համապատասխան**[22],

[22] Սույն գնահատականը տրվել է «Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում» հիմնանպատակին:

բ) Դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում՝ **ոչ համապատասխան,**

գ) Կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ՝ **մասնակի համապատասխան:**

Ուստի, հաշվի առնելով ռազմավարական առանձնահատուկ նպատակների գնահատման մեթոդաբանությունը, Ռազմավարության բոլոր առանձնահատուկ նպատակները **համապատասխանության տեսանկյունից գնահատվում են ոչ համապատասխան**:

Ռազմավարական **ուղղությունների ամբողջության** գնահատման արդյունքում դրանց իրականացումը գնահատվել է հետևյալ կերպ.

ա) Դատական համակարգի գործունեության վերաբերյալ հաշվետվությունների և վիճակագրության հրապարակում՝ **ոչ ամբողջական,**

բ) Բարձրագույն դատական խորհրդի որոշումների ընդունման գործընթացի բարելավում, թափանցիկության և պատճառաբանվածության ապահովում՝ **ոչ ամբողջական,**

գ) Կարգապահական հանձնաժողովի կազմավորման կարգի բարելավում՝ **ոչ ամբողջական,**

դ) Բարձրագույն դատական խորհրդի անդամների և դատավորների գույքի, եկամուտների, շահերի, ծախսերի ամբողջական հայտարարագրում՝ **ոչ ամբողջական,**

ե) Դատավորների բարեվարքության գնահատում՝ **ոչ ամբողջական,**

զ) Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի համապատասխանեցում կոռուպցիայի հաղթահարման նպատակին՝ **ոչ ամբողջական,**

է) Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի կատարելագործում՝ **ամբողջական,**

ը) Կարողությունների զարգացում և իրազեկվածության բարձրացում՝ **ամբողջական:**

Ուստի, հաշվի առնելով ռազմավարական ուղղությունների գնահատման մեթոդաբանությունը, Ռազմավարության բոլոր ռազմավարական ուղղությունները **ամբողջության տեսանկյունից գնահատվում են ոչ ամբողջական:**

Այսպիսով՝ Ռազմավարության «Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում և կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ» հիմնանպատակների ներքո գրանցած ազդեցության մակարդակի արդյունքները և գործողությունների պլանների (ռազմավարական ուղղությունների) ներքո իրականացվող գործողություն(եր)ը սույն հիմնանպատակների ռազմավարական առանձնահատուկ նպատակների և ռազմավարական ուղղությունների համապատասխանության և լրիվության տեսանկյունից գնահատվում է՝ **«Չի համապատասխանում և ամբողջական չէ»:**

Նպատակ 11. Քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխումներ

Ռազմավարական առանձնահատուկ նպատակների **համապատասխանության գնահատման** արդյունքում դրանց իրականացումը գնահատվել է հետևյալ կերպ.

ա) ստեղծել հանցավորության նվազեցման և քրեական ենթամշակույթի վերացման համար անհրաժեշտ օրենսդրական հիմքեր՝ **ոչ համապատասխան,**

բ) ամրագրել հանցավոր արարքները ոչ հանցավորներից սահմանազատելու հստակ հատկանիշներ, որոնք կբացառեն օրենքի տարածական մեկնաբանությունը՝ **մասնակի համապատասխան,**
գ) սահմանել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն՝ **համապատասխան,**
դ) կատարելագործել պատժի համակարգը՝ **համապատասխան,**
ե) ապահովել քրեական օրենսդրության համապատասխանությունը վավերացված միջազգային պայմանագրերի նորմերին, միջազգային իրավունքի սկզբունքներին, ինչպես նաև Սահմանադրությանը՝ **մասնակի համապատասխան:**

Ուստի, հաշվի առնելով ռազմավարական առանձնահատուկ նպատակների գնահատման մեթոդաբանությունը, Ռազմավարության բոլոր առանձնահատուկ նպատակները **համապատասխանության տեսանկյունից գնահատվում են ոչ համապատասխան:**

Ռազմավարական ուղղությունների **ամբողջության գնահատման** արդյունքում, դրանց իրականացումը գնահատվել է հետևյալ կերպ.

ա) Քրեական ենթամշակույթի վերացում՝ **ոչ ամբողջական,**
բ) Այլընտրանքային պատժի համակարգի ներդնում՝ **ամբողջական,**
գ) Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ներդնում՝ **ամբողջական,**
դ) Քրեական դատավարության օրենսդրության բարեփոխում՝ **ամբողջական,**
ե) Այլընտրանքային խափանման միջոցների ներդնում՝ **ամբողջական,**
զ) Համաձայնեցման (plea bargaining) և համագործակցության վարույթներ՝ **ամբողջական,**
է) Անչափահասների և խոցելի անձանց մասնակցությամբ վարույթների կատարելագործում՝ **ամբողջական,**
ը) Քրեական գործերով իրավական փոխօգնության արդյունավետ կարգավորման նախատեսում՝**ոչ ամբողջական:**

Ուստի, հաշվի առնելով ռազմավարական ուղղությունների գնահատման մեթոդաբանությունը, Ռազմավարության բոլոր ռազմավարական ուղղությունները **ամբողջության տեսանկյունից գնահատվում են ոչ ամբողջական**:

Այսպիսով՝ Ռազմավարության «Քրեական օրենսդրության բարեփոխում, քրեական դատավարության օրենսդրության բարեփոխում» հիմնանպատակի ներքո գրանցած ազդեցության մակարդակի արդյունքները և գործողությունների պլանների (ռազմավարական ուղղությունների) ներքո իրականացվող գործողություն(եր)ը սույն հիմնանպատակների ռազմավարական առանձնահատուկ նպատակների և ռազմավարական ուղղությունների համապատասխանության և լրիվության տեսանկյունից գնահատվում է՝ **«Չի համապատասխանում և ամբողջական չէ»:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զեկույցի այս հատվածում ներկայացված են մեթոդական և բովանդակային[23] բնույթի եզրակացություններ և առաջարկություններ, որոնք հիմնված են Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրերի 2019-2021 թվականների կատարման այլընտրանքային հասարակական մշտադիտարկման և գնահատման արդյունքների վրա: Առաջարկությունները ներկայացված են ըստ ոլորտների պայմանական բաժանման, որին հետևում են ընդհանուր եզրակացությունները և առաջարկները:

1. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

ՈԼՈՐՏ 1: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐ

Կատարողական ցուցանիշ՝ 0%

- «Էլեկտրոնային արդարադատություն, էլեկտրոնային համակարգեր և տվյալների էլեկտրոնային բազաներ» ոլորտի ներքո գործողությունները սահմանված են Հավելված 4-ով: Ընդհանուր առմամբ վերաբերում են երկու նպատակի՝ «Նպատակ 1. Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրում» և «Նպատակ 2. Արդարադատության բնագավառի էլեկտրոնային համակարգերի և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում և արդիականացում»: Նպատակ 1-ի ներքո նախատեսված է 2019 թվականի 2-րդ կիսամյակից 2021 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացնել թվով 10 գործողություն, որոնցից և ոչ մեկը համաձայն այս Զեկույցում առաջարկված կատարողականի գնահատման մեթոդաբանության չի իրականացվել (1 գործողության վերաբերյալ առկա չէ տեղեկատվություն): Նպատակ 2-ի համար նախատեսված է 2021 թվականին իրականացման ենթակա 7 գործողություն, որոնք նույնպես համանման կերպով չեն կատարվել սահմանված ժամկետում:
- Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Հավելված 4-ով նախատեսված գործողությունների ծրագրի ուղղությամբ իրականացման ժամանակահատվածում <u>նշանակալի ձեռքբերումներ չեն եղել</u>: Գրեթե բոլոր գործողությունների համար առկա են ժամկետների էական խախտումներ: Որոշ գործողությունների դեպքում մշակվել են տարբեր համակարգերի ներդրման տեխնիկական առաջադրանքները, ինչը թեևս նշանակում է, որ այդ գործողությունների կատարման ուղղությամբ աշխատանքները դեռևս գտնվում են շատ նախնական փուլում:

  Առաջարկություն: Վերանայել «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման եվ արդիականացման գործողությունների ծրագիրը»՝ սահմանելով գործողությունների իրականացման համար իրատեսական ժամկետներ: Տարբեր էլեկտրոնային համակարգրի մշակմանը, ներդրմանը և գործարկմանը վերաբերող գործողությունների իրականացման ժամկետների սահմանման հարցում ներգրավվել համապատասխան ոլորտային խորհրդատուների՝ իրատեսական ժամկետների որոշման և վերանայված գործողությունների ծրագրում ներկայացման համար:

ՈԼՈՐՏ 2: ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Կատարողական ցուցանիշ՝ 0%

- Այս ոլորտի ներքո ներառված է 1 նպատակ՝ «Նպատակ 2. Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրական ժողովրդավարության հաստատում և իրավունքի գերակայության ամրապնդում», որի ներքո նախատեսված է իրականացնել 1 գործողություն՝ մինչ

[23] Բովանդակային բնույթի առաջարկությունները գտնվում են մշակման փուլում և կներկայացվեն զեկույցի վերջնական տարբերակում:

2021 թվականը «Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագծի (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթի) մշակում: Օրենքի նախագիծը քննարկվել է շահագրգիռ կողմերի հետ, սակայն չի ներկայացվել ԱԺ: Այսպիսով, ոլորտի կատարողական գնահատականը համաձայն այս զեկույցի մեթոդաբանության 0% է:

ՈԼՈՐՏ 3: ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Կատարողական ցուցանիշ՝ 100%

- Այս ոլոտի ներքո սահմանված նպատակը մեկն է՝ «Նպատակ 3. Սահմանադրական բարեփոխումների անցկացում»: Մինչ 2021 թվականը նախատեսվում էր մշակել և հրապարակել Հանձնաժողովի կազմավորման կարգի նախագիծ, այն քննարկել շահագրգիռ կողմերի հետ և ձևավորել հանձնաժողովը: Նախատեսված գործողությունները կատարվել են ժամկետում, սակայն որոշ ժամանակ անց հանձնաժողովը կասեցրել է աշխատանքները, իսկ հետագայում ՀՀ վարչապետի որոշմամբ ամբողջությամբ դադարեցրել իր գործունեությունը: Հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքների արդյունքները փոխանցվել են ՀՀ արդարադատության նախարարության քարտուղարությանը:

  Առաջարկություն՝ Ռազմավարության գործողությունների ծրագրերի վերանայման ընթացքում հաշվի առնել Հանձնաժողովի կողմից կատարված և ԱՆ փոխանցված աշխատանքը՝ ապահովել արդեն իսկ իրականացված աշխատանքների արդյունքների առավել արդյունավետ օգտագործումը:

ՈԼՈՐՏ 4: ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Կատարողական ցուցանիշ՝ 100%

- Այս ոլորտի ներքո նույնպես ներկայացված է 1 նպատակ՝ «Նպատակ 4. Ընտրական օրենսդրության բարեփոխում», որով նախատեսվում է 2020 թվականի ընթացքում մշակել և հրապարակել է ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, քննարկել շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության հետ և ներկայացնել ԱԺ: Հիմնական եզրահանգումներից է այն, որ 2020 թվականի ընթացքում ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների փաթեթի նախագիծը մշակվել է իշխող քաղաքական մեծամասնության կողմից՝ ոչ բաց և ոչ մասնակցային ընթացակարգով, և հետո ներկայացվել շահագրգիռ մարմիններին: Նշված գործողության իրականացման ընթացքի հետ կապված հիմնական բացը՝ ըստ շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ոլորտի փորձագետների և քաղաքական ամենատարբեր ուժերի մասնակցության ոչ պատշաճ ապահովումն է, ինչպես նաև փոփոխությունների իրականացման համար հատկացված ոչ ողջամիտ՝ սուղ ժամկետները: Սա հանգեցրել է ընտրական օրենսգրքում առկա մի շարք բացթողումների, մասնավորապես՝ Հայաստանում, որը ունի խորհրդարանական կառավարման մոդել, վտանգվել է կայուն խորհրդարանական մեծամասնության սկզբունքը, քաղաքական կոալիցիաների ձևավորման կարգի վերաբերյալ իրականացված փոփոխությունները հակասում են քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումների վերաբերյալ սահմանադրական պահանջին: Բացի այդ, փոփոխված Ընտրական օրենսգիրքը չի պարունակում քարոզարշավի ֆինանսավորման վերահսկողության արդյունավետության ու թափանցիկության բարձրացմանը ուղղված համակարգային, ամբողջական և արդյունավետ իրավական կարգավորումներ: Ընտրական և Վարչական դատավարության օրենսգրքերը գործնականում չեն ապահովում բացառապես յոթնօրյա ժամկետում, ՏԻՄ ոլորտի ընտրական վեճերի լուծումը Վարչական դատարանի կողմից, որի փաստարկված օրինակներից է՝ 2021 թվականի դեկտեմբերի 5-ին տեղի են ունեցած Վանաձոր խոշորացված համայնքի ավագանու ընտրությունների վերաբերյալ ընտրական վեճի քննությունը: «Հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացի մատչելիության ապահովում» ռազմավարական ուղղության կենսագործումը մնում է խնդրահարույց, քանի որ որոշակի, պատշաճ և արդյունավետ ընթացակարգերի և միջոցների բացկայությունը հնարավորություն չի տալիս պրակտիկայում ապահովել տեղաշարժման դժվարություններ և

տեսողության խնդիրներ ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրացման մատչելիությունը: Դիտորդական գործունեությամբ ընտրական գործընթացների վերահսկողության ընթացակարգերը ևս շարունակում են մնալ խնդրահարույց, ըստ էության չի ապահովվել դիտորդական գործունեությամբ ընտրական գործընթացների վերահսկողության արդյունավետ իրականացումը:

- *Սույն ռազմավարական նպատակի ներքո ընդունված իրավական ակտերի որակական գնահատման արդյունքում Ռազմավարության «Ընտրական օրենսդրության բարեփոխում» հիմնանպատակի ներքո գրանցած ազդեցության մակարդակի արդյունքները և գործողությունների պլանների (ռազմավարական ուղղությունների) ներքո իրականացվող գործողություն(եր)ը «Ընտրական օրենսդրության բարեփոխում» ռազմավարական առանձնահատուկ նպատակների և ռազմավարական ուղղությունների համապատասխանության և լրիվության տեսանկյունից գնահատվում է.* ***«Չի համապատասխանում և ամբողջական չէ»:***

ՈԼՈՐՏ 5: ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Կատարողական ցուցանիշ՝ 54%

- «Դատական իշխանության» ոլորտի ներքո ներկայացված են 4 նպատակներ՝ «Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում», Նպատակ 6. Դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում, Նպատակ 8. Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում և Նպատակ 9. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների միասնական հարթակի ապահովում, ինչպես նաև համակցված «Նպատակներ 5, 6 և 7. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում և կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ»:

«Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում»: Կատարողական ցուցանիշ՝ 56%

- Այս նպատակի ներքո նախատեսվում է 9 գործողություն՝ բոլորն էլ իրականացման ենթակա մինչ 2021 թվականը (նախատեսված Հավելված 2-ով): Այս գործողություններից ժամկետում կատարվել են 4-ը (2 գործողություն գնահատվել է ժամկետում կատարված վերապահումով): 1 գործողություն կատարվել է ժամկետի որոշակի խախտմամբ, իսկ մնացյալ գործողությունները չեն կատարվել: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, մշակվել և ԱԺ կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունվել է ««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ 331-Ն օրենքը: Փոփոխություններ են կատարվել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում, սակայն այդ փոփոխությունները վերաբերում են սահմանափակ թվով դատավորների, մասնավորապես՝ նրանց, ովքեր հանդիսանում են Հակակոռուպցիոն դատարանի դատավորներ, Վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող առանձին դատավորներ և Վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորներ, այն ինչ Ռազմավարական առանձնահատուկ նպատակը նման սահմանազատում չի նախատեսում և ենթադրում է բոլոր դատավորներին համաչափ վարձատրություն: Այս համատեքստում խնդրահարույց է առնվազն դիտարկվել նաև այն մոտեցումը, որ հակակոռուպցիոն դատարանի դատավորների և ընդհանուր իրավասության դատարանի դատավորների միջև սահմանվել է ոչ արդարացի վարձրատրություն, սակայն միևնույն ժամանակ՝ նախատեսված չէ համաչափ մոտեցում, մի կողմից, հակակոռուպցիոն դատարանի դատավորների վարձրատրության, մյուս կողմից, նրանց պատասխանատվության և մասնագիտական փորձառնության միջև, այլ կերպ ասած՝ նախատեսված չեն հակակոռուպցիոն

դատարանի դատավոր նշանակվելու համար ավելի խիստ՝ լրացուցիչ պահանջներ և սահմանափակումներ: Իրականացվել են դատավորների վերապատրաստումներ: Թերակատարվել է համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարմանն ուղղված գործողությունը՝ ուղղված դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացմանը, դատավորի աշխատակազմի աշխատավարձերի բարձրացմանը: Դատարաններին իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով ապահովման գործողությունը կատարված է վերապահումով, իսկ նյութատեխնիկական բազայով ապահովման մասով գործողությունը գնահատվել է չկատարված: Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումների առումով նույնպես չեն արձանագրվել նշանակալի ձեռքբերումներ: Կատարված մյուս փոփոխություններով իրականում ոչ թե ներդրվել են ԲԴԽ-ի կողմից որոշումներ ընդունելու գործընթացի բարելավման՝ ներառելով այդ որոշումների ընդունման թափանցիկության, պատճառաբանվածության և ընդունման համար անհրաժեշտ ձայների արդյունավետ կառուցակարգեր, այլ՝ նվազեցվել է կարևոր որոշումներ կայացնելու համար նախատեսված ձայների քվոտան: Մասնավորապես, նախկին կարգավորումների համաձայն՝ որոշ կարևոր որոշումները ընդունվում էին, եթե նիստին ներկա էր ԲԴԽ տաս անդամներից յոթը: Որոշումները մերժված էին համարվում, եթե դրա օգտին կողմ էր քվեարկել նիստին ներկա առնվազն յոթ անդամներից հինգը: Ներկա կարգավորումների համաձայն՝ որոշումները ընդունվում են եթե նիստին ներկա է ԲԴԽ տաս անդամներից հինգը: Որոշումները մերժված են համարվում, եթե դրա օգտին կողմ է քվեարկել նիստին ներկա առնվազն հինգ անդամներից երեքը: ԲԴԽ-ի որոշումների պատճառաբանվածության բարելավումներին ուղղված գործողություններ նույնպես չեն կատարվել:

- *Սույն ռազմավարական նպատակի ներքո ընդունված իրավական ակտերի որակական գնահատման արդյունքում Ռազմավարության «Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում» հիմնանպատակի ներքո գրանցած ազդեցության մակարդակի արդյունքները և գործողությունների պլանների (ռազմավարական ուղղությունների) ներքո իրականացվող գործողություն(եր)ը սույն հիմնանպատակի ռազմավարական առանձնահատուկ նպատակների և ռազմավարական ուղղությունների համապատասխանության և լրիվության տեսանկյունից գնահատվում է **«Չի համապատասխանում և ամբողջական չէ»:***

«Նպատակներ 5, 6 և 7. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում և կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ»: **Կատարողական ցուցանիշ՝ 83%**

- Այս նպատակների ներքո նախատեսված գործողությունների թիվը 6-ն է՝ իրականացման ենթակա մինչ 2021 թվականը (նախատեսված Հավելված 2-ով): Գործողություններից 5-ը կատարվել է ժամկետում, իսկ 1 գործողության վերաբերյալ ԻՀԱ-ին հասանելի տեղեկատվությունը բավարար չէ գնահատման համար: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ՝ ուղղված դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի կատարելագործմանը, Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ստեղծմանը և այլն: Խնդրահարույց կարգավորումներից է՝ Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովներում էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում (Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, Գնահատման հարցերի հանձնաժողով, Ուսումնական հարցերի հանձնաժողով) ոչ դատավոր անդամներին ներգրավումը նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դատավորների ընդհանուր ժողովը դատավորների ինքնակառավարման մարմին է, հետևաբար՝ դրա կազմում դատավորներից բացի՝ ոչ դատավոր անձանց մասնակցությունը հակասում է ինքնակառավարման էությանը: Խնդրահարույց է նաև նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման ակնհայտության և կոպիտ լինելու չափանիշների վերացումը, իսկ խախտումը որպես կարգապահական որակելու հարցում շեշտը դրվեց այն դիտավորությամբ կամ

կոպիտ անփութությամբ կատարելու հանգամանքի վրա: Այս կարգավորումը չի ապահովում դատավորի համար՝ իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու կանխատեսելիություն: Բացի այդ, հստակ չէ, որն է կարգապահական խախտման և էական կարգապահական խախտման շեմերի տարբերությունը: Պարզ չէ, թե ինչպես է որոշվում տարբերությունը հետևյալ կատեգորիաների միջև. դատական իշխանության հնարավոր հեղինակազրկում և դատական իշխանության հեղինակազրկում՝ որպես հետևանք: «Հիմնարար խախտում» կամ «դատական իշխանության հեղինակազրկում» եզրույթները որպես այդպիսին օժտված չեն բավարար հստակությամբ: Պարզ չէ, թե որն է դատավորի կարգավիճակին դատավորի համապատասխանությունը կասկածի տակ դնելու և դատավորի կարգավիճակի հետ՝ հանգամանքներով կամ հետևանքներով պայմանավորված՝ անհամատեղելի լինելու եզրույթների բովանդակային տարբերությունը:

- *Սույն ռազմավարական նպատակի ներքո ընդունված իրավական ակտերի որակական գնահատման արդյունքում Ռազմավարության «Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում և կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ» հիմնանպատակների ներքո գրանցած ազդեցության մակարդակի արդյունքները և գործողությունների պլանների (ռազմավարական ուղղությունների) ներքո իրականացվող գործողություն(եր)ը սույն հիմնանպատակների ռազմավարական առանձնահատուկ նպատակների և ռազմավարական ուղղությունների համապատասխանության և լրիվության տեսանկյունից գնահատվում է՝* ***«Չի համապատասխանում և ամբողջական չէ»:***

Նպատակ 6. Դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում: **Կատարողական ցուցանիշ՝ 0%**

- Այս նպատակի ներքո նախատեսվում է միայն 1 գործողություն իրականացման ենթակա 2021 թվականի ընթացքում՝ ներդնել հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգ, որը սակայն կատարված չէ և այս գործողության իրականացման ուղղությամբ էական քայլեր ձեռնարկված չեն:

Նպատակ 8. Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում: **Կատարողական ցուցանիշ՝ 33%**

- Այս նպատակի ներքո սահմանված են 3 գործողություն, որոնց իրականացման ժամկետը 2021 թվականի 2-րդ կիսամյակն է (Հավելված 3-ով նախատեսված գործողություններ): Գործողություններից միայն 1-ն է կատարվել ժամկետում, մյուս 2-ի մասով գործողությունների կատարումը դեռ ավարտված չէ: Մասնավորապես, 2021 թվականի ընթացքում իրականացվել են դատավորների վերապատրաստումներ՝ մշակված ծրագրերի հիման վրա: Ինչ վերաբերում է մյուս գործողություններին, ապա դրանք չեն կատարվել: Մյուս գործողությամբ նախատեսվում է դատարաններին ապահովել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով, սակայն Հակակոռուպցիոն դատարանների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով ապահովելու գործընթացը դեռևս ավարտված չէ:

Նպատակ 9. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների միասնական հարթակի ապահովում: **Կատարողական ցուցանիշ՝ 33%**

- 2021 թվականին իրականացման ենթակա նախատեսված 3 գործողությունից ժամկետում կատարված է միայն 1-ը (Հավելված 3-ով նախատեսված գործողություններ): Մասնավորապես, ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է պետական որոշ ծառայությունների մատուցման միասնական կենտրոնի ստեղծման ճանապարհային քարտեզը: Չիրականացված գործողություններից են ՀՀ-ում գործող պետական դատափորձագիտական հիմնարկների միավորումը, ինչպես նաև «Դատափորձագիտական գործունեության մասին» օրենքի նախագծի մշակումը:

ՈԼՈՐՏ 6: ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Կատարողական ցուցանիշ՝ 43%

- Իրավապահ համակարգի բարեփոխման ոլորտում նախատեսված գործողությունները երկու ուղղությամբ են՝ Դատախազության համակարգի բարեփոխում և Քննչական մարմինների բարեփոխում: Դատախազության համակարգի բարեփոխման ներքո ներկայացված են 3 գործողություն, որոնք կատարման են ենթակա մինչ 2021 թվականը (Հավելված 2-ով նախատեսված գործողություններ): Քննչական մարմինների բարեփոխման ներքո գործողությունների թիվը 4-ն է, որից 2-ը իրականացման ենթակա մինչ 2021 թվականը (Հավելված 2-ով նախատեսված գործողություններ), 2-ը՝ մինչ 2022 թվականը (Հավելված 3-ով նախատեսված գործողություններ): Համաձայն գնահատման արդյունքների այս գործողություններից 3-ը չեն կատարվել, իսկ 1 գործողության գնահատման համար առկա տեղեկատվությունը բավարար չի եղել: 2 գործողություն գնահատվել է կատարված, իսկ 1 գործողություն՝ կատարված ժամկետի որոշակի խախտմամբ: Մասնավորապես, ներդրվել է դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգ, իրականացվել է դատախազության կառուցվածքային փոփոխություններ և կարողությունների զարգացում: Իրականացվել է քննիչների կարողությունների զարգացում կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում

ՈԼՈՐՏ 7: ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Կատարողական ցուցանիշ՝ 41%

Քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխումներ: Կատարողական ցուցանիշ՝ 80%

- Այս ոլորտի ներքո նախատեսված է մեկ նպատակ՝ «Նպատակ 11. Քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխումներ»: Նպատակի ներքո սահմանված են 10 գործողություններ (Հավելված 2-ով սահմանված գործողություններ), որոնցից 5-ը կատարման ենթական են 2019 թվականի 2-րդ, իսկ մյուս 5-ը՝ 2020 թվականի 1-ին կիսամյակում: Գործողություններից 6-ը կատարված են ժամկետում, 2-ը՝ ժամկետի որոշակի խախտմամբ, մյուս 2-ը՝ ժամկետի էական խախտմամբ: Մասնավորապես, 2019 թվականի 2-րդ կիսամյակում ՀՀ քրեական նոր օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծերը քննարկվել են ՔՀԿ ներկայացուցիչների և շահագրգիռ կողմերի հետ, ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ և 2020 թվականի առաջին կիսամյակում ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով: Ժամկետների որոշակի խախտմամբ մշակվել են քրեական վարույթի հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստման ծրագրերը՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի վերաբերյալ և անցկացվել են վերապատրաստումները: Ժամկետների էական խախտմամբ պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրերով քրեական վարույթն իրականացնող մարմիններին տրամադրվել է անհրաժեշտ նյութատեխնիկական աջակցություն (2021 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում՝ 2020 թվականի 1-ին կիսամյակի փոխարեն): Հիմնական եզրահանգումներից է այն, որ օրենսգրքերն ունեն մի շարք նորամուծություններ, նոր ինստիտուտներ ու կարգավորումներ, ամբողջությամբ շարադրված են նոր ոճով՝ փորձելով ապահովել դրանց համապատասխանությունը միջազգային չափանիշներին: Ուշադրության արժանի նորարարությունները բազմաթիվ են, սկսած իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտից մինչև նոր՝ ազատազրկմանն այլընտրանքային պատժատեսակներ ու կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոցներ: Այդ նորարարությունները, այդ թվում՝ համաձայնեցման և համագործակցության վարույթները, անչափահասների և խոցելի անձանց մասնակցությամբ վարույթների կատարելագործումը, գնահատվել են դրական: Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է փաստել, որ այս պահին դժվար է կանխատեսել, թե նշված նոր ինստիտուտներն ինչպես կաշխատեն իրավակիրառ պրակտիկայում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոսքը համակարգային փոփոխությունների մասին է, որոնք իրենց ազդեցությունն են թողնելու պետական մարմինների ամենօրյա աշխատանքի վրա:

Տվյալ պարագայում, անհրաժեշտ է կազմակերպչական լուրջ գործիքակազմ ներդնել՝ ապահովելու անցնցում անցումը նոր օրենսգրքերին և բացառելով քրեադատավարական գործընթացների խաթարման վտանգը: Միաժամանակ, հարկ է փաստել, որ քրեական ենթամշակույթի տարածման միտումները նվազեցնելուն ուղղված օրենսդրական կարգավորումները ենթակա են դրական գնահատականի, սակայն պետք է ներդնել համակարգային լուծումներ քրեակատարողական հիմնարկներում դրա ազդեցությունն էապես նվազեցնելու համար: Բացի այդ, անհրաժեշտ է մշակել քրեական գործերով իրավական փոխօգնության արդյունավետ կարգավորման մեխանիզմ: Այս առումով պետք է նկատի ունենալ, որ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտնող նոր քրեական դատավարության օրենսգիրքն այլևս չի կարգավորելու այս հարաբերությունները և դրանք ենթակա են առանձին նորմատիվ իրավական ակտով կարգավորման: Մինչդեռ, մինչ այս պահը ՀՀ ԱԺ-ի կողմից համապատասխան նորմատիվ իրավական ակտ չի ընդունվել:

- *Սույն ռազմավարական նպատակի ներքո ընդունված իրավական ակտերի որակական գնահատման արդյունքում Ռազմավարության «Քրեական օրենսդրության բարեփոխում, քրեական դատավարության օրենսդրության բարեփոխում» հիմնանպատակի ներքո գրանցած ազդեցության մակարդակի արդյունքները և գործողությունների պլանների (ռազմավարական ուղղությունների) ներքո իրականացվող գործողություն(եր)ը սույն հիմնանպատակների ռազմավարական առանձնահատուկ նպատակների և ռազմավարական ուղղությունների համապատասխանության և լրիվության տեսանկյունից գնահատվում է՝* ***«Չի համապատասխանում և ամբողջական չէ»:***

Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում: Կատարողական ցուցանիշ՝ 0%

- «Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության» ոլորտում ներկայացված են երկու նպատակ՝ «Նպատակ 12 Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում» և «Նպատակ 13. Վարչական արդարադատություն և վարչական վարույթ»: Նպատակ 12-ի ներքո ներկայացված են 6 գործողություններ, որոնցից 3-ը նախատեսվում է ավարտվել մինչ 2021 թվականը (Հավելված 2-ով նախատեսված գործողություններ), իսկ մյուս 3-ը՝ մինչ 2022 թվականը (Հավելված 3-ով նախատեսված գործողություններ): Այս գործողություններից և ոչ մեկը չեն կատարվել:

Վարչական արդարադատություն և վարչական վարույթ: Կատարողական ցուցանիշ՝ 27%

- Նպատակ 13-ով նախատեսված են 11 գործողություններ, որոնցից 10-ը նախատեսվում է ավարտվել մինչ 2021 թվականը (Հավելված 2-ով նախատեսված գործողություններ), իսկ 1-ը՝ 2021 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում (Հավելված 3-ով նախատեսված գործողություն): Ժամկետում կատավել է 2 գործողություն, իսկ մեկ գործողություն կատարվել է ժամկետի որոշակի խախտմամբ: Մասնավորապես, մշակվել են «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը, Վարչական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխությունները կատարվել են, ներդրվել են գրավոր և պարզեցված նոր վարույթներ, և կատարվել են փոփոխություններ «Պետական տուրքի մասին» օրենքում:

ՈԼՈՐՏ 8: ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Կատարողական ցուցանիշ՝ 38%

- «Արդարադատության օժանդակմանն ուղղված համակարգեր» ոլորտի ներքո ներկայացված են 5 նպատակ, որոնք վերաբերում են սնանկության, վեճերի լուծման այլընտրանքային եղանակներին, նոտարական, փաստաբանական և հարկադիր կատարման համակարգերին: Այս ոլորտներից կատարողանակի առումով առաջընթաց է գրանցվել միայն սնանկության համակարգում, իսկ մյուս չորս ոլորտներում գործողությունները (նախանշված ժամկետներում) չեն կատարվել: Ստորև ներկայացված են արդարադատության օժանդակմանն ուղղված համակարգերի ներքո նախատեսված գործողությունների կատարողականի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն՝

Սնանկության համակարգ: **Կատարողական ցուցանիշ՝ 100%**

- Սնանկության համակարգում նախատեսված է ընդհանուր թվով 9 գործողություն, որից 6-ը՝ Հավելված 2-ով, 3-ը՝ Հավելված 3-ով: Ընդհանուր թվով 7 գործողություն իրականացվել է ժամետում, 2-ը՝ ժամկետի որոշակի խախտմամբ: Այնուամենայնիվ, նախատեսված բոլոր գործողությունները, համաձայն այս Զեկույցի մեթոդաբանության, իրականացված են (գործողություններից 1-ը գնահատվել է կատարված վերապահումով): Մասնավորապես, ընդունվել է սնանկության կառավարիչների որակավորման իրականացման կարգ սահմանող նախարարի նորմատիվ իրավական ակտը, «Սնանկության մասին» օրենքի մասին ձեռնարկը գտնվում է հրապարակման փուլում, բարելավվել են սնանկության կառավարիչների վերապատրաստման ծրագրերը, «Սնանկության մասին» օրենքում կատարվել են փոփոխություններ՝ ուղղված գույքի հայտարարագրման ձևանմուշներ մշակելու և գույքագրման ու գնահատման գործընթացի նկատմամբ վերահսկողական մեխանիզմների ներդրմանը, մշակվել է սնանկության վարույթում գույքի վաճառքի իրականացման կարգը սահմանող Կառավարության որոշման նախագիծը, մշակվել են սնանկության դատավորների վերապատրաստման ծրագրերը և իրականացվում են դասընթացներ:
- *Սույն ռազմավարական նպատակի ներքո ընդունված իրավական ակտերի որակական գնահատում չի կատարվել:*

Վեճերի լուծման այլընտրանքային եղանակներ: **Կատարողական ցուցանիշ՝ 0%**

- Այս ոլորտի ներքո նախատեսված են 4 գործողություն՝ 2-ը Հավելված 2-ով, 2-ը՝ Հավելված 3-ով: Նախատեսված 4 գործողություններից և ոչ մեկը ժամկետում չի կատարվել: Մասնավորապես՝ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծը մշակված չէ, արբիտրաժի ինստիտուցիոնալ կառույցի ստեղծման ուղղությունները, ֆինանսավորման աղբյուրները հստակ չեն, ներգրավված չեն համապատասխան մասնագետները, իսկ վեճերի այլընտրանքային լուծումներ վերաբերյալ հանրային իրազեկումների ծրագրի, իրականացման-պլան ժամանակացույցի, կրթական ծրագրերի մշակումն ավատրված չէ:

Նոտարական համակարգ: **Կատարողական ցուցանիշ՝ 0%:**

- Նոտարական համակարգը թերևս Արդարադատության օժանդակմանն ուղղված համակարգերում կատարողականի ամենացածր ցուցանիշ ունեցող ոլորտն է, ինչը ցույց է տալիս, որ այս ոլորտում չեն արձանագրվել նշանակալի ձեռքբերումներ և առաջընթաց: Նոտարական համակարգի ոլորտում նախատեսված է 2021 թվականի առաջին կիսամյակում իրականացման ենթակա 3 գործողություն, որոնցից և ոչ մեկը չի կատարվել ժամկետում: «Նոտարիատի մասին» օրենքում և այլ օրենսդրական ակտերում կատարել փոփոխությունները մշակվել են, սակայն սահմանված կարգով չեն շրջանառվել և չեն ուղարկվել ՀՀ վարչապետի աշխատակազմ: «Նոտարիատի մասին» օրենքում փոփոխությունների կատարման ժամկետները՝ ուղղված նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի բարելավմանը և այլ հարցերին վերանայվել են՝ Կառավարության 2021-2026թթ ծրագրին համապատասխան: Այսպիսով, այս ոլորտում նույնպես նշանակալի ձեռքբերումներ առկա չեն:

Փաստաբանական համակարգ: **Կատարողական ցուցանիշ՝ 33%:**

- 2020 թվականի համար նախատեսված 6 գործողություններից կատարվել է միայն երկուսը: ՀՀ «Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխությունները կատարված չեն: Ընդունվել է փաստաբանի վարքագծի կանոնների բարելավման նախագիծը: Փաստաբանական ոլորտի բարեփոխումների շրջանակներում երկու տարվա ընթացքում մշակվել է հայեցակարգ, որը, այնուամենայնիվ, համաձայն քննարկումների մասնակից փաստաբանների բավականաչափ մասնակցային չի եղել:

Առաջարկություն՝ Հաշվի առնելով, որ Գործողությունների ծրագրով Փաստաբանական համակարգում ձեռբերումները շատ փոքր են՝ Ռազմավարության գործողությունների ծրագրերի վերանայման գործընթացում այս ոլորտին անհրաժեշտ է հատկացնել առավել մեծ ուշադրություն՝ սահմանված գործողությունների շրջանակը և ժամանակացույցը քննակելով բոլոր շահագրիռ կողմերի՝ այդ թվում փաստաբանների հետ:

Հարկադիր կատարման համակարգ: Կատարողական ցուցանիշ՝ 0%

- Հարկադիր կատարման ոլորտում նախատեսված 2 գործողություններից 1-ը ժամկետում չեն կատարվել, իսկ մյուսի մասին տեղեկատվություն տրամադրված չէ: Մասնավորապես, մշակվել է «Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագիծը, սակայն այն դեռևս սահմանված կարգով չի շրջանառվել և չի ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Իսկ հարկադիր կատարումն ապահովող ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավման վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- Ինչպես ցույց են տալիս շահագրգիռ մարմինների հետ ֆոկուս խմբային քննարկումները, որոշ դեպքերում տարբեր պետական մարմինների միջև համագործակցությունը և փոխգործակցությունը կարող է խնդրահարույց լինել, ինչը կարող է պայմանավորված լինել գործողության իրականացման համար պատասխանատու և համակատարող մարմինների միջև աշխատանքի և պատասխանատվությունների ոչ հստակ բաժանմամբ:
  Առաջարկություն՝ Վերանայված գործողությունների ծրագրերում հստակեցնել գործողությունների իրականացման համար պատասխանատու և համակարգող մարմինների միջև աշխատանքի և պատասխանատվությունների բաժանումը:
- Թեև ընդհանուր առմամբ գործողությունների ծրագրերով նախատեսված վերապատրաստումները նախանշված ծավալներով և ժամկետներում իրականացվում են, սակայն գործողությունների ծրագրերով այս վերապատրաստումների արդյունավետության և մասնակիցների բավարարվածության գնահատումներ չեն նախատեսվում, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել վերապատրաստումներ ենթադրող գործողությունների արդյունքային ցուցանիշերը:
  Առաջարկություն՝ Այն գործողություններում, որոնցում նախատեսվում է վերապատրաստումների իրականացում, ներդնել վերապատրաստման մասնակիցների հետ հետադարձ կապի պահպանման և դասընթացների արդյունավետության գնահատման ֆորմալ մեխանիզմներ, ինչպես օրինակ նախա- և հետ-հարցումներն/գնահատումներն են, առաջարկությունների, կարծիքների համակարգված հավաքագրումը, դասընթացների առցանց գնահատումը և այլն: Արդյունավետության գնահատման այնպիսի ցուցանիշներ, ինչպես օրինակ վերապատրաստումներից մասնակիցների բավարարվածությունն է, ներառել մոնիթորինգային զեկույցներում՝ որպես ստուգիչ ցուցիչներ:
- Ռազմավարական ծրագրերի էական թերակատարումները պետք է հանգեցնեն պատասխանատու մարմինների համար որոշակի հետևանքների և վերջիններիս գործողությունների կամ անգործության հանրային գնահատականների: ԱՆ կողմից պետք է ներդրվեն ռազմավարությամբ նախատեսված գործողությունների ծրագրերի կատարողականի բարձրացմանն ուղղված գործուն մեխանիզմներ և մշտադիտարկման ու գնահատման իրական արդյունքները արտացոլող գործիքակազմեր:
- Ընդհանուր առմամբ գործողությունների հիմնական մասը կատարվել է ժամկետների էական խախտմամբ կամ ընդհանրապես չի կատարվել: Որպես գործողությունների՝ սահմանված ժամկետներում չկատարման հիմնավորում պատասխանատու մարմինների կողմից ներկայացվում է 2020 թվականի մարտ ամսից Հայաստանում համավարակային իրավիճակը և Արցախյան երկրորդ պատերազմի հանգամանքը: Այս դեպքում, պատերազմական իրավիճակը համարվում է ֆորս-մաժորային իրավիճակ, որի պարագայում գործողությունների հետաձգումը հիմնավորված է, իսկ համավարակի պայմաններում պետական գերատեսչությունների աշխատանքները չեն ընդհատվել և շարունակվել են հեռավար եղանակով, հետևաբար, համավարակի՝ որպես հիմնավորված պատճառաբանության ներկայացումը պատասխանատու մարմինների կողմից խնդրահարույց է[24]:

[24] Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ պատերազմի ժամանակահատվածը հաշվի է առնված գործողությունների գնահատման մեթոդաբանությունում: Մասնավորապես, գործողությունը գնահատվում է «կատարվել է ժամկետում», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են դարձել վկայող փաստեր (անգլերեն՝ evidence) առ այն, որ գործողությունը կատարվել է ռազմավարության գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում կամ այդ ժամկետից առավելագույնը մեկ ամիս

- Ռազմավարության շրջանակներում բացակայում է հանրային քննարկումներին մասնակիցների կազմը, մասնավորապես՝ թե ո՞ր հասարակական կամ քաղաքական կազմակերպության հետ են նախատեսում կատարել հանրային քննարկում: Սրանով պայմանավորված ձևավորվել է հանրային պահանջ՝ Ռազմավարությամբ կա՛մ դրանից բխող շահագրգիռ կողմերին ներգրավելու նպատակով մշակած պլանով ներկայացնել հանրային քննարկումների կազմակերպման գործընթացները, հանրային քննարկումների մասնակիցների հնարավոր կազմը, նրանց ներկայացրած առաջարկների վերաբերյալ հետադարձը կապը (յուրաքանչյուր դեպքում նշելով առաջարկի ընդունման կամ մերժման հիմնավորումները), ժամանակացույցը և այլն:

3. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- Ռազմավարության գործողությունների ծրագրերում առկա են տեխնիկական թերություններ, ինչպես օրինակ՝ Նպատակ 10-ի ներքո նախատեսված է «Գործողություն 3. Ապահովել դատախազների ընտրության մրցույթի թափանցիկությունը» (Հավելված 2), սակայն ստորև այս գործողության մասին աղյուսակային տվյալները բացակայում են:
- Ընդհանուր առմամբ գործողությունների պլանները (հատկապես Հավելված 2-ով նապատեսված) բավականին ծավալուն են և կառուցվածքային առումով դժվարամատչելի՝ նմանատիպ կամ հարակից գործողությունների որոշակի կրկնություններով, ինչը կարող է բարդություն ստեղծել գործողությունների պլանների իրականացման ժամանակ: Նոր գործողությունների պլաններ մշակելիս առաջարկվում է հնարավորինս պարզեցնել այդ պլանների կառուցվածքը՝ բացառելով գործողությունների կրկնողությունները:
- Անհրաժեշտ է պահպանել գործողությունների իրականացման ժամանակահատվածների տրամաբանական հաջորդականությունը: Օրինակ՝ Հավելված 3-ով նախատեսված է «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում», որի կատարման համար սահմանվել են երկու ժամանակահատվածներ. 2021 թվականի 1-ին կիսամյակում նախատեսվում է՝ «Սահմանել տեխնիկական աջակցության առաջնահերթությունները և հաստատել աջակցության տրամադրման ժամանակացույցը, մշակել և հաստատել համապատասխան տեխնիկական առաջադրանքները», իսկ բուն գործողության իրականացումը՝ տեխնիկական աջակցության տրամադրումը նախատեսվում է իրականացնել 2023 թվականի երկրորդ կիսամյակի ընթացում: Այստեղ հարց է առաջանում, թե ինչով է պայմանավորված այս հաջորդական իրականացում ենթադրող երկու ենթագործողութունների միջև ավելի քան երկու տարվա ժամանակային ընդմիջումը: Մյուս կողմից՝ որքանով է իրատեսական ակնկալել, որ 2021 թվականի 1-ին կիսամյակում իրականացված առաջնահերթությունների գնահատումը և մշակված տեխնիկական առաջադրանքները արդիական կլինեն 2023 թվականի երկրորդ կիսամյակի համար:
- Որոշ գործողությունների նկարագրության և տարբեր ժամանակահատվածների համար իրականացման ենթակա աշխատանքների նկարագրության տեքստերում առկա են անհամապատասխանություններ: Օրինակ, Նպատակ 4-ի ներքո եթե գործողության նկարագրությամբ և վերստուգիչ ցուցանիշով նախատեսվում է «ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների փաթեթի մշակում և ներկայացում ԱԺ», ապա 2020 թվականին իրականացման ենթակա գործողության նկարագրությամբ նախատեսվում է միայն «հաստատվում ՀՀ կառավարության կողմից»:
- Գործողությունների պլաններում ելակետային իրավիճակների նկարագրությունը շատ հաճախ չի հիմնվում փաստահեն տվյալների վրա և շատ ընդհանրական է՝ նպաստելով դատական իշխանության վերաբերյալ բացասական կարծիքի շարունակական ձևավորման: Օրինակ՝ «Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում» վերտառությամբ 5-րդ նպատակի 9-րդ գործողության մեջ նշվում է, որ «տարբեր հետազոտություններից և

ժամկետի խախտմամբ: Այսպիսով, մեկ ամիս տևողությամբ գործողությունների կատարման ուշացումը թույլատրվել է՝ հաշվի առնելով, որ Գործողությունների ծրագրի իրականացումն ընդգրկում է 2020 թվականը, որի ընթացքում պատերազմը եղել է գործողությունների իրականացման համար խոչընդոտող գործոն:

հասարակական կարծիքի վերլուծություններից անժխտելի է, որ հանրությունը տասնամյակներ շարունակ ձևավորված խորը անվստահություն է տածում դատական համակարգի նկատմամբ: Առկա է անհրաժեշտություն հանրությանն իրազեկելու դատական բարեփոխումների ընթացքի, դրանց արդյունքում դատարանների գործունեության բարելավման, արդարադատության մատչելիության բարձրացման, դատարանի անկախության երաշխիքների գործնական կիրառման մասին:» Այսպիսի դատողությունների հիմքում առկա չէ ապացուցողական բազա և հղում է կատարված հանրային կարծիքին՝ առանց կոնկրետ հետազոտությունների հղման:

- ԱՆ կողմից հրապարակվող մոնիթորինգային զեկույցներն ունեն նշանակալի բարելավումների կարիք: Օրինակ, անհրաժեշտ է արձանագրել, որ ««Հայաստանի Հանրապետության Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշմամբ հաստատված էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման և արդիականացման գործողությունների ծրագրերի կատարման վերաբերյալ» մոնիթորինգային զեկույցը համապարփակ կերպով չի անդրադառնում բոլոր գործողությունների իրականացման ընթացքին: Մյուս կողմից, գործողությունների կատարողականի գնահատման համակարգը հստակ չէ: Օրինակ՝ Նպատակ 2-ի ներքո «Էլեկտրոնային նոտարական e-notary համակարգի զարգացում» գործողության վերաբերյալ մեկնաբանության դաշտում միայն նշված է, որ «e-notary համակարգի ծրագրային ապահովման զարգացման աշխատանքները գտնվում են ընթացքի մեջ» և գործողությունը գնահատված է «կատարված է մասնակի»: Այս մեկնաբանությունն ըստ էության չի ներկայացնում թե ինչպիսի աշխատանքներ են կատարվել մինչ այժմ և թե ինչպիսի արդյունքների հիման վրա է գործողությունը գնահատվել «մասնակի կատարված»: Մյուս դեպքերում, գործողությունը գնահատված է «մասնակի կատարված», այն պարագայում, որ գործողության արդյունքին հասնելու տեսանկյունից առկա չեն էական ձեռքբերումներ: Օրինակ, Նպատակ 2-ի ներքո նախատեսվում է «Նոտարի կողմից Էլեկտրոնային եղանակով վավերացման ենթակա էլեկտրոնային պայմանագրերի և փաստաթղթերի փոխանակման համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգի ներդրում» և համաձայն ԱՆ զեկույցի՝ մշակվել և Վարչապետի աշխատակազմ է նեկայացվել էլեկտրոնային եղանակով կնքված գործարքների վավերացման, անհրաժեշտ փաստաթղթերի փոխանակման էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքը: Այստեղ հարց է առաջանում, թե որքանով է հիմնավորված «էլեկտրոնային համակարգի ներդրում» ենթադրող գործողության իրականացումը գնահատել «մասնակի կատարված», այն դեպքում երբ միայն մշակվել է այդ համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքը (առանց հաստատման): Այսպիսի չհիմնավորված գնահատումները կարող են Ռազմավարության գործողությունների ծրագրի կատարողականի վերաբերյալ սխալ պատկերացում տալ որոշում կայացնող և իրականացնող մարմիններին, ինչպես նաև՝ հանրությանը:
- Մոնիթորինգային զեկույցներում ներկայացված մեկնաբանություններում առկա չեն նաև իրականացման ժամկետների վերաբերյալ տվյալներ, ինչը պատկերացում չի տալիս, թե որ աշխատանքը որ ժամանակահատվածում է իրականացվել:
- Մոնիթորինգային զեկույցներում ներկայացված է ոչ ամբողջական տեղեկատվություն այն դեպքերում, երբ գործողությունն իր մեջ պարունակում է մի քանի բաղադրիչներ: Օրինակ, Նպատակ 14-ի ներքո որպես գործողություն նախատեսվում է «մշակել ֆինանսական առողջացման ծրագրի ձևանմուշներ, կազմակերպել սնանկության կառավարիչների, դատավորների և շահագրգիռ անձանց համար համապատասխան դասընթացներ»: ԱՆ կողմից հրապարակված մոնիթորինգային զեկույցում ներկայացված է տեղեկատվություն սնանկության կառավարիչների, դատավորների և շահագրգիռ անձանց համար համապատասխան դասընթացների մասին, սակայն չի տրամադրվում տեղեկատվություն ֆինանսական առողջացման ծրագրի ձևանմուշների մշակման վերաբերյալ: Այս դեպքում ենթադրելի է, որ մոնիթորինգային մասնագետի կողմից գործողության գնահատումն իրականացվել է թերի տեղեկատվության հիման վրա:

Առաջարկություն՝ Վերանայել ««Հայաստանի Հանրապետության Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ

որոշմամբ հաստատված էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման և արդիականացման գործողությունների ծրագրերի կատարման վերաբերյալ» մոնիթորինգային զեկույցը և մյուս մոնիթորինգային զեկույցները՝ դրանք դարձնելով 1) իրականացման նկատմամբ զգայուն՝ ավելացնելով տեղեկատվություն իրականացված աշխատանքների ժամկետների վերաբերյալ, 2) կիրառել գործողությունների կատարողականների գնահատման հիմնավորված մեթոդաբանություն, 3) գործողությունների իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը դարձնել առավել մանրամասն և բովանդակային:

Առաջարկություն՝ Անհրաժեշտություն կա բարելավել և հստակեցնել Ռազմավարությամբ նախատեսված գործողությունների ծրագրերի մշտադիտարկման և գնահատման համար Արդարադատության նախարարության կողմից կիրառվող մեթոդաբանությունը, ինչպես նաև այս ոլորտում զարգացնել նախարարության կարողությունները:

4. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

1. Փոփոխել Ընտրական օրենսգիրքը և ապահովել կայուն խորհրդարանական մեծամասնության սկզբունքի իրագործումը:

2. Փոփոխել Ընտրական և Վարչական դատավարության օրենսգրքերը և գործնականում ապահովել, որ Վարչական դատարանը ՏԻՄ ոլորտի ընտրական վեճերը լուծի բացառապես յոթնօրյա ժամկետում:

3. Փոփոխել Ընտրական օրենսգիրքը և ապահովել քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումների վերաբերյալ սահմանադրական պահանջի իրականացումը:

4. Վերանայել Դատավորների ընդհանուր ժողովի երեք հանձնաժողովներում (Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, Գնահատման հարցերի հանձնաժողով, Ուսումնական հարցերի հանձնաժողով) ոչ դատավոր անդամների ներկայացվածությունը՝ այն դիտարկելով ՀՀ սահմանադրության համապատասխանության տիրույթում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, Դատավորների ընդհանուր ժողովը դատավորների ինքնակառավարման մարմին է, հետևաբար՝ դրա կազմում դատավորներից բացի՝ ոչ դատավոր անձանց մասնակցությունը հակասում է ինքնակառավարման էությանը:

5. Վերանայել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը մերժելու մասին Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի որոշման պահանջները և սահմանել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման պատճառաբանվածության պարտադիր պահանջ:

6. Վերանայել Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը կամ ընդունել նոր Ռազմավարություն և սահմանել ռազմավարական նպատակ ուղղված «ուղեղների արտահոսք» ծրագրի ներդրմանը՝ հնարավորություն տալով բարձրաստիճան պաշտոններում նաև սփյուռքի մեր հայրենակիցներին ծավալել մասնագիտական գործունեություն՝ փորձի փոխանակման շրջանակներում: Այս ծրագրի և առաջարկի նպատակն է՝ փոխհատուցել «ուղեղներ»-ի կարճաժամկետ վերադարձը հայրենիք՝ համապատասխան բնագավառներում իրենց գիտելիքների, փորձի տրամադրումը ապահովելու համար:

7. Վերացնել որակավորման գրավոր քննության արդյունքներն ստուգող հանձնաժողովներում և որակավորման գրավոր քննության արդյունքների բողոքարկման հանձնաժողովում իրավաբան գիտնականներին՝ ՀՀ արդարադատության նախարարի կողմից առաջադրելու հայեցողական իրավունքը և թեկնածուների առաջադրումը կատարել մրցութային կարգով:

8. Վերանայել և հստակեցնել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը՝ բացառելով անորոշությունը և այդ հիմքերը հայեցողական մեկնաբանելու հնարավորությունը:

9. Վերանայել բարեվարքության ստուգման վերաբերյալ ԿԿՀ-ի խորհրդատվական եզրակացությունների մատչելիությունը, այն դարձնել բաց և հասանելի հանրության համար՝ ապահովելով օրենքով նախատեսված անձնական տվյալների գաղտնիությունը՝ հանրամատչելի անձնական տվյալների հաշվառմամբ:

10. Քրեական ենթամշակույթի տարածման մակարդակը նվազեցնելու նպատակով իրականացնել համալիր միջոցառումներ, որոնք չեն սահմանափակվի զուտ օրենսդրական ակտերի մշակմամբ: Անհրաժեշտ է կրթական/ուսուցողական միջոցառումների ձեռնարկում՝ համակցված կանխարգելիչ միջոցառումների հետ: Այս առումով կարևոր է ոչ միայն քրեակատարողական հիմնարկների ներսում, այլ նաև դրանցից դուրս համապատասխան իրազեկման աշխատանքների իրականացումը, որոնք կնպաստեն այս թեմայով իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Ընդ որում, որպես թիրախային ոլորտ անհրաժեշտ է ընդգրկել 14-21 տարեկան անձանց, ովքեր պայմանավորված կրիմինոլոգիական հետազոտությունների արդյունքներով, առավել մեծ հակվածություն կարող են ունենալ կրելու քրեական ենթամշակույթի ազդեցությունը: Միաժամանակ, պետք է նախաձեռնել նաև կանխարգելիչ հստակ միջոցառումներ, որոնք էապես կուժեղացնեն վերահսկողությունը քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դրսևորման դեպքերը բացահայտելու և դրա հետագա տարածումը կանխարգելելու ուղղությամբ:

11. Քրեական գործերով իրավական փոխօգնության արդյունավետ կարգավորման նպատակով ընդունել նորմատիվ իրավական նոր ակտ, որը համապարփակ ձևով կկարգավորի քրեական գործերով միջազգային իրավական օգնություն Հայաստանի Հանրապետության կողմից հայցելու և այլ պետությունների կողմից հայցված օգնության խնդրանքները կատարելու ներպետական ընթացակարգերը: Այս առումով անհրաժեշտ է իրականացնել վերջին ավելի քան քսան տարիների ընթացքում արձանագրված խնդիրների հավաքագրում՝ նկատի ունենալով, որ գործող քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան գլուխները, որոնք ներկայումս կարգավորում են խնդրո առարկա իրավահարաբերությունները, գրեթե զարգացում չեն ապրել, արմատական փոփոխությունների չեն ենթարկվել: Միայն այդ պայմաններում քրեական գործերով իրավական փոխօգնության կարգավորումը կլինի արդյունավետ:

5. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Նախատեսված գործողությունների թիվ	**103**	**100%**
որից ժամկետում կատարված՝	33	32%
որից կատարված ժամկետի որոշակի խախտմամբ՝	7	6%
որից կատարված ժամկետի էական խախտմամբ՝	2	2%
որից կատարված չէ՝	58	56%
որից առկա չէ տեղեկատվություն գործողության մասին՝	4	4%

- Ընդհանուր առմամբ,Ռազմավարությունից բխող գործողությունների պլաններով հաշվարկվել են **103 գործողություն և ենթագործողություն**, **որից ժամկետում կատարվել է միայն 32%**-ը: Գործողությունների կեսից ավելին՝ **56%-ը չի կատարվել**, իսկ շուրջ **10%-ը կատարվել է ժամկետի որոշակի կամ էական խախտմամբ:** Գործողությունների մի մասի իրավական վերլուծությունը, ինչպես նաև գործողությունների թերակատարումը թույլ է տալիս եզրակացնել, որ Ռազմավարությամբ սահմանված նպատակները չեն իրականացել, մասնավորապես չի ամրապնդվել դատական իշխանության անկախությունը և անաչառությունը, էականորեն չեն բարելավել դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերը, իսկ օրենսդրական բարեփոխումները չեն իրականացվել նախատեսված ծավալներով և բովանդակությամբ:
- Ավելին, Ռազմավարության գործողությունների քանակական գնահատման արդյունքում 50 տոկոս և ավելի կատարողական ցուցանիշ ունեցող նպատակներից առանձնացված ու իրավական վերլուծության ենթարկված հետևյալ՝ «4. Ընտրական օրենսդրություն», «5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում», «5,6,7. Դատական իշխանության

անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում, կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ», «11. Քրեական և քրեական դատավարության օրենսդրության բարեփոխումներ» նպատակների ներքո գրանցած ազդեցության մակարդակի արդյունքները և ռազմավարական ուղղությունների ներքո իրականացված գործողությունները, սույն ռազմավարական նպատակների և ռազմավարական ուղղությունների համապատասխանության և լրիվության տեսանկյունից, գնահատվել են «**Չեն համապատասխանում և ամբողջական չեն»:**

- Նկատի ունենալով Ռազմավարության և դրանից բխող գործողությունների կատարողականի բավականին ցածր ցուցանիշները և առանձնացված ու իրավական վերլուծության ենթարկված ռազմավարական նպատակների և ռազմավարական ուղղությունների ներքո գրանցած ազդեցության մակարդակի արդյունքների ու իրականացված գործողությունների ոչ համապատասխան և ոչ ամողջական լինելը, ինչպես նաև հիմնվելով 2022 թվականի հունվարի 24-ից փետրվար 1-ը կայացած 12 ՖԽՔ-ների ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության, այլ իրավասու մարմինների ու կազմակերպությունների, մասնագիտական և փորձագիտական հանրույթի հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածությունները՝ առաջարկում ենք մշակել հիմնովին նոր Դատական և իրավական բարեփոխումների հնգամյա ռազմավարություն՝ հիմք ընդունելով սույն զեկույցում բարձրացված դիտարկումները, հատկորոշած բացթողումները և առաջարկությունները, այդ թվում չկատարված գործողություններին ուղղված վերանայման առաջարկները՝ ապահովելով գործընթացի բարձր մասնակցայնություն՝ ոլորտի բոլոր դերակատարների ներգրավվմամբ: